Մեր ստրատեգիական փոխընկերությունը զգալի դեր է խաղում նոր մարտակոչերին ու սպառնալիքներին հակամարտելու գործում

Անմիջական մարդկային շփումները և հոգեպես, և անհարապես հարստացնում են մեր քաղաքացիներին Դրանք ուղղակիորեն նոր սրտեղծագործական ուժեր են հաղորդում նրանց, փոխադարձ զարգացնում են ժողովուրդների մշակույթը, բարձրացնում են քաղաքացիների և մեր պետությունների արժանավորությունը

Վլադիմիր Պուտին
Ռուսաստանի Դաշնության
նախագահ

Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ն Ե Ր Ի Ն

«Հայաստան, Հայաստան » գիրքը անկասկած առաջացնում է ընթերցողների հետաքրքրությունը և իր վերնագրով, և, առավել ևս, բովանդակությամբ Այո, հարգելի ընթերցող, Կիևյան Ռուսիայի ժամանակներից աշխարհում չեն եղել այդքան սերտ ու վստահելի նվիրվածության, սիրո ու բարեկամության, համագործակցության նման պատմական օրինակներ

Մենք՝ ռուսաստանցիներս, այնքան ենք հարազատացել հայ ժողովրդի հետ, այնպես ենք վարժվել ազգամիջյան շփման պարզությանն ու առօրեականությանը, որ երբեմն միշտ չէ որ նշանակություն ենք տալիս մեր նախնիներից մեզ հասած անանց արժեքներին, առավել ևս՝ նրանց պատվիրաններին հետևելու անհրաժեշտությանը՝ Գրքի բովանդակությունը կօգնի մեզ հիշեցնել նրանց մասին, հայ ժողովրդի ներկայացուցիչների հետ բարեկամությունն ու համագործակցությունը դարձնել ավելի սերտ ու բեղմնավոր

Մեծ է հայ ժողովրդի պատմությունը, որի առաջին պետական կազմավորումները վերաբերում են մեր թվարկությունից առաջ 2-րդ հազարամյակին. Դա համաշխարհային քաղաքակրթության ստեղծման գործում նրա ներդրումների փառապանծ պատմությունն է, սակայն միաժամանակ լի է դրամատիզմով ու ազգային ոգու անօրինակ կայունությամբ

Ավելի քան հազար տարի՝ հայ ժողովրդի պատմությունը զարմանալի կերպով ավելի ու ավելի սերտորեն համաձուլվել է մեր՝ ռուսական պատմության հետ, որի ակունքներում են եղել մեծն իշխանուհի Օլգան ու նրա թոռը Կիևի իշխան Վլադիմիր -մկրտիչը, որի կինը արքայադուստր Աննան էր, ծնունդով՝ հայ թագավորական ընտանիքից

Դեռ հնուց ի վեր, շնայած մեծ տարածություններին, լեռնային, միջպետական, միջկրոնական և այլ խոչընդոտներին, բարեկամություն էին անում ոչ միայն մարդիկ բարեկամություն էր ստեղծվում քրիստոնեական երկու քույր-եկեղեցիների միջև, որն առանձնահատուկ ուժով հաստատվել է մեր օրերում Առևտրական Նովգորոդում, 12-րդ դարում, գլխավոր սրբությունը համարվում էր Գրիգոր Լուսավորիչը - Ռուսաստանում այդպես էին կոչում «Մեծ Հայքի եպիսկոպոս, Սուրբ Գրիգորին», որի օրոք՝ 4-րդ դարի սկզբներին Հայաստանը աշխարհի առաջին երկիրն էր, որ ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն Դարերի ընթացքում մեզ են հասել հնագույն գրքերի ու ձեռագրերի բազմաթիվ թարգմանություններ ռուսերենից հայերեն և հայերենից ռուսերեն

2005 թվականին լրացավ հայ գրերի ստեղծման 1600 տարին

Ռուսիայում հայերը միշտ եղել են ամենացանկալի օտարերկրացի հյուրերը, ստեղծագործողները, գիտնականները, պետական այրերը, գործարար մարդիկ՝ Հայերի բերած օգուտը Ռուսաստանին այնքան մեծ էր ու ակնհայտ, որ, Պետրոս Առաջինի ժամանակներից սկսած, հրամանագրերով ու շնորհագրերով Ռուսաստանում հայերը ապահովվում էին կյանքի ու գործունեության համար անհրաժեշտ բարենպաստ պայմաններով Հայ-ռուսական զինական-եղբայրությունն ամրապնդվել է ընդհանուր թշնամիների դեմ վարած բազում պատերազմներում

Բազմաթիվ հայ սերունդների համար Ռուսաստանը պատմականորեն վերածվել է մի երկրի, որտեղ նրանք միշտ հանգրվան են ստացել արհավիրքների դեպքում կոտորածների, հալածանքների ու սպանությունների ժամանակ Այդպես էր նաև թուրքական բազմամյա ցեղասպանության տարիներին, հատկապես 1915-1921 թվականներին, երբ Ռուսաստանը իր դռները բացեց հազարավոր հայ գաղթականների առաջ Ռուսաստանի սփյուռքահա-

յության կյանքն ու գործունեությունը միշտ հազեցված է ստեղծարար աշխատանքով, հոգևոր ու մշակութային արժեքների բազմապատկմամբ՝ ի բարօրություն Ռուսաստանի


Գիրքը բովանդակում է բազմաթիվ հետաքրքիր օրինակներ ու վկայություններ այն մասին, որ բարեկամության, հոգևոր հարստության, մարտունակության ու ստեղծարարության բազմադարյան հանգույցներով կապված մեր ժողովուրդները բոլոր ժամանակներում եղել ու մնում են հավատարիմ մեկ-մեկու, ինչքան էլ դժվարին լինեն այդ ժամանակները

Ահա արդեն 15 տարի է Հայաստանը նորից ձեռք է բերել իր պետականությունը, իսկ հայ ժողովուրդը ստացել է լիակատար անկախություն Հայաստանի և Ռուսաստանի միջև զարգանում է ստրատեգիական համագործակցությունը 2005 թվականը Հայաստանում Ռուսաստանի տարին էր, իսկ 2006-ը նշվեց որպես Ռուսաստանում Հայաստանի տարին

Հայաստանի հետ բարեկամության ու համագործակցության Ռուսաստանյան ընկերությունը սույն գիրքը հրատարակում է հույսով, որ նրա յուրաքանչյուր ընթերցող ոչ միայն իր համար կբացի նոր հետաքրքիր փաստեր հնադարյան Հայաստանի ու նրա ժողովրդի մասին, ժամանակի ու սերտության առումով հայնուսական աննախադեպ հարաբերությունների մասին, այլև կաջակցի մեր ժողովուրդների առավել մերձեցմանը, նրանց փոխադարձ համագործակցությանը՝ հանուն խաղաղության, բարության ամրապնդման, մարդասիրության ու բարեկեցության հաստատման

Վիկտոր Կրիվոպուսկով

Հայաստանի հետ բարեկամության և
համագործակցության Ռուսաստանյան
ընկերության նախագահ



ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**Պատմում է երկրագնդի քարտեզի վրա Հայաստանի տեղի, բնության առանձնահատկությունների, եղանակի և բացառիկ աշխարհագրական խորհրդանիշերի մասին:
Ընդամենը 10 հարց ու պատասխան**

Հայաստանը ունի՞, արդյոք, իր ինքնանունը

Այո: Եվ կոչվում է Հայաստանի Հանրապետություն.

*Որտեղ գտնել Հայաստանը աշխարհի քարտեզի վրա
և այն ինչ տարածք ունի*

Հայաստան երկիրը գտնվում է Կովկասյան Մեծ լեռնաշղթայից հարավ, Սև ու Կասպից ծովերի միջև, ընդգրկելով Քուռի և Արաքսի միջագետքը: Արևելքում սահմանակից է Ադրբեջանին, հյուսիսում՝ Վրաստանին, արևմուտքում՝ Թուրքիային, հարավ-արևմուտքում՝ Ադրբեջանի կազմի մեջ մտնող Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը, հարավում՝ Իրանին.

Սահմանների երկարությունը 1431 կմ է, տարածքը՝ 29 740 կմ Հյուսիս-արևմուտքից մինչև հարավ-արևելք սահմանային երկարությունը 360 կմ է, արևմուտքից արևելք՝ 200 կմ.

*Ինչպիսին են մակերևույթի կազմության
առանձնահատկությունները*

Հայաստանը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյու-

սիս-արևելքում, որը Առաջավոր Ասիայի լեռնային մարզերից մեկն է. Տարածված է Փոքրասիական ու Իրանական սարահարթերի միջև, որոնցից բարձր է 500 մետր, ընդհանուր տարածքով ներկայացնում է 300 հազար քառ. կմ. Ընդհանուր տարածությամբ ասես թե մի «լեռնային կղզի» է

Ծովի մակարդակից բարձրությունը 1800 մետր է, բարձրագույն կետը քառագլուխ Արագածն է /4090մ/ Լեռնաշղթաների միջև տարածված են համապարփակ սարահարթեր, արգավանդ հովիտներ ու հարթավայրեր Առավել հայտնի է Արարատյան հարթավայրը՝ հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի հնագույն կենտրոնը

Ինչպիսին են Հայաստանի քաղաքական-աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները

Երկիրը ելք չունի դեպի ծով և շատիվ կախված է արտասահմանյան հաղորդակցության փոխադրամիջոցներից Ադրբեջանա-դարաբադյան հակամարտության արդյունքը եղավ Հայաստանի շրջափակումը Ադրբեջանի և Թուրքիայի կողմից: Իրանի տարածքով դժվար են փոխադրումները, քանի որ տեղանքի մակերևույթը բարդ է և հաղորդակցության ճանապարհները անբավարար են զարգացած Վրաստանի և Աբխազիայի հակամարտության պատճառով դադարել են աշխատել երկաթուղային տարանցիկ փոխադրամիջոցները: Ռուսաստանը ջանքեր է գործադրում շրջափակումը վերացնելու ուղղությամբ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ուղիղ լաստանավային-երկաթուղային գիծ բացելու մասին և բանակցություններ են տարվում Աբխազիայի միջով հաղորդակցությունը վերականգնելու վերաբերյալ


Հայաստանի աշխարհագրական խորհրդանիշերը

Ժողովուրդը առանձնապես մեծարում է Արարատ լեռը, Սևանա լիճը, Արաքս գետը:

Արարատ /Մասիս/ սարը, որը հիշատակված է դեռևս Աստվածաշնչում որպես Նոյան տապանի վերջին հանգրվան, գտնվում է Հայկական լեռնաշխարհի գրեթե կենտրոնում և կազմված է Մեծ /5165մ/ և Փոքր /3925մ/ Արարատներից Արարատը պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական գերբի վրա՝ Մարդկային պատմության մեծ ժամանակահատվածում Արարատը գտնվել է հայերի տարածքում, սակայն այժմ Թուրքիայի տարածքում է

Սևանը /հնում՝ Գեղամա լիճը/ աշխարհի ամենաբարձր լեռնային քաղցրահամ լիճն է մոտ 1400 քառ կմ տարածք ունի և ծովի մակերևույթից բարձր է 1900 մետր Այդ լիճն են թափվում 20 գետեր, իսկ արտահոսում է միայն Հրազդան գետը:

Արաքսը Քուռ գետի ամենախոշոր վտակն է. Երկարությունը 1072 կմ է, ավազանի տարածքը՝ 102 հազար քառ կմ Նրա ավազանն ընդգրկում է Հայաստանի տարածքի 76 տոկոսը Արաքսը սահմանամերձ գետ է՝ Նրա առանձնահատկությունն այն է, որ հոսում է հիմնականում պատմական Հայաստանի



ՀԱՊԱՐՅԱՆ ԱՎԱՆԳՈՒՅԹՆԵՐ...

Հայաստանի լեռնաշխարհը ժողովրդի առասպելներում. Ժողովուրդը լեռները տեսնում է աժդահանների տեսքով՝ որպես եղբայրներ: Ամեն առավուր արթնանալիս, նրանք ողջունել են միմյանց: Բայց ծերանալով, արդեն չեն կարողացել կանուխ արթնանալ: Որի պարճատով էլ, ստիպույքը խախտելու համար, պարսիկ էն դարչել են սարեր, նրանց գուրիների՝ հարբավայրեր, իսկ արցունքները՝ աղբույրներ:

հողերով, որոնց մեծ մասն այժմ գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս:

Ինչպիսին է երկրի կլիման

Հայաստանը, գտնվելով մերձարևադարձային գոտու հյուսիսային մասում, ունի բազմաբղետ կլիմա: Արարատյան գոգավորությունում և Վայքում՝ 1300-1400 մետր բարձրության վրա, կլիման չորային է և խիստ մայրցամաքային՝ Տաք, չափավոր խոնավություն ունեն հյուսիս-արևելյան շրջանները և Չանգեզուրը /900-1700մ/. Կլիման չափավոր է 2500 մետր բարձրության վրա: Սառը եղանակ է լինում 2500 մետրից բարձր տարածքներում:

Ասում ենք Հայաստանը արևավառ երկիր է:

Իրո՞ք դա այդպե՞ս է

Այդպես է: Տարբեր շրջաններում առանց վառ արևի լինում է ընդամենը 18-64 օր. Նախալեռներում ամառը տևում է 4-5 ամիս՝ մինչև $+42^{\circ}$ ջերմաստիճանով: Տարեկան տեղումները՝ 220-1000 մմ-ի սահմաններում Անձրևները սովորաբար տեղում են վաղ գարնանը

Ինչպիսին է Հայաստանի բուսականությունը

Կլիմայի բազմազանությամբ է պայմանավորված հողի և բուսականության բազմատեսակությունը. Այստեղ կողք-կողքի հարատևում են փշատերև ու խառն անտառները, աղքատ բուսածածկով կիսանապատները, բարձրալեռ արոտավայրերը, պտղատու և խաղողի այգիները: Անտառներում գերակշռում


են կաղնին, բոխին, թխկին, հաճարենին, ծփին և վայրի խնձորենին, տանձենին, ծիրանը, ընկույզը, մասրաթփերը և այլն:

Ինչպիսին է Հայաստանի կենդանական աշխարհը

Այն պարունակում է մինչև 450 տեսակի ողնաշարավորներ, որոնց թվում կաթնասունները՝ 76 տեսակի և թռչունները՝ 304 տեսակի: Այստեղ բնակվում են այծյամներ, խոյեր, վարազներ, եղեգնակատուներ, չախկալներ, գայլեր, աղվեսներ, արջեր, աքիսներ, լուսաններ, հովազներ, կլիմայավարժվել են բծավոր եղջերուները, ջրարջաշունը: Թռչուններից Հայաստանում բնակվում են արծիվը, անգղը, ուրուրը, բազեն, արագիլը, կռունկը, արտույտը, կաքավը, բադը, լորը, փասիանը: Սողունների թվում ենք մողեսը, գյուրգան, իժը, կրիան և այլն: Չկներից հայերը հպարտանում են իշխանով:

Մոսկվացին ինչպես կարող է փոխել ժամացույցի սլաքները Հայաստանի սահմաններ մտնելիս

Հայաստանի ժամանակը Մոսկվայի ժամանակից առաջ է մեկ ժամով



ԲՆԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 2. ՔՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Պատմում է բնակչության թվաքանակի և ազգային կազմի, մայրաքաղաքի, սփյուռքի և գաղթի մասին, հայերի՝ ռուսերենի իմացության չափի մասին
Ընդամենը 12 հարց ու պատասխան

Ինչպիսին է Հայաստանի բնակչության թվաքանակը և ազգային կազմը

Ըստ 2005 թվականի կեսերի տվյալների, Հայաստանի բնակչության թվաքանակը 3,2մլն մարդ է.

ԽՍՀՄ-ի ժամանակ Հայաստանը ազգային կազմով նույնպես շեշտվում էր իր միատարրությամբ. Հայերը կազմում էին 93,9 տոկոս, զգալի փոքրամասնություն էին կազմում ադրբեջանցիները՝ 2,6 տոկոս, քրդերը՝ 1,7 տոկոս և ռուսները՝ 1,5 տոկոս

Ինչպիսին է վարչաարարածքային բաժանումը

Երկիրը բաժանված է 11 մարզերի՝ Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Երևան, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ Մարզերն իրենց հերթին կազմված են համայնքներից.

Հայաստանի հիմնական քաղաքները

Հայաստանի մայրաքաղաք Երևանը շատ խոշոր քաղաք է, որտեղ բնակվում է 1,1 միլիոն մարդ: Գտնվում է Արարատյան հարթավայրի ձախափնյա մասում, ծովի մակերեսից 1000 մետր բարձրության վրա

Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից մեկն է. Մեր թվարկությունից առաջ, 782 թվականին Ուրարտուի Արգիշտի թագավորը այստեղ կիմնել է Էրեբունի ամրոց-քաղաքը՝ Նրանշանակությունն առավել աճեց մեր թվարկության 13-րդ դարի կեսերին, երբ այն դարձավ կարևոր առևտրական կենտրոն 1440 թվականից Արևելյան Հայաստանի վարչական կենտրոնն է 17-րդ դարում Երևանի խանության կենտրոնն էր 1828 թվականից՝ Ռուսաստանի կայսրության կազմում էր որպես մարզային կենտրոն, այնուհետ գավառական քաղաք, 1849 թվականից՝ Երևանի նահանգի կենտրոն, 1918 թվականի հուլիսից՝ Հայաստանի Հանրապետության, 1921 թվականից՝ Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք

Մյուս խոշոր քաղաքներն են՝ Գյումրին, Վանաձորը, Հրազդանը, Արմավիրը, Արտաշատը, Կապանը Երկրում կա ընդամենը 48 քաղաք և 951 գյուղական բնակավայր

Քաղաքաբնակները 2.088 հազար մարդ են կամ ամբողջ բնակչության 60 տոկոսը

Աճում է, արդյոք, երկրի բնակչությունը

Անցյալ դարի 90-ական թվականների առաջին կեսին Հայաստանից մեկնեցին գրեթե բոլոր աղքեղացիները /մոտ 85 հազար մարդ/ Միևնույն ժամանակ Աղքեղանում բնակվող

350 հազար հայերից մոտ 200 հազարը տեղափոխվեցին Հայաստան Դա ադրբեջանա-դարաբադյան պատերազմի և զուգահեռաբար հայ-ադրբեջանական հարաբերությունների վատթարացման հետևանքն էր

Անկախության տարիներին Հայաստանից մեկնել են մոտ 35 հազար ռուսներ /50 հազարից/, որի պատճառը հանրապետությունում սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակն էր և ազգային պետություն ստեղծելու կուրսը

1991 թվականից մոտ 4 տոկոսով կրճատվել է նաև հայ բնակչությունը Հայերը արտագաղթում են աշխատանք փնտրելու նպատակով

Ընդամենը ինչքան հայ կա երկրագնդի վրա և հիմնականում որտեղ են նրանք բնակվում

Սփյուռքահայությունը ամբողջ աշխարհում կազմում է ավելի քան 7 միլիոն մարդ

Հայերի ամենախոշոր սփյուռքը Ռուսաստանում է՝ 1,13 միլիոն մարդ/հաշվարկումներ կան, որ մոտ 2,5 միլիոն են/, այն 112 տոկոսով աճել է ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Բավականաչափ հայեր են բնակվում նաև ԱՄՆ-ում /մոտ 1 միլիոն/, Ֆրանսիայում/500 հազար/, Իրանում/180 հազար/, Լիբանանում /120 հազար/ և Սիրիայում/120 հազար/

Ինչքան է Հայաստանի բնակչության կյանքի փնտրությունը

Վերջին տվյալներով հայ բնակչության կյանքի տևողությունը կազմում է 73,3 տարի, ընդ որում տղամարդկանցը՝ 73 տարի, կանանցը՝ 76,4 տարի

**Հայաստանը հայրնի է երկարակյացներով:
Երկրում այժմ 100 տարեկանից բարձր ինչքան
հայ է ապրում**

100 տարեկանից բարձր երկարակյացների թիվը ներկա-
յումս կազմում է 325 մարդ Ամենաերկարակյացը 116 տարե-
կան է

Ինչքան հայ է բնակվում Լեռնային Ղարաբաղում

Ըստ 2005 թ. մարդահամարի, Լեռնային Ղարաբաղի Հան-
րապետությունում /ԼՂՀ/ բնակվում է 137,7 հազար մարդ, և,
փաստորեն, բոլորը հայեր են

Ինչքան ռուս է բնակվում Հայաստանում

Այժմ այստեղ բնակվում է մոտ 15 հազար ռուս Ռուսական
սփյուռքը երբեք մեծաքանակ չի եղել, և ամենամեծ ցուցանիշը
բնակչության 2,5 տոկոսն էր 20-րդ դարի 70-ական թվականնե-
րին

Զգալի էթնիկական զանգված է պահպանվել միայն Լոռիի
մարզում /2000 մարդ/, Լերմոնտովո և Ֆիոլետովո գյուղերում
Մնացյալ մասը բնակվում է խոշոր քաղաքներում, մեծալ
մասամբ Երևանում և Գյումրիում



ՀՆԱԳԱՐՅԱՆ ԱՎԱՆԳՈՒՅԹՆԵՐ...

Կենդանիները առաապելներում, «Սասունցի Դավիթ» վիպագրու-
թյան մեջ սաղավաժների լրաբերը, պարզամարերը ազուպն է:
Իմաստուն բոշունի, լուսարացի մունեպիկի դերում հանդես է գալիս
արաղաղը, որը վերահենդամացնում է մարդկանց ժամանակավոր
մահից՝ բնից, վանում է հիվանդության ոգիներին: Արագիլը դաշ-
տերի պահապանն է:

Երբ են ռուսները հայրնվել Հայաստանում

Ռուսական համայնքն ստեղծվել է 19-րդ դարի 2-րդ քառորդում, երբ Ռուսաստանի հետ միացմամբ էր պայմանավորված սահմանների ամրապնդումը և Հայաստանի ընդգրկումը համառուսաստանյան շուկայի մեջ Վերաբնակեցվեցին գորամասեր, ինչպես նաև գյուղացիներ, այդ թվում՝ հոգեմարտիկներ /դուխարորներ/ և մոլոկաններ 1880 թ արդեն կար 23 ռուսական բնակավայր, որտեղ ապրում էր 11 283 մարդ

Ռուսների վերաբնակեցման երկրորդ փուլը համընկնում է խորհրդային ինդուստրացման հետ /20-րդ դարի 30-ական թվականներ/ Հայաստանին հարկավոր էին բարձրորակ բանվորներ, ինժեներներ և այլ մասնագետներ.

Հայերը գիրեն, արդյոք, ռուսաց լեզուն

Այժմ երկրի բնակչության ավելի քան 97 տոկոսը խոսում է հայերեն, բացառություն են կազմում ռուսերենով խոսողները՝ 0,9 տոկոս.

Սակայն ռուսերենին տիրապետող հայերի թիվը խիստ զգալի է Ըստ 1989 թ. մարդահամարի՝ գրեթե կեսը, Երևանում՝ մեծ մասը Հետաքրքիր է, որ հայոց լեզվի դարաբաղյան բարբառը պարունակում է ռուսերեն բառեր, նույնիսկ ամբողջ դարձվածքներ



ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՊԼՈՒԽ 3. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
 Պատմում է, թե երբ է գոյացել հայ ազգը, ինչպես է ստեղծվել ու վերացել պետականությունը, Տիգրան Բ-ի մեծ թագավորության մասին, այսպես կոչված «հայկական հարցի», հայ ցեղասպանության մասին, Հայաստանի Ժողովրդավարական Հանրապետության, Հայաստանում Խորհրդային իշխանության հաղթանակի, դարաբաղյան խնդրի մասին, այն մասին, թե ինչպես հռչակվեց Հայաստանի Հանրապետության ինքնավարությունը:
 Ընդամենը 27 հարց ու պատասխան

Երբ և ինչպես է կազմավորվել հայ էթնոսը

Հայ ժողովուրդը աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկն է Նրա ձևավորումն սկսվել է մեր թվարկությունից առաջ 1-ին հազարամյակում երկու էթնիկական խմբերի սերտաճման հետևանքով Վերոհիշյալ խմբերին էին պատկանում խեթերի և խուրրիտների ցեղերը /Արարատյան բարձրավանդակի տարածքում/, երկրորդ խմբին էին պատկանում խեթերի հնդեվրոպական ցեղերը և լուրիական ցեղերը /Հայկական լեռնաշխարհի արևմտյան մատույցները/

Միասնական ժողովրդի ձևավորման գործում կարևոր դեր է խաղացել հայասների հնդեվրոպական ցեղային միավորումը, որոնք բնակվում էին Եփրատի, Տիգրիսի և Ճորոխի միջագետքում /այժմյան Թուրքիայի հյուսիս-արևելք/ մ թ ա 2-րդ հա-

զարանյակում Հենց հայասներից էլ ժառանգվել է «հայ» ինքնանվանումը Սակայն հաստատվել է նաև «արմյանե» հասկացությունը, որը գալիս է հին հույների ազդեցությունից, որոնք յուրացրել էին «արմեններ» բառը, իսկ ասորիները քգտագործում էին «Նաիրին»

Ազգի ձևավորումը հիմնականում ավարտվել է մ թ ա 4-րդ դարում

Ինչ կապ ունի Ուրարտական ք գավորությունը հայ պեղականության հասարարման հետ

Մ թ ա 8-րդ դարում Ուրարտուի հզոր ու զարգացած թագավորությունը գրավել է արմենների ՌԻրումե երկիրը Դրանով է պայմանավորված արմենների տարաբնակեցումը այդ պետությունում Մ թ ա 590 թվականին Ուրարտուն տապալվեց Բայց նրա քաղաքակրթությունը շատիվ ժառանգել է նրան փոխարինած Հայկական պետությունը

Որ լեզվարևութանիքին է պատկանում հայոց լեզուն

Հայերենը շատ հին ծագում ունի Նրա ձևավորման մեխանիզմը դեռևս այնքան էլ պարզ չէ Հետազոտողների մեծ մասը գտնում է, որ լեզվի հիմքը արմենների ցեղամիավորման լեզուն է, որը մ թ ա 7-րդ դարում գերիշխող էր դարձել Ուրարտուում

Հայոց լեզուն համարվում է հնդեվրոպական լեզվարևութանիքի ինքնուրույն ճյուղ Որոշ գիտնականներ գտնում են, որ այն մոտիկ է հին հունարենին Վարկած կա նաև, որ հայոց լեզուն ազգակից է բասկերի լեզվին /բասկերը Իսպանիայի ժողովուրդներից մեկն են/

Երբ է առաջացել ամենաառաջին անկախ հայկական պետությունը

Մթ ա 4-րդ դարում, երբ Պարսկաստանի տերությունը կործանվեց Ալեքսանդր Մակեդոնացու հարվածներից Հայաստանը, օգտվելով այդ իրավիճակից, հռչակեց իր անկախությունը։ Ի տարբերություն Պարսկական տերության մյուս մասերի, Հայաստանը չմտավ Ալեքսանդր Մակեդոնացու նոր պետության մեջ Այդ ժամանակ իշխանության գլուխ կանգնած էր Երվանդ /Օրոնտ/ թագավորը, որը կառավարող հին ընտանիքից էր.

Հայոց թագավորները պետության կենտրոնական մարզ ընտրեցին Արարատյան հարթավայրը, իսկ մայրաքաղաք՝ Արմավիրը

Ինչ է նշանակում «Մեծ Հայք»

Հնագույն հեղինակները Մեծ Հայք էին անվանում փաստորեն Հայաստանի տարածքը, որն առաջացել էր Ուրարտուի տարածքում Պարսկաստանից անկախություն ձեռք բերելով, հայերը երկար ժամանակ պայքարում էին Սելջուկների պետության դեմ, որը Ալեքսանդր Մակեդոնացու կայսրության



ՀԵՍՊԵՐՅԱՆ ԱՎԵՆԴՈՒՅԹՆԵՐ...

Կրակն ու ջուրը, աստղերն ու երկինքը առաապելներում. Կրակն ու ջուրը ծնվել են որպես բույր ու եղբայր։ Բայց վիճեցին իրար հեկ ու դարչան հավիտենական բշևամիսեր։ Չուրը միշտ հանգցնում է կրակը։ Տիր Կարինի /Հարդագողի ճամապարհի/ առաապելը. Սպանված կերպափոխված կնոջ կրծքից կարը շաղ է եկել երկնակամարի վրա։

ժառանգորդներից մեկն էր Մ թ ա 190 թվականին Հռոմի կողմից այդ երկրի պարտությունը միայն նախապայմաններ ստեղծեց Հայոց թագավորության անկախությունն ամրապնդելու համար Դա իրականացվեց հայոց պատմության ակաճավոր գործիչներից մեկի՝ Արտաշես Ա թագավորի կողմից Նա ընդլայնեց ու ամրապնդեց իր թագավորությունը և դրեց նոր մայրաքաղաքի՝ Արտաշատի հիմքերը

Ինչ է նշանակում «Փոքր Հայք»

Փոքր Հայքը լեռնային մարզ է Եփրատ գետի վերին հոսանքներում մ.թ.ա. 2-րդ հազարամյակում այն բնակեցված էր Հայասա ցեղերով, որոնք հայերի նախնիներից մեկն են Մինչև մ թ ա 12-րդ դարի վերջը գտնվում էր Խեթական պետության կազմում։ Վերջինիս անկումից հետո ասորական տեքստերում հիշատակվում է որպես երկիր Սուխամի Մ թ ա 6-րդ դարում միացվել է Պարսկական պետությանը, իսկ Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Պարսկաստանի ջախջախումից հետո միացվեց վերջինիս կայսրությանը Մ թ ա 322-120 թթ՝ ինքնուրույն թագավորություն էր

Այնուհետ՝ Պոնտոսի տիրապետության տակ էր Մ թ ա 63 թ միացվել է Հռոմի կայսրությանը

Երբ է հին Հայոց պետությունը հասել բարձրագույն հզորության

Դա տեղի է ունեցել Մեծն թագավոր Տիգրան Բ-ի ժամանակ, որը կառավարում էր մ թ ա 95-55 թթ․ Նա Հայաստանին միացրեց Սոքենը, Ատրպատականը, Սիրիան, Կոմմագենը,

Կիլիկիան, Միջագետքը և այլն Այդ տիրությունն ընդգրկում էր Առաջավոր Ասիայի զգալի մասը, տարածվում էր Միջերկրական ծովից մինչև Կասպից ծովը և Քուռ գետից մինչև Միջագետք Արևմուտքում սահմանակից էր Հռոմի Հանրապետությանը Մ թ ա 83-78 թվականներին Տիգրիսի վերին հոսանքներում հիմնադրվեց նոր մայրաքաղաքը՝ Տիգրանակետը Տիգրան Բ-ն կառուցեց նաև 2 քաղաք նույն անվանմամբ, դրանցից մեկը՝ Լեռնային Ղարաբաղում

Սակայն երկիրը կարճ ժամանակ գտնվեց հզորության գագաթնակետում Էթնիկական միասնության բացակայությունը, տարածայնությունները դինաստիայի ներսում, ծայրամասային մարզերի անջատվողական ձգտումները հանգեցրին բուն Հռոմից կախյալ վիճակի /մ թ ա 66թ / Տիգրան Բ-ն մնաց միայն Հայկական թագավորության տիրակալը

Այդ պահից և երկար դարեր շարունակ հայերի գլխավոր խնդիրը դարձավ տարածքային ամբողջականության պաշտպանությունը

***Երբ է Հայաստանը դարձել հակամարտության
թափերաբեմ Հռոմեական կայսրության
ու Պարսկաստանի միջև***

Ի դժբախտություն Հայաստանի, մ թ ա 1-ին դարի կեսերին նա դարձավ բուքերային պետություն ընդլայնվող Հռոմի կայսրության և ուժեղացող Պարթևական Պարսկաստանի միջև Այդ պատճառով Հայաստանն ստիպված էր խուսանալ, դաշն ստեղծել այս կամ այն կողմի հետ Նրա տարածքը վերածվել էր երկու տերությունների դաժան գոտեմարտերի թա-

տերաբեմի Հռոմի դրածոների հայոց գահի վրա փոխարինվում էին Պարսկաստանի դրածոներով և հակառակը Այդպես շարունակվել է մինչև 387 թ , երբ երկիրը բաժանվեց Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև

Երբ է դադարել հին Հայոց պետության գոյությունը

Մեր թվարկության 389 թվականին Հայաստանի՝ Հռոմին անցած արևմտյան մասը վերածվեց Հռոմի կայսրության նահանգի, իսկ արևելյան մասը՝ պարսկական նահանգի /428 մ թ /

Ինչ է նշանակում Կիլիկիայի հայկական պետություն

Հայերը ի սկզբանե Կիլիկիայում՝ Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափին, սկսել են բնակվել մ թ ա 1-ին դարում Հայոց իշխան Ռուբենը 1080 թվականին լեռնային Կիլիկիայից դուրս է մղել բյուզանդացիներին և ստեղծել է Իշխանություն Հետագա տասնամյակներում դրա սահմանները էապես ընդլայնվեցին 1198թ Լևոն իշխանը Տարսոնում /հարթավայրային Կիլիկիա/ օժվեց անկախ պետության թագավոր Տարածքը 40 հազար քառ կմ էր, բնակչությունը՝ մոտ մեկ մի-



ՀԵՍՏԱՐՔԱՆ ԱՎԱՆԳՈՒՅԹՆԵՐ...

Երկինքն ընկալվում էր որպես քաղաք՝ պղնձյա դարպասներով ու քարե պարերով: Երկինքն ու հողագունդը բաժանող անհասկալի ծովի մոտ գտնվում է դրախտը: Դրախտի դարպասների մոտ հոսում է կրակե գեղը, որի վրա գտնվում է մազե կամուրջ: Գեղի փակ գտնվում է դժոխքը: Այնպեղ մեղավորների փանջված հոգիները լքում են դժոխքը, բարչբանում են կամրջի վրա, բայց այն կտրվում է նրանց մեղքերի ծանրության փակ, և հոգիներն ընկնում են կրակե գեղը:

լիոն մարդ Պատմության մեջ այլևս չի եղել այնպիսի մի պետություն, ինչպիսին Կիլիկիան է, որն ունենա 30 խոշոր և, որ ամենագլխավորն է, միաժամանակ ու հաջողությամբ գործող նավահանգիստներ Կիլիկիան դարձել էր հայերի քաղաքական ու մշակութային կյանքի խոշոր կենտրոն Ուներ հզոր բանակ, իր մետաղադրամը, ուժեղ առևտրական նավատորմ, առևտրական համաձայնագրեր էր կնքում Վենետիկի, Ճենովայի և այլ քաղաքների ու երկրների հետ.

Կիլիկիայի պետությունը գոյություն ունեցավ երեք հարյուրամյակ 1375 թ այն ընկավ Եգիպտոսի սուլթանության հարվածներից

Ինչ է փվել միջնադարը Հայաստանին

Միջին դարերում Հայաստանը ձեռքից-ձեռք էր անցնում

Բայց նույնիսկ այդ ժամանակ հայերին հաջողվել է վերականգնել անկախությունը Այսպես, Արաբական խալիֆոթյան թուլանալուց հետո, 885 թվականից Հայաստանը դարձավ ինքնուրույն պետություն. Սակայն 1047 թվականին ենթարկվել է թուրք-սելջուկյան քոչվոր ցեղերի ավերիչ արշավանքներին

Միայն 13-րդ դարի հենց սկզբներին, այն ժամանակ հզոր Վրաստանի օգնությամբ, հաջողվել է ազատվել ատելի լծից, թեև ընկել է ազատագրողների վասալային կախման տակ.

1236 թ թաթար-մոնղոլները գրավեցին Վրաստանն ու Հայաստանը մի ամբողջ հարյուրամյակ, որը ծանր հետևանքներ ունեցավ նրանց համար 14-րդ դարի վերջում Հայաստանը ենթարկվեց Լենկ Թեմուրի ավերիչ արշավանքներին 15-րդ դարում սկսվեց թուրքմենական ցեղերի իշխանությունը 16-րդ դար

Թուրքիայից հայաբնակ շրջանների անջատումը, ապահովել կենսատարածքը Օսմանյան կայսրության անկման պայմաններում, և իհարկե, հայերի ունեցվածքի առգրավումը, երկրի ներսում հարթել սոցիալ-տնտեսական ու քաղաքական հակասությունները

Թուրքերն ունեին ավելի կարևոր Նպատակ Դա, առաջին հերթին, պանթյուրքիզմի ուսմունքն էր Այն ուղղված էր, ամենից առաջ, հայերի դեմ, քանի որ Թուրքիան մեկ ազգի՝ թուրքերի պետություն դարձնելը պետք է սկսվեր երկրում բնակվող մեծաթիվ հայ բնակչության վերացմամբ, բնակչություն, որը դարեր ի վեր չէր ուզում ընդունել նոր հավատքը՝ իսլամը Իսկ Արևելյան Հայաստանը միշտ գտնվում էր մի այլ ահռելի գաղափարի՝ «Մեծ Թուրանի» ստեղծման ճանապարհի վրա Թուրանի մեջ պետք է մտնեին ամբողջ Կովկասը, Ղրիմը, Ղազախստանը, Միջին Ասիան, բացի Տաջիկստանից, այնուհետև Ռուսաստանի տարածքը Սև ծովից մինչև Կասպից ծով, Պոփուփիեի, Ուրալի, Սիբիրի և Յակուտիայի հետ միասին Այսինքն, պետք էր հնարավորություններ ստեղծել նոր կազմով կայսրության վերածննդի համար՝ Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Ռուսաստանի թուրքական ժողովուրդների հաշվին

Ինչ է նշանակում «Հայկական հարց» և որն է դրա էությունը

«Հայկական հարցը» ծագել է 1878 թ, Եվրոպական տերությունների Բեռլինյան վեհաժողովում Այն հրավիրվել էր Ռուսաստանի և Թուրքիայի միջև Սան Ստեֆանոյում կնքված խաղաղության պայմանագրի պայմանների վերանայման հա-

մար Վեհաժողովը զգալիորեն վատացրեց Արևմտյան Հայաստանին վերաբերող պայմանները. Արևմտյան տերությունների, ամենից առաջ, Անգլիայի պնդմամբ, հայաբնակ Էրզրումը և Ալաշկերտի հովիտը վերադարձվեցին Թուրքիային, ընդ որում՝ մերժվեց Արևմտյան Հայաստանին Թուրքիայի կազմում ինքնավարություն տալու առաջարկը Արևմտյան տերությունների թողտվությունը դրսևորվեց և այնուհետ: Այդպես Թուրքիան անտեսեց Բեռլինյան համաձայնագրի 61-րդ հոդվածը հայաբնակ մարզերում «բարելավման և բարենորոգման» ու հայերի անվտանգության ապահովման մասին

Ինչ կապ ունեւ Բրեսպ-Լիպովսկի պայմանագիրը «Հայկական հարցի» հետ

1917 թվականի Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո Խորհրդային կառավարությունը հայտարարեց Առաջին համաշխարհային պատերազմի մասնակցությունից միակողմանի դուրս գալու մասին՝ առանց բռնամիացումների և ռազմատուրքերի Շուտով նա Գերմանիայի հետ կնքեց անջատ հաշտության պայմանագիր, նրան հսկայա-



ՈՌԻՍԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԱՏՄԻԹՅՈՒՆ-ԽՈՍԷ ԵՎ ԳՈՐԾ
 11-րդ դարում հայերը մասնակցել են պոլովցիների դեմ մղված մարտերին: Ն. Մ. Կարամզինը «Ռուսական պեպոսթյան պատմության» մեջ /«Կիև Պեչորյան վարք սրբոցի» հիման վրա/ գրում է «Մոնոմախների ժամանակներում Կիևում հայ բժիշկներ կային: Նրանցից մեկը /ինչպես գրում են/, նայելով հիվանդին, միշտ գուշակում էր, կասյրի նա, թե՛ ոչ, իսկ հակառակ պարագայում սովորաբար կանխագուշակում էր նրա մահվան օրը»:

կան տարածքային գիջումներ կատարելով

1918 թ. մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանը Գերմանիայի և նրա դաշնակիցների հետ ստորագրեց Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, որը կործանարար հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար. Ըստ այդ պայմանագրի 4-րդ կետի, Խորհրդային կառավարությունը պարտավորվեց Ռուսաստանի զորքերը հանել ոչ միայն Ռուսաստանի կողմից ազատագրված Արևմտյան Հայաստանի տարածքներից, այլև Թուրքիային հանձնել Ռուսաստանի կայսրության կազմում նախկինում եղած, Արևելյան Հայաստանի տարածքի մի մասը՝

***Ինչ սրացավ Հայաստանը Անյրանքի երկրների
կազմում ստորագրելով Սևրի պայմանագիրը
Թուրքիայի հետ***

1920 թ. օգոստոսի 10-ին Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած դաշնակից տերությունները Սևրում /Փարիզի արվարձան/ Թուրքիայի հետ կնքեցին հաշտության պայմանագիր՝ Դաշնակիցների թվում պայմանագիրն ստորագրեց նաև Հայաստանի Հանրապետությունը, որը ճանաչվել էր Անտանտի դիվանագիտական ոլորտներում

Ըստ Սևրյան պայմանագրի, դաշնակից պետությունները և Օսմանյան Թուրքիան ճանաչում են Հայաստանի Հանրապետությունը 150.000 քառ. կմ տարածքով, ներառյալ Վան, Բիթլիս, Տրապիզոն, Էրզրում վիլայեթները՝ ելքով դեպի Սև ծով. Սակայն պայմանագիրը չէր նախատեսում, թե այդ մարզերը ինչ կերպ պետք է հանձնվեն Հայաստանին: Դաշնակից պետությունները որևիցե պարտավորություն չէին ստանձնել

պայմանագրի կետերը կենսագործելու ուղղությամբ

Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանների որոշման հարցում երաշխավոր էր ընտրվել ԱՄՆ-ը /Նախագահ՝ Վուդրո Վիլսոն/ ԱՄՆ-ը, իհարկե, ձգտում էր կառավարման իրավունք ստանալ ոչ թե սովահար Հայաստանի ավերակների, այլ Սև, Միջերկրական և Կասպից ծովերին հարող Հայաստանի նկատմամբ Ուստի, լինելով խիստ հետևողական ու հավատարիմ ինքն իրեն, ԱՄՆ-ը, ելնելով ստեղծված իրավիճակից, հրաժարվեց Թուրքիայի և Հայաստանի միջև դատավոր լինելու դերից և Հայաստանը կառավարելու իրավունքից.

Մինչդեռ Թուրքիայում ընթացող ազգային համախմբման ու նոր իշխանության կազմավորման շնորհիվ Ազգային ժողովր Մուստաֆա Բենալի գլխավորությամբ Անկարայում Սուլթանի իշխանությունը հայտարարեց տապալված և բռնեց Անտանտի պետությունների դեմ պայքարի ուղին՝ Նա հրաժարվեց ճանաչել Սուլթանական կառավարության կողմից ստորագրված Սևրյան պայմանագիրը՝

***Ինչ է նշանակում «Հայոց ցեղասպանություն»
և որոնք են դրա հետևանքները***

Ավելի քան 30 տարի հայերի ցեղասպանությունը Թուրքիայի քաղաքականությունն էր Այն սկսվել էր Բայազետ քաղաքում, որտեղ սպանվել էր 1400 հայ 1879 թ Ալաշկերտի հարթավայրի 122 գուղերից 111-ը լրիվ ավերվել էին, իսկ տղամարդիկ, կանայք ու երեխաները սպանվել էին ամենադաժան ձևով, 1894 թ. Սասունում ոչնչացվել էր 12000 հայ, 1895-ին՝ Արևմտյան Հայաստանում՝ 300 000, 1896 թվականին Կոնս-

տանտինոպոլսում՝ 9570, Վանի շրջանում՝ 8000, 1904 թ Սասունում՝ ևս 5640, Ադանում՝ 30 000 հայ

Ամենադաժանն ու արյունալիցը 1915 թվականն էր Այն ժամանակ Թուրքիայի կառավարությունը, օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի ճակատներում տիրող անկայուն իրադրությունից, կազմակերպեց Արևմտյան Հայաստանի բնակիչների ցեղասպանությունը, նրանց բոլորին հայտարարելով «ոռուսական գործակալներ», «պետության թշնամիներ» Ջարդերի ընթացքում, որի սկիզբ ոչ պաշտոնապես համարվում է 1915 թ ապրիլի 24-ը, ոչնչացվել է ավելի քան 1,5 միլիոն մարդ, այդ թվում՝ երեխաներ, կանայք, ծերեր Հայերի որոշ մասին հաջողվել է փախչել տարբեր երկրներ, այդ թվում՝ Ռուսաստան. Երեք միլիոն հայերից Թուրքիայում մնացել են մի քանի տասնյակ հազարը:

1918 թ. Ղարսում, Արդահանում, Ալեքսանդրոպոլում ոչնչացվել է 100.000 հայ, 1919թ. Կիլիկիայում՝ 50 000 1920 թ նորից թուրքական ցեղասպանության զոհեր դարձան Կիլիկիայի հայ բնակիչները Այստեղ, Ֆրանսիական զորքերի թողովությանը, սպանվեց 11 հազար հայ, իսկ 150 հազարը փախուստի դիմեց Սիրիա: 1922 թ Իզմիրում հայերի հետ մեկտեղ սպանվեցին հույներ ու հրեաներ՝ մոտ 20 0000 մարդ



ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

1185 թ. *Անդրեյ Բոգոլյուբսկու որդին՝ Յուրին, վրացական քաղաքի Թամարի հետ պատկառոտորեն հեղտ զլիսավորում է վրացական ու հայկական զորքերը, որոնք սելջուկներից ազատագրում են ստեղծարարչական խոշոր կենտրոն Դվինը:*

Ցեղասպանությունը իրեն դրսևորում էր նաև պատմամշակութային և հոգևոր ժառանգությունը ոչնչացնելու փորձերում՝ Ոչնչացվեցին հազարավոր ձեռագրեր, պատմական ու ճարտարապետական հարյուրավոր հուշարձաններ, հատկապես՝ եկեղեցիներ, տաճարներ, խաչքարեր, որոնք հայ հոգևոր մշակույթի գլուխգործոցներ էին

Տեղի՞ է ունեցել, արդյոք, ցեղասպանություն

Արևելյան Հայաստանում

Այդ Ռուսական կայսրության անկումից հետո և ինտերվենցիայի տարիներին հայերի ցեղասպանություն է տեղի ունեցել ամբողջ Արևելյան Հայաստանում, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղում Բաքվի ու Ելիզավետպոլի ռուսական նախկին գավառներում, այդ տարածքներում կազմավորված նոր անդրկովկասյան պետությունում՝ Ադրբեյջանի Ժողովրդավարական Հանրապետությունում ոչնչացվել է մոտ 200 հազար հայ, այդ թվում՝ 30 հազարը՝ Բաքվում Ղարաբաղի Շուշի մայրաքաղաքում, 1920 թ մարտի 23-ին այն գրավելուց հետո ադրբեյջանական ազգայնամուլների գործը երեք օր ու գիշերվա ընթացքում կոտորեց ավելի քան 20 հազար հայ, իսկ 7000 տներ, գրադարաններ, եկեղեցիներ, գերեզմանատներ, պանթեոններ վերածվեցին ավերակների Դրանից հետո Շուշիում ապրող 35 հազար հայից ոչ մի հայ չմնաց՝ Այդ ողբերգության մասին բոլշևիկյան կուսակցության ականավոր գործիչ Սերգո Օրջոնիկիձեն գրել է « Սոսկումով եմ հիշում այն տեսարանները, որոնք մենք տեսանք Շուշիում 1920 թվականի մայիսին» Իսկ հանրահայտ քանաստեղծ Օ Մանդելշտամն իր տպավորու-

թյուններն արտահայտել է «Կառապանը» բանաստեղծությունում

Այսպես, Լեռնային Ղարաբաղում
Գիշատիչ դարձած Շուշա քաղաքում
Հոգին բռնկող սարսափներ ապրեցի
Ամեն կողմից երևացող
Քառասուն հազար մեռյալ պատուհանները,
Այնտեղ թաղված անշունչ բոժոժները,
Անսրող բոցկլտում են մերկացած տները
Եվ շողում է երկինքը
Ասես կապտավուն մի ժանտախտ

Երբ է նշվում ցեղասպանության զոհերի հիշատակի օրը

Ամեն տարի գարնանը, ապրիլի 24-ին Հայաստանում պաշտոնապես նշվում է Հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օրը. Երևանում դեռ Խորհրդային կարգերի ժամանակ կերտվել է ցեղասպանության զոհերի հիշատակին և հայ ժողովրդի վերածննդին նվիրված վեհաշուք հուշարձան Ծիծեռնակաբերդում, որը գտնվում է Հայաստանի մայրաքաղաքի գեղատեսիլ մի անկյունում, և որտեղ հնչում է Կոմիտասի երաժշտությունը Ողբերգությունը հաստատուն կերպով նստել է ոչ միայն հայերի պատմական հիշողության մեջ Աշ-



ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

12-րդ դարում Թուրքերի քահանան կարողիկոսին խորհուրդ է տալիս անգիջում լինել Բյուզանդիայի պահանջներին և աջակցություն խնդրել ռուսական ուղղափառ եկեղեցուց: 1236-1244 թթ. Թարսար-մոնղոլները գրավել էին Հայաստանը: Այնուհետև նրան և Ռուսիային, չնայած ընդհանուր սահմանների բացակայությանը, միավորում է երկարատև լծից ազատագրվելու ընդհանուր հոգսը:

Ինչու անկում ապրեց առաջին

Հանրապետությունը և ինչպես հաստատվեց

Խորհրդային իշխանությունը Հայաստանում

Հայկական Հանրապետության կառավարությունը թույլ տվեց արտաքին քաղաքականության լուրջ սխալներ՝ Հայկական հարցը լուծելու նպատակով դաշնակցական կառավարության միակողմանի կողմնորոշումը դեպի արևմտյան տերությունները արդյունք չտվեց Տարածքային վեճի կարգավորմանը միջնորդելու մասին ՌԽՖՍՀ առաջարկությունները չընդունվեցին Ընդամին, 1920 թ սեպտեմբերին թուրքական զորքերը ներխուժեցին Հայաստան, կառավարությունն ի վիճակի չէր կազմակերպել պաշտպանությունը և դիմեց արևմտյան տերությունների օգնությանը, բայց անարդյունք.

1920 թ. դեկտեմբերի 2-ին, այն բանից հետո, երբ Դաշնակների կառավարությունը առանց դիմադրություն ցույց տալու իշխանությունը հանձնեց բոլշևիկների կողմից դեկավարվող Ռազմա-հեղափոխական կոմիտեին, տեղի ունեցավ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության /Հայկական ԽՍՀ/ հռչակումը

Երբ են հաստատվել Հայաստանի

այժմյան սահմանները

Սահմանները որոշվել են Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1921 թ կնքված Մոսկովյան պայմանագրով, առանց Հայկական ԽՍՀ ներկայացուցիչների մասնակցության Ըստ պայմանագրի Հայաստանը տրոհվեց երեք մասի Թուրքիայի ճնշման տակ և Մերձավոր Արևելքում պրոլետարական սոցիալիս-

Բոլշևիկներն այն ժամանակ մեծ նշանակություն չէին տալիս սահմաններին՝ Գտնում էին, որ կարևոր չէ, որտեղով են դրանք անցնում, քանզի հուսով էին Մերձավոր Արևելքում սոցիալիստական հեղափոխության առաջխաղացման, ժողովուրդների ու ազգերի միավորման գործում

***Թվենք ղարաբաղա-ադրբեջանական
հարցի պատճառները***

Ղարաբաղյան-ադրբեջանական խնդիրը, փաստորեն, առաջացել է ոչ թե 1988թ , այլ 1921 թ , երբ Լեռնային Ղարաբաղը, որպես Հայաստանի պատմական մաս, առանց նրա ժողովրդի հետ որևէ խորհրդակցման /իսկ հայերը այն ժամանակ այնտեղ կազմում էին բնակչության ավելի քան 90 տոկոսը/ ՌԽՖՍՀ կառավարության վոլյունտարիստական մեթոդներով հանձնվեց Ադրբեջանին ԼՂԽՄ-ի սահմանները Մոսկվայի հանձնարարությամբ 1923 թ ինքնուրույն որոշել է Ադրբեջանի ղեկավարությունը Դրա հետևանքով ԼՂԽՄ-ը սահմանափակվել է 4,4 հազար քառ. կմ շրջագծում Ինքնավար Հանրապետության տարածքը որոշվել է առանց հաշվի առնելու պատմական իրողությունը և բազմաթիվ հայ բնակչության զգալի քանակության հասնող հողատարածությունները ԼՂԽՄ-ի արևմտյան մասը նույնիսկ զրկվեց Հայաստանի հետ անմիջական սահմանակցությունից Նրանց միջև ժամանակավոր, 1923թ մինչև 1929 թ., ստեղծվեց քրդական ինքնավարություն, որը հետագայում համաձուլվեց ադրբեջանական վարչատարածքային մասերի հետ Չնայած տեղերում սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ համամիութենական ղեկավարության բավական խիստ քաղաքականությանը, Բաքվից

մի քանի տասնամյակ առաջ Լեոնային Ղարաբաղը արիեստականորեն միացվել է Ադրբեջանին Ընդ որում հաշվի չեն առնվել մարզի պատմական անցյալը, նրա ազգային կազմը, ժողովրդի ցանկությունը, տնտեսական շահերը Անցել են տասնյակ տարիներ, բայց Ղարաբաղի հարցը շարունակում է հողավել, անհանգստություն առաջացնել երկու հարևան ժողովուրդների միջև անբարյացակամության պահերին, ժողովուրդներ, որ կապված են դարավոր բարեկամությամբ Հարկավոր է ԼՂԽՄ-ը վերամիավորել Հայկական ԽՍՀ-ին Այդ դեպքում ամեն ինչ կրնկնի իր օրինական տեղը» Սակայն ինչպես և նախկինում, զանազան պատճառներով ԽՍՀՄ ղեկավարության կողմից ղարաբաղյան հիմնախնդրի քննարկումը, ըստ երևույթին, ոչ առանց Ադրբեջանի ներգործության, տեղի չունեցավ

***Երբ և ինչպես է ծագել ազգային հակամարտությունը
Ադրբեջանի Լեոնային Ղարաբաղի
Ինքնավար մարզում***

1985 թ ՄՍ Գորբաչովի սկսած վերակառուցումը ղարաբաղյան հայերի մեջ հույս առաջացրեց սոցիալ-քաղաքական



ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ


1667 թ. Ալեքսեյ Միխայլովիչ ցարը ստորագրել է «Մեղաքս և հումք Ռուսաստանն անրմուծելու վերաբերյալ հայկական ընկերության Ենոբիագիրը», նույնիսկ երաշխիքներ է տվել ապրանքների վաճառքի համար՝ որևիցև դժվարության դեպքում: Վաճառական Չաքար Սահրադովը /Սահրադյանը/ ցարին է նվիրել Լեոնարդո Գալիլեյի «Խորհրդավոր ընթրիք» նկարի պատճենը և գահ, որի մասին պայմանվում է 10-րդ գլխում:

այդարության վերականգնման, Հայաստանի հետ հնարավոր վերամիավորման մասին 1987 թ այդպիսի խնդրանքով հավաքվեցին տասնյակ հազարավոր ստորագրություններ և ուղարկվեցին ԽՄԿԿ Կենտկոմ ու ԽՍՀՄ գերագույն Խորհուրդ Սակայն ոչ մի արձագանք չստացան Այդ ժամանակ, 1988 թ փետրվարի 22-ին ԼՂԻՄ-ի Մարզային խորհրդի նիստում բոլոր մակարդակների ժողովրդական պատգամավորները դիմեցին Ադրբեջանի և Հայաստանի Գերագույն խորհուրդներին՝ համաձայնություն տալ ինքնավար մարզը Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու մասին: Փետրվարի 26-ին Գորբաչովը հանդիպում ունեցավ ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, գրող և հրապարակախոս Ջորի Բալայանի և հայտնի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի հետ, որոնք անհողորդ հարց դրեցին Ղարաբաղը փրկելու մասին: Բաքվի իշխանությունները հանդես եկան ԼՂԻՄ-ը Հայաստանին հանձնելու դեմ և որոշակի աջակցություն ստացան կենտրոնական իշխանություններից Բայց փետրվարի 27-29-ին Սումգայիթ քաղաքում սկսվեցին հայկական կոտորածներ, որտեղ գոհվեցին հարյուրավոր հայեր: Հայերն ստիպված փախուստի դիմեցին քաղաքից Ադրբեջանցիների և Ղարաբաղի հայերի, իսկ այնուհետ նաև Հայաստանի միջև ազգամիջյան հակամարտությունը աղետալի բնույթ ստացավ Հայերի կոտորածն ու տեղահանություններն սկսվեցին նաև Բաքվում, Կիրովաբադում /Գյանջա/, Նախիջևանում, Մինգեչաուրում, Խանլարում, Ղազախում, Շչեկում և Ադրբեջանի այլ շրջաններում 1988-1991 թթ. Ադրբեջանից արտաքսվել են ավելի քան կես միլիոն հայեր: Իր հերթին Հայաստանից հեռացել են 200 հազար ադրբեջանցիներ:

մասը, իսկ Լևոն Տեր-Պետրոսյանը դարձավ Գերագույն խորհրդի նախագահ Ընդունվեց «Հրովարտակ անկախության մասին»։ Այն նախատեսում էր «անկախ պետականության հաստատման ընթացքի սկիզբը», և Հայկական ԽՍՀ-ն վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն /ՀՀ/ Սակայն հրովարտակը չէր նշանակում ձևականորեն դուրս գալը ԽՍՀՄ-ի կազմից. Լ. Տեր-Պետրոսյանը հանդես եկավ ընթացաշարի փուլ առ փուլ իրականացման օգտին։

Ինչպիսի իրավիճակ է այժմ Լեռնային Ղարաբաղում

Լեռնային Ղարաբաղը, պատմականորեն լինելով Հայաստանի հյուսիս-արևելյան նահանգը և մշակութային, տնտեսական ու լեզվական հարաբերություններում անբակտելի ամբողջականություն կազմելով Հայաստանի հետ, այժմ աշխարհի ոչ մի պետության կողմից չճանաչված հանրապետություն է ԼՂՀ-ի և Ադրբեյջանի միջև պատերազմն ավարտվեց 1994 թ. դեկտեմբերի 12-ին, երբ պայմանագիր ստորագրվեց հրադադարի մասին ԼՂՀ-ի հայերի հսկողության տակ են գտնվում մեծահամանային ադրբեյջանական շրջանները, մասնավորապես Քելբաջարի և Լաչինի շրջանները, որոնք գտնվում են ԼՂՀ-ի և Հայաստանի միջև Կարելի է ասել, որ ԼՂՀ-ում իրադրությունը հանգիստ է, բացի Ադրբեյջանին սահմանակից սկանապատված շրջաններից և, այսպես կոչված, անվտանգության գոտիներից, որտեղ մինչև հիմա երբեմն տեղի են ունենում փոխհրաձգություններ Պատերազմի ժամանակ ավերված քաղաքներն ու ավանները հիմնականում վերականգնվել են, ԼՂՀ-ի մայրաքաղաք Ստեփանակերտում նոր շինարարություններ են իրականացվում



ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ
ՔԱՌԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 4. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

**Պատմում է, թե ինչ է հռչակում Սահմանադրությունը, և ով է ղեկավարում պետությունը, զինված ուժերի, դատական համակարգի, արդարադատության խորհրդի, վարչական բաժանման և տեղական ինքնակառավարման մասին, կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների և արհմիությունների մասին:
Ընդամենը 25 հարց ու պատասխան**

Ինչպիսին է Հայաստանի զինանշանը

Հայաստանի Հանրապետության պետական զինանշան է համարվում Հայաստանի Հանրապետության առաջին զինանշանը /1918-1920 թթ / Այն հաստատվել է 1991 թ սեպտեմբերի 21-ին և իրենից ներկայացնում է վահան, որի կենտրոնում պատկերված է Արարատ լեռը՝ գագաթի վրա Նոյան տապանով /Աստվածաշնչի համաձայն հենց Արարատի վրա հանգրվանեց Նոյան տապանը տիեզերական ջրիեղեղից հետո/: Վահանի մնացած տարածությունը բաժանված է չորս մասի, և այդ մասերում տեղադրված են պատմական Հայաստանի չորս թագավորական ընտանիքների պետական զինանշանները: Դրանով խորհրդանշված է, որ այժմյան հանրապետությունը հին հայկական պետականության ժառանգորդն է: Վահանը երկու կողմից պահում են արծիվը / ձախ կողմից/ և առյու-

օր /աջ կողմից/, որոնք մարմնավորում են պետության հզորությունը « Վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա ու ժապավեն»։ Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերը կարելի է տեսնել երկրի դրամական արժեթղթերի, հիմնարկների, նախարարությունների ու գերատեսչությունների ցուցանակների վրա և այլն.

Ինչպիսին է Հայաստանի դրոշը

ՀՀ Սահմանադրության /որն ընդունվել է 1995 թ հուլիսի 5-ին/ 13-րդ հոդվածին համապատասխան, «Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն՝ հորիզոնական հավասար շերտերով»։ Համարվում է, որ այդ գույները խորհրդանշում են կարմիրը՝ Հայաստանի ազատության ու անկախության համար պայքարում հայ ժողովրդի բազում սերունդների թափած արյունը, կապույտը՝ Հայաստանի հանդարտ ու խաղաղ երկինքը, նարնջագույնը՝ բարեկամության հիմքը հանդիսացող ստեղծագործ աշխատանքը։ Այդ նույն դրոշը եղել է Հայաստանի առաջին հանրապետության պետական դրոշը /1918-1920/

Ովքեր են Հայաստանի օրհներգի

երաժշտության ու տեքստի հեղինակները

ՀՀ օրհներգ դարձավ նույնպես Հայաստանի առաջին հանրապետության «Մեր Հայրենիք» օրհներգը, որը «Իտալացի սողկա երգը»-ի՝ բանաստեղծ Միքայել Նալբանդյանի թարգմանությունն է։ Երաժշտությունը գրել է Բարսեղ Կանաչյանը՝ Պետական օրհներգի առաջին ու վերջին քառյակներում հնչում են հետևյալ խոսքերը

բույն, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն», որտեղ «իշխանությունը պատկանում է ժողովրդին»

Իր իշխանությունը ժողովուրդը իրականացնում է պետական մարմինների, տեղական ինքնավարության և պաշտոնատար անձանց միջոցով: Պետությունն իր քաղաքացիների հիմնական իրավունքներն ու ազատությունները ապահովում է միջազգային իրավունքի սկզբունքներին ու կանոններին համապատասխան:

***Ով է պետության ղեկավարը և
ինչպես է նա ընտրվում***

Պետության ղեկավարը համարվում է Հանրապետության Նախագահը Նա ապահովում է Սահմանադրության իրականացումը, օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների գործունեությունը և երաշխավոր է հանդիսանում երկրի տնկախության, տարածքային ամբողջականության ու անվտանգության համար.

Նախագահը երկիրը ներկայացնում է միջազգային հարաբերություններում և իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը Նա քաղաքացիների կողմից ընտրվում է 5 տարի ժամկետով Նույն անձը չի կարող անընդմեջ Նախագահ լինել երկու ժամկետից ավելի


2005 թ հանրաքվեն հավանություն տվեց այն բանին, որ անհրաժեշտ է նախատեսել Ազգային ժողովի և վարչապետի օգտին նախագահի լիազորությունների վերաբաշխման որոշում, որը պետք է տեղի ունենա 2007-2008թթ

Ով է այժմ Հայաստանի Նախագահը

1998 թվականից ՀՀ նախագահը Ռոբերտ Սեդրակի Քոչարյանն է, որն ընտրվել է երկրորդ ժամկետով, 2003 թ. նախագահական ընտրությունների ընթացքում

Նա ծնվել է 1954 թ օգոստոսի 31-ին, Ադրբեջանական ԽՍՀ Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ստեփանակերտ քաղաքում Ավարտել է տեղի ուսական դպրոցը Ծառայել է Խորհրդային բանակում Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետը: Տիրապետում է ռուսերեն և անգլերեն լեզուներին Ամուսնացած է, ունի երեք երեխա

Աշխատանքային գործունեությունն սկսել է 1971 թ., Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանում որպես փականագործ, այնուհետ՝ ինժեներ-մեխանիկ՝ Հետագայում զբաղեցրել է տարբեր պաշտոններ Լեոնային Ղարաբաղի կոմերիտմիության և կուսակցական մարմիններում: 1989 և 1990 թվականներին ընտրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, ԳԽ Նախագահության անդամ



ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

1783 թ. Ռուսաստանի հայերի հոգևոր առաջնորդ, արքեպիսկոպոս Հովսեփ Արղուրյանը եկապոսիմա 2-րդին հանչել է Հայաստանը Ռուսաստանի հովանավորության փափ ընդունելու պլան:

1789թ. Ա.Վ. Սուվորովը ռուս-թուրքական պատերազմի ժամանակ աջակցել է հայերի վերաբնակեցմանը անվտանգ փեղեխ: Պատահական չէ, որ 1795թ. հայերը համատարին խնդրում էին ցարին Արևելյան Հայաստանի ազգաբազրույնը հանչնաբարել հենց Սուվորովին:

1991 թվականին ընտրվել է չճանաչված Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի 1-ին գումարման պատգամավոր: 1988 թվականից նա Արցախյան շարժման քաղաքական առաջամարտիկներից մեկն էր / Արցախը Լեոնային Ղարաբաղի վաղեմի հայկական անվանումն է / Եղել է «Կռունկ» կոմիտեի անդամ, որի արձակումից հետո կիմնել և գլխավորել է «Միացում» կազմակերպությունը:

ԼՂՀ-ում Արտակարգ դրության /1990-1991թթ./ ժամանակ Ղարաբաղի ընդհատակի կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկն էր Առաջիններից մեկն էր, որ ստանձնեց Լեոնային Ղարաբաղի անվտանգության ու պաշտպանության համակարգի ձևավորման պատասխանատվությունը 1992 թ օգոստոսին, երբ ադրբեջանական բանակը գրավեց Լեոնային Ղարաբաղի տարածքի կեսը, նա ստանձնեց ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի նախագահի և վարչապետի պաշտոնը Կարճ ժամկետում Արցախի ազատագրմանը բոլոր ուժերի ու կամքի մոբիլիզացումը բեկում առաջացրին պատերազմի ընթացքում 1994 թ. դեկտեմբերին, ԼՂՀ Գերագույն խորհրդի որոշմամբ, իսկ 1996 թ նոյեմբերին՝ համաժողովրդական ընտրությունների արդյունքով նա ընտրվեց ԼՂՀ նախագահ:

1997 թ. մարտին Ռ. Քոչարյանը նշանակվեց Հայաստանի Հանրապետության վարչապետ, իսկ մեկ տարի անց, վաղաժամկետ ընտրությունների ժամանակ ընտրվեց Հայաստանի Հանրապետության Նախագահ: 2003 թ Ռոբերտ Քոչարյանը վերընտրվեց Հայաստանի Հանրապետության նախագահ:

**Ինչպես է ընտրվում երկրի պառլամենտը
և որոնք են նրա լիազորությունները**

Հայաստանի Ազգային ժողովը միապալատ է: Նրա 131 պատգամավորներն ընտրվում են 5 տարով՝ խառն համակարգով /41-ը՝ մաժորիտար սկզբունքով, 90-ը կուսակցական ցուցակներով/. Վերջին պառլամենտական ընտրություններին, որը տեղի է ունեցել 2007 թվականի մայիսի 12-ին, պայքարում էին 1245 թեկնածու՝ կուսակցական ցուցակներով, 119 թեկնածու՝ մաժորիտար սկզբունքով

2005 թ Հայաստանում տեղի ունեցավ հանրաքվե՝ Սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու կապակցությամբ.

Նոր Սահմանադրությամբ Հայաստանը դարձավ պառլամենտա-նախագահական երկիր՝ Նախագահի որոշ իրավասություններ անցան Ազգային ժողովին՝ Այժմ Ազգային ժողովի մեծամասնությունը, նախագահի ներկայացմամբ, հնարավորություն ունի վարչապետ ընտրել հաղթանակած կուսակցության առաջնորդին, որին նախագահը, առանց պառլամենտի համաձայնության չի կարող ազատել պաշտոնից

Պառլամենտի գլխավոր գործառնություններն են՝ օրենքների ընդունումը, բյուջեի հաստատումը և դրա կատարման վերահսկողությունը՝ Նշանակում է Սահմանադրական դատարան, ընտրում է Մարդու իրավունքների պաշտպան և հեռուտատեսության ու ռադիոյի Վերահսկիչ խորհրդի անդամների կեսը /մյուս կեսը նշանակում է ՀՀ Նախագահը/. Նախագահի ներկայացմամբ՝ նշանակում է Գլխավոր դատախազ, Կենտրոնական բանկի նախագահ և Վերահսկողական պալատի նախագահ: Իրավունք ունի անվատահություն հայտնելու կառավարությանը

ՀՀ Նախագահը, արդյոք, կարո՞ղ է արձակել պառլամենտը

Այո, բայց միայն ոչ ռազմական ու արտակարգ դրության ժամանակ:

Պառլամենտը կարո՞ղ է պաշտոնազրկել

ՀՀ Նախագահին

Այո, բայց միայն ապացուցված խիստ կարևոր մեղադրանքների դեպքում՝ պետական դավաճանության կամ այլ՝ հստակապես ծանր հանցագործության համար

Որո՞նք են Հայաստանի առավել

ազդեցիկ կուսակցությունները

2007 թ. պատգամավորական ընտրություններին մասնակցել են 23 քաղաքական ուժեր՝ 22 կուսակցություն և մեկ քաղաքական դաշինք

Ազգային ժողով մտած առավել ազդեցիկ կուսակցություններն են կառավարամետ Հանրապետական կուսակցությունը (ընտրողների ձայների 33,8%), «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (15,1%), ՀՀ Դաշնակցությունը (13,1%), ինչպես նաև՝ օպոզիցիոն «Ժառանգություն» (7%) և «Օրինաց երկիր» (6%) կուսակցությունները

Ինչպես է կազմավորվում երկրի կառավարությունը,

որո՞նք են նրա լիազորությունները

Կառավարության ղեկավարը վարչապետն է Նշանակում է Հ նախագահը, պառլամենտի հետ խորհրդակցելուց հետո՝

ՀՀ նախագահը նշանակում և ազատում է կառավարության անդամներին վարչապետի առաջարկությամբ

Կառավարությունն ինքնուրույն մշակում և իրականացնում է Հայաստանի ներքին քաղաքականությունը Իսկ արտաքին քաղաքականությունը մշակում և իրականացնում է ՀՀ Նախագահի հետ համատեղ Արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության թեմաներով կառավարության նիստ կարող է հրավիրել ու վարել ՀՀ Նախագահը

2000 թ մինչև 2007 թ մարտը՝ ՀՀ վարչապետը Անդրանիկ Մարգարյանն էր (վաղաժամ մահացել է 2007 թ. մարտի 25-ին):

2007 թ ապրիլի 4-ից, ՀՀ նախագահ Ռ Ս Քոչարյանի հրամանագրով ՀՀ վարչապետ է նշանակվել մինչ այդ՝ ՀՀ Պաշտպանության նախարար և ԱԱ խորհրդի քարտուղար Սերժ Սարգսյանը:

Ինչ կառուցվածք ունի Հայաստանի ռազմական ղեկավարության համակարգը

Ձինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարը ՀՀ Նախագահն է Նա կոորդինացնում է պաշտպանության ոլորտը, նշանակում և ազատում է բարձրագույն հրամանատարական կազմը, հայտարարում է ռազմական և արտակարգ դրություն, ընդհանուր կամ մասնակի զորահավաք և որոշում է ընդունում զինված ուժերն օգտագործելու մասին

Ձինված ուժերի քաղաքական ղեկավարումն իրականացնում է Պաշտպանության նախարարությունը՝ նախարարի գլխավորությամբ:

Ռազմական ղեկավարումն իրականացնում է Գլխավոր

են մտնում 4 մոտոհրաձգային բրիգադից, 10 մոտոհրաձգային գնդից, մեկ հրետանային բրիգադից և 2 զենիթահրթիռային բրիգադից բաղկացած ցամաքային զորքերը

ՆԳՆ զորքերը բաղկացած են մոտ 1000 մարդուց և խմբավորված են 4 գումարտակի մեջ

Ինչպիսին է Հայաստանում Սահմանադրական դատարանի դերը

Սահմանադրական դատարանը կարևոր տարր է քաղաքական համակարգի «հակադրությունների և հակակշիռների» համակարգում Նա որոշում է, թե պառլամենտի ընդունած օրենքները, որոշումները, ՀՀ Նախագահի հրամանագրերը, կառավարության և վարչապետի որոշումները, տեղական ինքնակառավարման մարմինների վճիռները համապատասխանում են, արդյո՞ք, Սահմանադրությանը՝ Մինչև սիջազգային պայմանագրի վավերացումը պարզում է, թե նրանում ստանձնած պարտավորությունները համապատասխանո՞ւմ են, Սահմանադրությանը Լուծում է հանրաքվեների և երկրի Նախագահի ու պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը Եզրակացություններ է տալիս ՀՀ Նախագահին պաշտոնից ազատելու հիմքերի առկայության մասին կամ նրա կողմից իր լիազորությունների իրականացման անհնարինության մասին, ինչպես նաև մի շարք այլ հարցերի վերաբերյալ՝ Սահմանադրական դատարանին կարող են դիմել ՀՀ Նախագահը, Ազգային ժողովը, կառավարությունը, իշխանության տեղական մարմինները, դատախազությունը, այլ

դատարաններ, ինչպես նաև մասնավոր անձինք կոնկրետ հարցերով

ՄԴ-ն ունի 9 անդամ, ընդ որում նրանցից 5-ը նշանակվում են պառլամենտի կողմից, իսկ 4-ը՝ Նախագահի կողմից ՄԴ անդամները անփոխարինելի են և իրենց պաշտոնն զբաղեցնում են մինչև 65 տարեկանը, օգտվում են իրավաբանական անձեռնմխելիության իրավունքից

Ինչ կառուցվածք ունի Հայաստանի դատական համակարգը

Այստեղ գործում են ընդհանուր իրավասության 1-ին աստիճանի դատարանները, Բողոքարկման դատարանը և Վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարանները Բարձրագույն դատարանական աստիճանը /բացի սահմանադրական արդարադատության հիմնահարցերից/ համարվում է Վճռաբեկ դատարանը, որն ապահովում է օրենքի միատեսակ կիրառումը. Դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով Դատավորների անփոխարինելի են Նրանք իրենց պաշտոնն զբաղեցնում են մինչև 65 տարեկանը:

Ինչ է Արդարադատության խորհուրդը

Հայաստանի դատական համակարգի կարևոր ու ինքնատիպ տարրը Արդարադատության խորհուրդն է Այն կազմված է 9 դատավորներից, որոնք ընտրվում են 5 տարի ժամկետով Հայաստանի դատավորների ընդհանուր ժողովում, ինչպես

նան երկու իրավաբան-գիտնականներից, որոնք նշանակվում են ՀՀ Նախագահի և Ազգային ժողովի նախագահի կողմից՝ Արդարադատության խորհուրդը ՀՀ Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածությունները և առաջարկություններ պաշտոնեական առաջխաղացման, կարգապահական, վարչական ու դատական պատասխանատվության, լիազորությունների դադարեցման վերաբերյալ

Ինչպիսին է Հայաստանի վարչապարածքային բաժանումը

Երկիրը բաժանված է 9 մարզերի և քաղաքապետարանների Երևանը քաղաքապետարանային կազմավորում է, բայց հատուկ կարգավիճակով Օրինակ, քաղաքապետը նշանակվում է ՀՀ Նախագահի կողմից

Ինչպես է գործում Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգը

Տեղական ինքնակառավարումն իրականացնում են քաղաքապետարանները Դրանց գլխավորում են խորհուրդը և ղեկավարը, որոնք ընտրվում են 4 տարով: Ֆինանսավորման աղբյուրները՝ լրավճար Պետական բյուջեից, տեղական հարկերն ու տուրքերը և նրանց կողմից ցույց տրվող ծառայությունների համար ստացվող վճարումները Քաղաքապետարանային խորհուրդն ունի քաղաքապետարանային սեփականություն, հաստատում է բյուջեն, սահմանում է տեղական հարկերն ու տուրքերը,

վճարումները, ընդունում է իրավական վավերագրեր և այլն

Կենտրոնական իշխանությունները ինչպես են փոխներգործում փարածքային ու փեղական ինքնակառավարման համակարգի հեփ

Մարզպետները պաշտոնի են նշանակվում ու ազատվում կառավարության կողմից, բայց հաստատվում են ՀՀ Նախագահի կողմից

Քաղաքապետարանների գործունեության օրինակատարությունը վերահսկում է Պետական իրավական վերահսկողությունը: Հարկ եղած դեպքերում, Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կառավարությունը կարող է պաշտոնից զրկել քաղաքապետարանի ղեկավարին:

Ինչպիսին է Հայաստանում ժողովրդավարության զարգացման համակարգը և մարդու իրավունքների պաշտպանությունը

Երկրի Սահմանադրությունը հռչակում է ժողովրդավարական կանոնների և մարդու իրավունքների պահպանությունը: Սահմանադրությունը հայտարարում է, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները համարվում են բարձրագույն արժեքներ, իսկ պետությունն ապահովում է դրանց պաշտպանությունը: Սահմանադրությունն ունի հիմնական իրավունքների բաժին: Այդ կանոնների իրական կատարումը գնահատվում է պառլամենտի, հա-

մապատասխան պետական մարմինների, քաղաքական կուսակցությունների, հասարակայնության և զանգվածային տեղեկատվության համակարգի կողմից

Որո՞նք են առավել ազդեցիկ քաղաքական կուսակցությունները

Մեծ թիվ կազմող կուսակցություններից առավել ազդեցիկը Հանրապետական կուսակցությունն է, և Դաշնակցությունը

Կա՞ն, արդո՞ք, հակամարտ կուսակցություններ

Պատվամենտում իշխանությունների նկատմամբ խիստ հակամարտություն են ներկայացնում Հայաստանի Ժողովրդական կուսակցությունը, Ազգային ժողովրդավարական միությունը, Ազգային միաբանություն կուսակցությունը

Կառավարության նկատմամբ թեթև հակամարտություն է ցուցաբերում Միացյալ աշխատավորական կուսակցությունը և «Օրինաց երկիր» կուսակցությունը:

Ներգործուն ազդեցություն ունեն Հայոց համազգային շարժումը/ՀՀՇ/, որը ղեկավար կուսակցությունն էր 1990-1997 թթ., Համայնավարական կուսակցությունը և Ժողովրդավարական կուսակցությունը

Հայաստանում կա՞ն, արդո՞ք, արհմիություններ

Երկրում կա արհմիությունների համամիություն ընկերակցություն, որը միավորում է ավելի քան 20 ճյուղային արհմիություններ Ստեղծվել է 1992 թ. և հանդիսանում է Հայաստանի արհմիությունների հանրապետական խորհրդի իրավափոխա

ուրդը: Մտնում է Անկախ պետությունների համագործակցության արհմիությունների ընդհանուր համադաշնության մեջ

Ինչպիսի հասարակական կազմակերպություններ գոյություն ունեն

Հայաստանի Հանրապետությունում գործում են քաղաքական, ստեղծագործական, իրավապահ, արհեստակցական, բնապահպանական, վետերանների, բարեգործական և այլ կազմակերպություններ: Քաղաքական կազմակերպությունների թվում են, օրինակ, Քաղաքացիական հասարակայնության ինստիտուտը, Հանուն ժողովրդավարության համագործակցությունը, 21-րդ դարի լիդերների համաժողովը, «Ժողովրդավարություն քաղաքական ու իրավական հետազոտությունների կենտրոն»-ը, Քաղաքացիական նախաձեռնությունների սզատ համաժողովը, Ինտեգրացման և ժողովրդավարության Հայկական կենտրոնը, Հանուն բացազատ հասարակության նամագործակցությունը, «Նորավանք» հիմնադրամը:

Իրավապահ կազմակերպություններին են պատկանում՝ Հայաստանի սահմանադրական իրավապահ կենտրոնը, «Հայաստան առաքելություն» կազմակերպությունը, Հայաստանի եկսիհնկյան կոմիտեն, Հայաստանի Հեկսիհնկյան քաղաքացիական համույթը

Բնապահպանական են՝ «Բուրգ» և «Հանուն կայուն մարդկային զարգացման» կազմակերպությունները:

Արհեստակցական են՝ Գրողների, Կոմպոզիտորների, Եկարիչների միությունները, Գյումրիի լրագրողների «Ասպարիզ» ակումբը, «Երևանյան մամուլ-ակումբը», «Խոսքի ազա-

տության պաշտպանության կոմիտեն»

Բարեգործական են՝ «Հուսարեր» կենտրոնը, «Կարեն Դեմիրճյան» բարեգործական հիմնադրամը, «Մարդու առողջությունը», հաշմանդամների հիմնահարցերի գծով «Փյունիկ» և «Կամք ու կարող» կազմակերպությունները

Վետերանների՝ Հայաստանի վետերանների միությունը, որը միավորում է Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին, և Ազատագրական պայքարի վետերանների սիությունը, որը միավորում է Ղարաբաղի պատերազմի վետերաններին



סטודיו

ՊԼՈՒԽ 5. ԿՐՈՆԸ

**Պատմում է Հայ եկեղեցու առանձնահատկությունների
և ժողովրդի պատմության մեջ նրա դերի մասին,
մինչքրիստոնեական հավատքների,
քրիստոնեությունն ընդունելու ժամանակի,
երկու երկրների եկեղեցիների կապերի մասին,
այն մասին, թե Հայաստանում ինչքան
ուղղափառներ կան:**

Ընդամենը 13 հարց ու պատասխան

Ինչ կրոն են դավանում հայերը

Հայերը քրիստոնյա են, Հայ Առաքելական եկեղեցին /ՀԱԵ/ եզակի Այն շատ մոտ է Ուղղափառ եկեղեցուն, բայց նույնական չէ, քանզի քարոզում է միաստվածություն Ըստ այդ տեսակետի, Քրիստոսը ոչ թե երկու բնույթ ունի՝ աստվածային ու մարդկային, այլ միայն աստվածային

Բյուզանդական եկեղեցուց Հայ եկեղեցու անջատումը տեղի է ունեցել 554 թ Դվինի եկեղեցական ժողովում՝ Այն պարսավել է Բյուզանդական եկեղեցու՝ Քաղկեդոնի տաճարի որոշումը /451թ./ Քրիստոսի երկակի էության առիթով 13-րդ դարից սկսած, Վատիկանը ապարդյուն փորձում էր իր ազդեցությունը տարածել Հայաստանում Ռուսաստանի հետ միանալուց հետո ՀԱԵ-ի հիմնական արտոնու-

թյունները հաստատվեցին: ՀԱԵ-ն գլխավորում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը. Այժմ հայ եկեղեցին ունի երեք նվիրապետական աթոռ՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանը /Անթիլիաս, Լիբանան/, Երուսաղեմի պատրիարքարանը, Կոնստանդինուպոլսի (Ստամբուլ) պատրիարքարանը և թեմեր.

Ով է այսօր գլխավորում Հայ եկեղեցին

1999 թ հոկտեմբերի 27-ին Հայ առաքելական եկեղեցու Ազգային եկեղեցական համաժողովը արքեպիսկոպոս Գարեգինին ընտրեց Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոս

Գարեգին Բ-ն /աշխարհիկ՝ Կտրիճ Գրիգորի Ներսիսյան/ ծնվել է 1951թ. օգոստոսի 21-ին, Հայկական ԽՍՀ Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում 1965-1971 թթ. սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Ավարտելուց հետո ծառայել է որպես այդ հաստատության հրահանգչի օգնական և դասավանդել Նոր Կտակարանը: 1970 թ ձեռնադրվել է սարկավագ, այնուհետ՝ վանական-քահանա և անվանակոչվել է Գարեգին 1972 թ Վազգեն Ա Կաթողիկոսի ցուցումով մեկնել է Վիեննա՝ աստվածաբանական կրթությունը շարունակելու համար: 1975 թ ԳՖՀ-ում ծառայել է որպես հայ սփյուռքի քահանա և աստվածաբանական կրթությունը շարունակել է Բոննի համալսարանում 1979 թ վերադարձել է Էջմիածին: Այնուհետ սովորել է Ռուս Ուղղափառ եկեղեցու Մոսկվայի հոգևոր ակադեմիայի ասպիրանտուրայում 1983 թ. ստացել է եպիսկոպոսի աստիճան, իսկ 1992 թ՝ արքեպիսկոպոսի աստիճան 1980թ նշանակվել է

Արարատյան հայրապետական թեմի գլխավոր փոխերեցի օգնական, 1983 թ` գլխավոր փոխերեց, իսկ 1997 թվականից նշանակվել է պատրիարքական աթոռի տեղապահ Գարեգին Բ-ն ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր անդամ է Ստացել է ԽՍՀՄ, Հորդանանի, Ռումինիայի, Ուկրաինայի և Ֆրանսիայի պետական պարգևներ

Ինչպիսի հավատարալիքներ էին իշխում մինչքրիստոնեական ժամանակաշրջանում

Մինչև քրիստոնեություն ընդունելը, հայերը, ինչպես և շատ այլ ժողովուրդներ, հեթանոսներ էին՝ Մ թ ա 6-4-րդ դարերում գլխավոր աստվածը համարվում էր Հայկը: Առասպելում նա ներկայացված է որպես հսկա որսորդ, և նրա անունով էր կոչվում համաստեղություններից մեկը /Օրիոնը/ Մահացող և վերակենդանացող բնության աստվածը Արան էր, սիրո աստվածուհին՝ Աստղիկը Մ թ ա 3-1-ին դարերում



ՈՌԻՍԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

1828 թ. Ա. Գրիբոնդովը /1795-1829 թթ/ գրել է «...մեր կողմն անցան մինչև 8 հազար հայ քրիստոնեիքներ, և ես հիմա նրանց բողոծ ունեցվածքի համար հանգիստ չունեն ոչ ցեղերը, ոչ գիշերը, սակայն պահպանում եմ նրանց սեփականությունը և նույնիսկ նկամությունները, ամեն ինչ այս կամ այն կերպ արվում է իմ ասածով» Եամակից, Թավրիզ:

1828 թ. Նիկոլայ 1-ինը ընդունում է «Եկեղեցական կանոնադրությունը», ըստ որի Հայ առաքելական եկեղեցին լիակարգ ազատություն է ստանում Կեր լիներ իր սեփականությանը և փնտրիների կրթությունը, լուսավորությունը, ամուսնությունը և այլն:

հունական առասպելաբանության ազդեցությամբ հայ աստվածների պանթեոնը շատիվ ենթարկվել է զգալի փոփոխությունների Օրինակ, Արամազդը ներկայացվում էր որպես աստվածների հայրը, Վահագնը՝ պատերազմի աստվածը, Անահիտ աստվածուհին՝ երկրի հովանավորուհին Առկա են նաև ուղիղ գուգադրությունները Արամազդը նույնացվել է Գեսի հետ, Վահագնը՝ Հերակլեսի, Անահիտը՝ Արտեմիսի, Աստղիկը՝ Աֆրոդիտեի հետ:

Երբ են հայերն ընդունել քրիստոնեություն

Քրիստոնեությունը սկսել է Հայաստան թափանցել դեռևս մթ 1-ին դարում՝ առաքյալներ Բարդուղիմեոսի և Թադևոսի շնորհիվ Հենց այդ պատճառով էլ եկեղեցին այստեղ կոչվում է «առաքելական» /ՀԱԵ/ 4-րդ դարի սկզբներին քրիստոնեությունն ստացել է բավական լայն տարածում, չնայած քրիստոնյաների խիստ հետապնդումներին, ինչպես հին Հռոմում: Բրիստոնեության ընդունման տարեթիվը համարվում է 301 թ «Մա տեղի է ունեցել Տրդատ Գ Մեծ թագավորի օրոք /287-330թթ /, որը սկզբում հետապնդում էր քրիստոնյաներին, բայց հետո ինքն էլ իր ընտանիքի և արքունիքի հետ միասին ընդունեց նոր հավատքը և կարգադրեց քրիստոնյա կնքել Հայոց երկրի «ողջ ժողովրդին, բոլոր բնակիչներին՝ մեծից մինչև փոքրը»

Հայաստանը դարձավ աշխարհում առաջին երկիրը, որտեղ քրիստոնեությունը հռչակվեց որպես պետական կրոն:

Ինչու Հայ եկեղեցին երբեմն կոչվում է Լուսավորչական կամ Գրիգորյան

Այդ անվանումն օգտագործվում է առօրեական ձևով, այն պարզ պատճառով, որ քրիստոնեության ընդունումը կապված է սուրբ Գրիգոր Լուսավորչի /աշխարհիկ անունը՝ Գրիգոր Պարթև/ անվան հետ Նա Հայաստանում ակտիվորեն քարոզում էր դեռ մինչև քրիստոնեության ընդունումը, թաքնվում էր հետապնդումներից և, ավանդույթի համաձայն, նույնիսկ բանտարկված է եղել մահապարների (Խոր Վիրապ) խավար գնդանում. Երբ Տրդատ Գ թագավորը փոխեց իր վերաբերմունքը քրիստոնեության նկատմամբ, ազատեց Գրիգոր Լուսավորչին և նրանից ընդունեց քրիստոնեական մկրտությունը Գրիգորը դարձավ հայ եկեղեցու առաջին կաթողիկոսը



ՌՈՒՍՍԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԱՏԱՌԻՑՅՈՒՆ-ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

1830 թ. Ա Պուշկինը /1799-1837/ գրել է «Մենք մտանք Ղարս... մտախալ գնից դուրս եկավ մի երիտասարդ հայ և, խոսքեր փոխանակելով իմ քուրքի հետ, ինչ կանչեց իր մոր՝ արքայազնի թավազան մաքուր տուներենով: Նա մի նեղ սանդուղքով ինչ պարավ իր տան երկրորդ բնակարանը: Յածր բազմոցներով և հեամաշ գորգերով կահավորված սենյակում նստած էր մի ծեր կին՝ նրա մայրը: Նա մտրեցավ ինչ և համբուրեց իմ շեքը: Որդին մորը պարվիրեց կրակ անել և ինչ համար ընթրիք պարտասարել...»

Իմ այդ հայը, ինչպես կարող էր, ինչ պարմեց ուղմական այն գործողությունների մասին, որոնց ինքը ակամապես էր եղել: Նրա մեջ հեղափոխությունն արևանկով պարերազմի նկարմամբ, ևս նրան առաջարկեցի ինչ հետ գալ բանակ: Նա անմիջապես համաշայնվեց: «Ճանապարհորդություն դեպի Էրզրում»-ից:

Ինչ դեր է խաղացել եկեղեցին

երկրի պատմության մեջ

Հայ եկեղեցին արտակարգ կարևոր դեր է խաղացել իր ժողովրդի պատմության ընթացքում, քանզի անկախությունից զրկվելուց հետո այն դարձավ համազգային մի կազմակերպություն, որն ստանձնեց պետական իշխանության շատ գործառնություններ Կաթողիկոսը գերագույն դատավորն էր, մասնակցում էր քաղաքացիական օրենքների մշակմանը, գումարում էր համաժողովը՝ հայ աշխարհիկ և հոգևոր բարձր դասի խորհրդակցական բարձրագույն մարմինը, և նրա ղեկավարն էր Եկեղեցական հոգևոր ղեկավարները մասնակցում էին արտաքին քաղաքական կապերի իրականացմանը՝ Միջին դարերում եկեղեցին զարգացնում էր մշակույթը, գիտությունը և նպաստում էր դպրոցական ուսուցմանը:

Ինչպիսին է հայերի վերաբերմունքը իրենց

եկեղեցու նկատմամբ

Ժողովուրդն իր եկեղեցուն վերաբերվում է հույզով ու հարգանքով, պահպանում է այն՝ Ժողովուրդը գիտակցում է, որ լստանց եկեղեցու չէր լինի նաև ազգը, քանզի ուժեղ էր զավթիչ ժողովուրդների ու ցեղերի հետ համաձուլվելու սպառնալիքը

Հանուն իրենց հավատքի, հայերը մեծ զոհեր ու զրկանքներ էին տանում: Օրինակ, երբ պարսից շահ Հազկերտ 2-րդը /438-157թթ / փորձեց բռնությամբ հայերին դարձնել զրադաշտականներ՝ նրանց ձուլման նպատակով, ժայթքեց ազգային-ազատագրական ապստամբություն, որը շարունակվեց 34 տա-

ժեքների որոշ մասը նաև որպես արվեստի ստեղծագործություններ՝ ոսկեկար ու մարգարտաշար եկեղեցական հագուստը, կաթողիկոսների գավազանները և խաչերը, ծիսակատարության բազմաթիվ ոսկյա, արծաթե, փղոսկրե առարկաները, ոսկուց կերտված հայոց այբուբենը և խաչը՝ որպես հայ ժողովրդի խորհրդանիշ, Այվազովսկու նկարները . Այստեղ կան նաև միջնադարյան հայ քանդակագործության ու գեղանկարչության նմուշներ՝ հնագույն խաչքարեր, որմնանկարներ, հարթաքանդակներ:

***Ինչպիսին են հարաբերությունները ռուսական
և հայկական եկեղեցիների միջև***

Մոսկվայի և Ռոջ Ռուսիայի Պատրիարք Ալեքսի 2-րդը նշել է «Ռուսական ուղղափառ և Հայ առաքելական եկեղեցիների միջև ստեղծվել են ամենաբարիտրացիական հարաբերություններ, մենք պատկանում ենք ուղղափառ այն ժողովուրդների միևնույն ընտանիքին, ովքեր աստիճանաբար վերադառնում են քրիստոնեական հավատքին»

Նշենք, որ որոշ հայ հոգևորականներ կրթություն են ստացել Մոսկվայի Հոգևոր ակադեմիայում Նրանց թվին է պատկանում նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն.

***Ռուսաստանում կա՞ն, արդյոք,
հայկական եկեղեցիներ***

Քանի որ ռուսական իշխանությունները միշտ բարյացակամ վերաբերմունք են ունեցել ՀԱԵ-ին, Ռուսաստանում շատ

կայական տաճարներ են եղել. ճիշտ է, դա չի վերաբերվում խորհրդային ժամանակաշրջանին, երբ ճնշման էին ենթարկվում բոլոր դավանանքները

Այսօր Ռուսաստանում կան հայկական 40 հոգևոր տաճարներ՝ Մոսկվայում, Կրասնոդարում, Նովոռոսիյսկում, Արմավիրում, Վլադիկավկազում, Սոչիում, Դոնի Ռոստովում, Աստրախանում, Վոլգոգրադում, Սարատովում, Պյատիգորսկում, Ստավրոպոլում և այլ քաղաքներում. Նորերը կառուցվում են Յարոսլավում, Նովոսիբիրսկում, Անապայում և Ռուսաստանի այլ քաղաքներում

Արդյոք Հայաստանում կա՞ն ուղղափառ եկեղեցիներ

Կան այդպիսի հինգ տաճարներ Դրանցից ավելի խոշորները գտնվում են Երևանում և Վանաձորում Մեկը ևս կկառուցվի Երևանում՝ Ռուսաստանի հայ համայնքի միջոցներով



ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊՍՏՄՈՒԹՅՈՒՆ-ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

Գեներալ Գավիդով /1784-1839/ գեներալ ու բանասերեղծ, 1812-1814 թթ. Հայրենական պատերազմի հերոս, սիրահարված էր Հայաստանին և գրել է.

*Արարսն է իշշում, Արարսն է իշշում
 Նրան լեռնային աղբյուրն է կրկնում,
 Ալագյազն էլ է ահունքը փակել,
 Գեղանիստ դաշտն է ննջում մշուշում:
 Բազմերանգ փքրուն այգիներից էլ
 Չնփյուռն է ծփում բույրով արևի,
 Եվ արծաթագոծ անպերից բարուն
 Լուսինն է գզվում լանջին Մասիսի:*

Հայաստանում Ռուսական ուղղափառ եկեղեցիների հաճախորդների թիվը մոտ մեկ հազար մարդ է՝

**Կարո՞ղ եմ, արդյոք, ուղղափառները
եկեղեցական ծեսերը կատարել հայկական
հոգևոր փաճարներում, իսկ հայերը՝ ռուսական**

Այո, հաշվի առնելով մեր եկեղեցիների հոգևոր մոտիկությունը և Հայ առաքելական եկեղեցու հետ Ռուսական ուղղափառ եկեղեցու փոխադարձ համաձայնությամբ մեր ժողովուրդները կարող են փոխադարձ կնունքներ, հաղորդություններ կատարել և եկեղեցական խոստովանություններ իրականացնել, միասին նշել սուրբ տոները



ՌՌՍԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԱՏՄԱՌԹՅՈՒՆ-ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ


**Սերգեյ Գլինկա /1776-1842/ Պուշկինի զինակիցը Հայաստանին է
նվիրել հեղինակությունը**

Երկրի և մարդու վերածննդի

Երկրորդ օրրան,

Թոշում եմ հոգով դեպի քեզ,

Ուզում եմ ապրել քո հիշողությամբ:



ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ԴԱՇԱՐՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 6. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԸ

Պատմում է բյուջեի և քաղաքացիների եկամուտների մասին, խորհրդային տարիներին տնտեսության հիմնական ճյուղերի և դրանց զարգացման մասին, արտաքին առևտրի մասին, այդ թվում՝ հայ-ռուսական, այն մասին, թե՛ կա՞, արդյոք, գործազրկություն: Ընդամենը 20 հարց ու պատասխան

Ինչպիսին է Հայաստանի պետական բյուջեն

ՀՀ 2006 թ. բյուջեն կազմել է մեկ միլիարդ դոլար: Բյուջեի եկամուտները՝ 874 միլիոն դոլար են, ծախսերը՝ 1,03 միլիարդ դոլար, ելումուտքի տարբերությունը՝ 156 միլիոն դոլար:

Սոցիալական ծախսերի համար հատկացվել է 120,2 միլիոն դոլար, կենսաթոշակների համար՝ 162,2 միլիոն դոլար, պաշտպանության ծախսերը՝ 150 միլիոն դոլար կամ համախառն ներքին արտադրանքի 3 տոկոսը: Արժեզրկումը նախատեսվում է 3 տոկոսի չափով:

Ինչպես է կոչվում փողային միավորը և փոխանակման արժույթի ինչ գին ունի ռուբլու նկատմամբ

Փողային միավորը դրամն է: Ռուսական ռուբլու փոխա-

ուսկման արժույթի գինը 2006 թ հոկտեմբերին 16,5 դրամ էր, մեկ դրամը՝ 6 կոպեկ

Քնակչության մեկ շնչին ընկնող եկամուտը

2005 թվականին մեկ քնակչին հասնող ՀՆԱ-ն /համախառն ներքին արտադրանքը/ կազմում էր 1667 դոլար Դրա և մյուս գուցանիչների Երկիր և մարդու վերածնման կայուն աճի շնորհիվ Հայաստանի Հանրապետությունը ցածր եկամուտ ունեցող երկրների խմբից տեղափոխվեց միջին եկամուտներ ունեցողների խումբը Միջին ամսական անվանագնային աշխատավարձը 115 դոլար է:

Համեմատենք ցուցանիշները. մեկ շնչին ընկնող համախառն ներքին արտադրանքը և միջին աշխատավարձը Վրաստանում 1356 և 50 դոլար է, Ադրբեջանում՝ 1548 և 139 դոլար, Ռուսաստանում՝ 5364 և 304 դոլար:

Ինչպես է զարգանում Հայաստանի փնտրեսությունը

Վերջին տարիներին տեղի է ունենում ՀՆԱ-ի աճ 2005 թվականին՝ 2004 թ. համեմատությամբ այն աճել է 13,9 տոկոսով և կազմել 5 միլիարդ դոլար. Արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 7,5 տոկոսով և կազմել 1,5 միլիարդ դոլար Գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճը 9,1 տոկոս էր և կազմել է 1,4 միլիարդ դոլար՝

Որոնք են արդյունաբերության առաջադարձ ճյուղերը

Առավել կարևոր ճյուղերն են՝ էլեկտրատեղակայան /6,5

միլիարդ կվտ/, շինարարությունը և շինանյութերի արտադրությունը, գունավոր մետաղների արտադրությունը, քիմիական արդյունաբերությունը, ոսկերչական արտադրանքը, մեքենաշինության որոշ տեսակներ /մասնավորապես, էլեկտրագեներատորների արտադրությունը/, ուղղակի էլեկտրոնիկական, թեթև ու սննդի արդյունաբերությունը, այդ թվում՝ գինու-կոնյակի արտադրությունը/ուչ միայն Հայաստանում այդքան հարգված այդ արտադրանքի զարգացման մասին՝ նրա բազմատեսակության առումով, պատմվում է առանձին - տես հավելվածը/ Խրախուսվում է արտադրության բարձր տեխնոլոգիական ճյուղերի զարգացումը, այդ նպատակով զգալի գիտական բազայի օգտագործումը: Չարգանում է զբոսաշրջիկությունը

Ինչպես էր զարգանում արդյունաբերությունը խորհրդային ժամանակներում

1921-ից մինչև 1980 թվականը արդյունաբերության համախառն արտադրանքը ավելացել էր 390 անգամ՝ նախ և առաջ միութենական երկրի բյուջեի օգնությամբ միջին և խոշոր նշանակության արդյունաբերություն ստեղծելու հաշվին

Դրա շնորհիվ ստեղծվեցին էլեկտրատեխնիկական և էներգետիկ մեքենաշինության, հաստոցաշինական, սարքաշինա-



ՌՌԻՍՍՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԵՏՄՈՒԹՅՈՒՆ-ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ
1849 թ. ստեղծվել է Էրիվանի գավառը, բայց, ցամաք, հայերը լիակատար ինքնավարություն չպահպան: Դարի կեսերին հայ շեռնարկարները առանցին հռանդով չգտնում էին զնայի Ռուսաստան:

կան, հանքային պարարտանյութերի, ժամացույցների արտադրության և այլ ձեռնարկություններ. Առաջատար ճյուղեր դարձան էլեկտրաէներգետիկան /1913 թ ` 5 միլիոն կվտ/ժ, 1980 թ ` 13,5 միլիարդ/, սպիտակեղենի և տրիկոտաժե վերնազգեստի արտադրությունը /1940 թ ` 3 միլիոն հատ, 1980 թ ` 83 միլիոն /, կոշկեղենի արտադրությունը /1940 թ ` 900 հազար գույգ, 1980 թ 13,8 միլիոն/ և այլն

Ինչ դեր ունի գյուղատնտեսությունը

Այժմ ՀՆԱ-ում գյուղատնտեսության բաժինը 28 տոկոս է Այդ ճյուղում զբաղված է 545 հազար մարդ Գյուղատնտեսական հողատարածությունները կազմում են 1387 հազար հեկտար Բուսաբուծության բաժինը 52 տոկոս է, անասնաբուծությանը` 48 տոկոս Հիմնական մշակաբույսերն են` բանջարաբուստանային, կարտոֆիլի, խաղողի և մրգատու ճյուղերը. Անասնաբուծությունը մասնագիտացվում է կաթնեղենի-մսեղենի և հատկապես ոչխարաբուծության /տարածված է լեռնային շրջաններում/ ուղղությամբ

Ինչպես էր զարգանում գյուղատնտեսությունը

խորհրդային ժամանակներում

Ագրարային ճյուղի համախառն արտադրանքը 1940 թվականից մինչև 1980 թ. աճել էր 4,6 անգամ Օրինակ, խաղողի բերքահավաքը 1940 թ 66 հազար տոննա էր, 1980 թ ` 206 հազար տոննա, մսի արտադրանքը 1940 թ. 23 հազար տոննա էր, 1980 թ ` 96 հազար տոննա, կաթի մթերումը 1940 թ 170 հազար տոննա էր, 1980 թ.` 488 հազար տոննա`

քիմիական արտադրանք, որոշ սննդամթերք ու սպառման ապրանքներ, այդ թվում՝ մարդատար ավտոմեքենաներ

Որ երկրների հետ է կապված Հայաստանի առևտուրը

Հիմնական առևտրական գործընկերը Ռուսաստանն է /այս թեմայի շարադրանքը՝ 10-րդ գլխում/ և ԱՊՀ երկրները /2005 թ. նրանց բաժին է ընկել ամբողջ շրջանառության 41,2 տոկոսը/։ Չգալի առևտուր է կատարվում Իսրայելի /շրջանառությունը՝ 265,7 միլիոն դոլար/, Բելգիայի /253,5 միլիոն դոլար/, ԱՄՆ-ի /157,6 միլիոն դոլար/ հետ Պետք է հաշվի առնել նաև Վրաստանի և Իրանի միջոցով թուրքական ապրանքների միջնորդավորված ներմուծումը, որը, ըստ փորձագետների գնահատման, համադրվում է ռուս-հայկական ապրանքափոխանակության ծավալի հետ

Մե՞ծ են, արդյոք, Հայաստանի արտաքին պարտքերը

2006 թ արտաքին պետական պարտքը 1,216 միլիոն դոլար էր, բնակչության մեկ շնչին՝ մոտավորապես 405 դոլար Պարտքի մեջ մտնում է 983 միլիոն դոլար՝ Համաշխարհային բանկին և Միջազգային արժութային հիմնադրամին։ 2006 թ



ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԱՏՄԻՑՅՈՒՆ-ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

Ռուս գրականության քարգմանիչներից էր Մ. Նալբանդյանը։ Նա քարգմանել է Պուշկինի «Կովկասի գերին»-ից «Չերքեսական երգը» Լեոնովի «Մարգարին», «Պաղեսպինի ճյուղը», «Վենը»

1870 թ. Հայաստանում վերացվեց նորարարությունը։

1899թ. ավարտվել է Թիֆլիս-Ալեքսանդրոպոլ-Կարս երկաթուղու, իսկ 1901թ.՝ Երևան-Նախիջևան-Չուլֆա երկաթուղու կառուցումը։

**Երկրի տնտեսության մեջ ինչ
դեր ունի գրոսաշրջիկությունը**

Ջրոսաշրջիկության համար գրավիչ հանգամանք է բնական ու մշակութային-պատմական տեսարժան վայրերի բազմազանությունը. Դրա զարգացմանը սկսել է հատկացվել մեծ ուշադրություն: Կառուցվում են հյուրանոցներ ու հանգստավայրեր, ստեղծվում է պատշաճ ինֆրահամակարգ, վերականգնվում են պատմական հուշարձանները և այլն.

**Արդարքին հանգամանքները, արդյոք,
ազդո՞ւմ են Հայաստանի տնտեսության վրա**

Դեպի ծով ելքի բացակայությունը, քաղաքական պատճառներից ստեղծված փոխադրամիջոցային շրջափակումը նախ և առաջ դժվարացնում են տնտեսության արդյունավետ զարգացումը. Այսպես, եթե անցյալ դարի 80-ական թվականների կեսերին արդյունաբերության բաժինը համախառն ներքին արտադրանքում կազմում էր մոտ 2/3-ը, ապա այժմ այն նվազել է մինչև մոտ 1/3-ը՝

Տնտեսության մեջ մեծացել է փոխադրման ցածր ծախսեր պահանջող ճյուղերի, օրինակ, ոսկերչական իրերի բաժինը Աճել է գյուղատնտեսության բաժինը, քանի որ սկսել են քիչ գնել ներմուծվող մթերքները. Ամրապնդվում է ծառայությունների ոլորտը:

**Հարո՞ւստ է, արդյոք, Հայաստանը
օգտակար հանածոներով**

Հայաստանն այնքան էլ հարուստ չէ օգտակար հանա-

ծոներով: Վառելանյութերից ունի ոչ մեծ քանակությամբ ամ-խի և այրվող թերթաքարերի հանքավայրեր: Բայց կարևոր է նշել պղնձի և պղնձամուլիբդենային հանքավայրերի առկայությունը: Շահագործվում են ոսկու և կիսամետաղային հանքաքարերի /ցինկի, արճիճի, մուլիբդենի, զուգահեռ՝ մետաղների՝ արծաթի, ռենիումի, կադմիումի, սելենիումի/ հանքավայրերը:

Հայտնաբերվել են նաև նեֆելինային սիենիտներ /հումք ալյումինի համար/, երկաթի հանքավայրեր

Մեծ նշանակություն ունեն շինանյութերը՝ տուֆը /պաշարները՝ 3 միլիարդ խոր մ/, բազալտը, անդեզիտը, կրաքարը, մարմարը, պեմզան, պեռլիտը, գրանիտը, կավը, օբսիդիանը: Ընդերքը հարուստ է նաև կերակրաղի պաշարներով:

Չրային պաշարները. որքան են դրանք

Վեց մեծ գետերի՝ Դեբեդի, Ախուրյանի, Մեծամորի, Հրազդանի, Արփայի և Որոտանի միջին տարեկան հոսքը կազմում է ավելի քան 500 միլիոն խոր մ: Այն նպատակահարմար օգտագործելու համար ունեն 20-ից ավելի ջրամբարներ՝ մոտ մեկ միլիարդ խոր.մ ծավալով, և ջրանցքների ցանց:

Լեռնային լճերի ջրապաշարը մոտ 39,3 միլիարդ խոր մ է

Հայերի կողմից սիրված Սևանա լիճն ընդգրկում է 32 մլրդ խոր մ ջուր, որն ապահովում է վեց հիդրոէլեկտրակայաններով սանդղաջրվեժի աշխատանքը

Խմելու ջրի զգալի պաշարներ կան ստորգետնյա ջրամբարներում /գրեթե 50 մլրդ խոր մ/ և ամենից առաջ Արարատյան ջրամբարներում /մոտ 30 մլրդ.խոր.մ/ Այդ արտեզյան ջրե-

վերջում աշխատանք փնտրող ցուցակագրված անձանց ընդհանուր թիվը կազմում էր 120,9 հազար մարդ Գործազուրկի կարգավիճակ է ստացել 89 հազար մարդ՝ Ներկայումս Հայաստանից մեկնում են մոտ 50-60 հազար մարդ, որը բնորոշ է աշխատաձեռքերի ավելցուկ ունեցող երկրներին

Հիմնականում մեկնում են միջին և բարձրագույն կրթությանը 18-55 տարեկան անձինք

ՉԼՈՒԽ 7. ՊԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Պատմում է այբուբենի ստեղծման մասին, Պիտոթյունների ակադեմիայի, կրթության և դրա արդի առանձնահատկությունների մասին, այն մասին, թե որ գիտական հիմնարկներն են դարձել ուսաստանյան:

Ընդամենը 13 հարց ու պատասխան

Երբ է ստեղծվել հայկական այբուբենը

և ով է այն ստեղծել

Հայկական այբուբենի ծննդյան թիվը մթ 405 թվականն է. Մինչ այդ պետական կարիքներին ծառայում էին հունարենը և արամեերենը, մթ. 3-4-րդ դարերում դրանց ավելացան սիրիական ու պարսկական լեզուները

Այբուբենի ստեղծողը Մեսրոպ Մաշտոցն է /360-406թթ /Նա ծառայում էր թագավորական արքունիքում, տիրապետում էր մի



ՈՌԻՍԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ԽՈՍԹ ԵՎ ՊՈՐԾ

1914 թ.-ից 200 հարցեր հայ գործադրվել են Պիտոթյունների դեմ մղվող պայքարագնում կոմիտեի համար: Միայն Կոմիտայան մահապարտ կոմիտե էր 5 հրաչգային գործարարակ: Հռչակ չեղբ քերեցին տուսական քանակի գեներալ Ա.Օզանյանի, Գրոյի, Համազասպի, Քեռու, Արդուրյանի և Կարմիր քանակի ապագա խոշոր գործարար Հայի Բժշկյանի /Գայի/ ջոկապները:

րանի լեզուների և Կաթողիկոս Սահակ Պարթևի ու Վռամշապուհ թագավորի օգնությամբ մանրակրկիտ վերլուծության է ենթարկել հայոց լեզվի հնչունակագնությունը և մշակել տառերի եզակի համակարգ: Մինչև այժմ հայերը անփոփոխ օգտագործում են նրա ստեղծած 36 տառերը Եվ միայն 12-րդ դարի վերջերից դրանց ավելացել են Օ և Ֆ տառերը, իսկ 14-15-րդ դարերից եվ (և)-ը, որն արտացոլում է լեզվի զարգացումը 1,5 հազար տարվա ընթացքում

Գրերի ականավոր ստեղծողին ՀԱԵ-ն դասել է սրբերի շարքը

Երբ են հայրնվել առաջին հայերեն գրավոր աղբյուրները

Դա տեղի է ունեցել այբուբենի ստեղծումից անմիջապես հետո Այն հնարավորություն է տվել ստեղծելու այնպիսի հեղինակների հիասքանչ պատմագրական աշխատությունները, ինչպիսիք են Կորյունը, Ազաթանգեղոսը, Փավստոս Բուզանդյու, Եղիշեն, Ղազար Փարպեցին, ինչպես նաև Մովսես Խորենացին, որին կոչում են «քերթողահայր» Հայտնվեցին աստվածաբանական-փիլիսոփայական և գիտական ստեղծագործություններ, որոնք պատկանում են այբուբենն ստեղծող Մեսրոպ Մաշտոցի, ինչպես նաև Եզնիկ Կողբացու, Դավիթ Անկաղթի և այլ հեղինակների գրչին

Ինչպես են հայերը կրթություն չեռք բերել խորհրդային ժամանակաշրջանում

1897 թ գրագետ էր 9-49 տարեկան բնակչության միայն 9,2 տոկոսը Նույնիսկ 1914 թ. չկար ոչ մի բուհ.

նախկին պարտադիր առարկաներ Բարձրագույն կրթության ոլորտում կողմնորոշում տրվեց մասնավոր բուհերին

Բայց 1997 թ. սկսեց փոխվել կրթական քաղաքականությունը Հաստատվեց պետական դպրոցներում անվճար միջնակարգ կրթության իրավունքը և հատկացումները կրթության համար սկսեցին անշեղորեն աճել՝ 2006 թվականին պետական հատկացումները կազմում էին 123,6 միլիոն դոլար /2004թ` 89 մլն դոլար/ Աճեց նաև ուսուցիչների աշխատավարձը՝ 70-ից հասնելով 116 դոլարի

ՀՀ-ն, ըստ միջազգային ստանդարտների, ունի կրթության բարձր մակարդակ և ՄԱԿ-ի տարեկան զեկուցագրերում ավելի բարձր տեղ է զբաղում հարևանների համեմատությամբ ՀՀ-ն մասնակցում է Բոլոնիայի գործընթացին, որի համաձայն մինչև 2010 թ պետք է ավարտվի ազգային կրթական համակարգերի ներգրավումն ընդհանուր եվրոպական կրթական ոլորտի մեջ՝ ՀՀ-ում իրականացվել է լիակատար անցումը եվրոպական ստանդարտներին

Ինչպիսին է միջնակարգ կրթության համակարգը

Այստեղ գործում է միջնակարգ կրթության եռաստիճան համակարգ՝ տարրական դպրոց /1-4 դասարան/, միջնակարգ դպրոց /5-9 դասարան/ և ավագ դպրոց /10-11 դասարան/ 2006 թվականից ներդրվում է 12-ամյա համակարգը

Երկրում գործում են 1365 հանրակրթական դպրոցներ, 52 մասնագիտացված և 27 պրոֆտեխուսումնարաններ, 88 քոլեջներ, 52 արտադպրոցական հիմնարկներ: Արտոնություններ ու փոխհատուցումներ են նախատեսված դասագրքերի, ու-

սումնական ձեռնարկների և պիտույքների ձեռքբերման համար

ՀՀ դպրոցականները բնական ու տեխնիկական գիտությունների գծով անցկացվող ամենամյա միջազգային ստուգատեսների մշտական մասնակիցներ են Հաղթողներն ու մրցանակակիրները արժանանում են ընդունելության ՀՀ Նախագահի և վարչապետի կողմից

Այսուհանդերձ, անհանգստություն կա, որ ոչ բոլոր երեխաներն են դպրոց հաճախում՝ ամենից առաջ աղքատության պատճառով.

Ինչպիսին է բարձրագույն կրթության համակարգը

ՀՀ-ում հայտարարված է, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական բարձրագույն և այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում մրցույթի հիման վրա անվճար կրթություն ստանալու իրավունք

ՀՀ-ում կա 17 պետական բուհ, պետական վավերագիր ստացած ոչ պետական 28 և վավերագիր չստացած ոչ պետա-



ՈՌԻՍՄՍԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԵՏՄԻՔՅՈՒՆ-ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

Վալերի Թրյուսովը /1873-1924/ դարձել էր Հայաստանի մշակույթի գերազանց գիտակիր: «Հայաստանն ուսումնասիրելու ընթացքում ես գիրա վեհ, հոգեկան ուրախությունների անսպաս աղբյուր, որպես պատմագետ, գիտության մարդ ես Հայաստանի պատմության մեջ փնտա մի ամբողջ ինքնուրույն աշխարհ, որտեղ հազարավոր սանձաձեփաբրերի, բարդ հարցեր սուսբացրին գիտական հերարքրքրասիրություն, իսկ որպես բանասերեղձ, սրվեարագետ ես Հայաստանի բնաբերության մեջ փնտա գեղեցկության նույնպիսի ինքնուրույն աշխարհ, նախկինում ինչ անհայտ մի փնեզերք, որտեղ փայլել ու լու-

Արդյոք, կա՞նք նուսաց լեզվով ուսուցման դպրոցներ

Բյուջետային ուսական դպրոցներ թույլատրվում են միայն ուսաների հոծ բնակեցման վայրերում, իսկ դա ընդամենը 3 գյուղ է

Մինևույն ժամանակ գործում են ուսաց լեզուն խորապես ուսուցանող 65 դպրոցներ և 50 ուսական դասարաններ, որտեղ անցնում են նաև ուս գրականություն և Ռուսաստանի պատմություն

Երևանում ուսերեն դասավանդող մի շարք առաջնակարգ միջնակարգ դպրոցներ վաղուց կրում են ուս մեծ գրողների ու բանաստեղծների անունները, ինչպիսիք են Ա Պուշկինը, Ն Գոգոլը, Մ Գորկին, Ա Չեխովը, Վ Մայակովսկին

Հնարավո՞ր է բարձրագույն կրթություն ստանալ ուսերեն լեզվով

1999 թվականին Երևանում բացվել է Ռուս-հայկական /սլավոնական/ համալսարան՝ երկու երկրների համատեղ գոր-



ՌՌՍԱՍՏԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

1921 թ. ավերակների վերականգնման և սովի հաղթահարման համար Հայաստանին փրվել է 3,5 միլիոն սուրբի ոսկով, հազուադեպ հոշիկ, դեղորայք, զանազան գույք և սերմացու ցորեն:

1922թ. Անդրկովկասյան Խեղհրացիայի պապիկրակության մասնակցությամբ որոշում ընդունվեց ԽՍՀՄ-ի սփյուռքում մասին:

1928թ.-1932թ. առաջին հնգամյակի ընթացքում շարք են մտել 18 չեռնարկություններ, այդ թվում 3 հիդրոէլեկտրակայան, ապահովվել է անցումը պարբապիր փարբակյան ուսուցման /1926 թ ՀՀ-ում կային 200 հազար անգրագիտներ/:

ծունեությամբ 6 ֆակուլտետներում սովորում է 2000 ուսանող

Վաղերի Բրյուսովի անվան պետական լեզվագիտական համալսարանը, որը 2005 թ նշեց իր 70-ամյակը, նույնպես պատրաստում է ռուսաց լեզվի ու գրականության մասնագետներ

Դասավանդումը ռուսերեն է տարվում նաև Ռուսաստանի բուհերի՝ Հայաստանում գործող 7 մասնաճյուղերում և ուսումնական կետերում

Հայաստանի գիտությունների ակադեմիան

1943 թ , ֆաշիզմի դեմ մղվող պատերազմի ամենաթեժ պահին, միութենական ու հանրապետական իշխանությունները որոշում կայացրին Հայաստանի Գիտությունների ակադեմիա ստեղծելու մասին /1935 թ. ստեղծված ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի մասնաճյուղի հիման վրա/

Այժմ դա Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան է /ԳԱԱ/ Դա ինքնավար գիտական կազմակերպություն է, որն իր կազմում միավորում է ակադեմիայի անդամներին, ինչպես նաև ակադեմիայի գիտական հիմնարկների, կազմակերպությունների և ձեռնարկությունների բոլոր գիտական աշխատակիցներին՝ ԳԱ-ն իրականացնում է բազմազան հիմնարար ու կիրառական հետազոտություններ և հանդիսանում է Լրկրի իշխանության պաշտոնական գիտական խորհրդատուն. Ֆինանսավորման հիմնական աղբյուրը պետական բյուջեն է, լրացուցիչ աղբյուրներ են հիմնադրամների և պատվիրատուների միջոցները

ԳԱ-ի կազմը ավելի քան 4500 մարդ է, այդ թվում՝ 99-ը ակադեմիայի իսկական անդամներ են, 20-ը թղթակից-ան-

դամներ, 335-ը՝ գիտության դոկտորներ, և 1156-ը՝ գիտության թեկնածուներ ԳԱ անդամների ընտրությունները տեղի են ունենում ընդհանուր ժողովում, որպես կանոն, 3 տարին մեկ անգամ.

ԳԱ նախագահությունը ղեկավարում է ԳԱ նախագահը՝ ի դեմս միջազգային համբավ վայելող ռադիոֆիզիկոս Ռ. Մ. Մարտիրոսյանի

Հայերից ովքեր են հայրկապես փառքի արժանացել գիտության ասպարեզում

Եթե հաշվի առնենք միայն 20-րդ դարի գիտական գործիչներին, հարյուրավոր ականավոր գիտնականներից ու կոնստրուկտորներից հայերը հատուկ հպարտությամբ են նշում ակադեմիկոսներ, այդ թվում՝ ԽՍՀՄ ԳԱ-ից և այժմյան ՌԳԱ-ից, համամիութենական ու հանրապետական բարձրագույն մրցանակների դափնեկիրներ՝ Բանահավաք Մ Խ Աբելյանին, ատոմագետ-ֆիզիկոս Ա Ի Ալիխանովին, աստղաֆիզիկոս Վ.Հ Համբարձումյանին, պատմագետ Բ Ն.Առաքելյանին, միջազգային դիվանագետ Ա Ա Հարությունյանին, նեյրովիրաբույժ Ա.Ի Հարությունյանին, աշխարհագետ Ա Վ.Բաղդասարյանին, լեզվագետ Ս Գ Բարխուդարովին, ֆիզիկոս Ս Ս Գրիգորյանին, քիմիկոս Ի.Լ. Կնունյանցին, ազգագրագետ Ս.Գ Լիսիցյանին, երկրաբան Ա Լ Մազլումովին, մաթեմատիկոս Ս Ն.Մերգելյանին, ավիակոնստրուկտոր Ա.Ի Միկոյանին, էլեկտրոնիկայի մասնագետ Գ.Ե Հովսեփյանին, արևելագետ Ի Ա Օրբելուն, ֆիզիոլոգ Լ.Ա Օրբելուն, կլիմայագետ Ի Պ

Պողոսյանին, քիոքիմիկոս Սասիկյանին, բուսաբան Ա Լ Թախտաջյանին, փիլիսոփա Վ Կ Չալոյանին, լատերագետ Լ Ա Խալաթյանին

Ինչպես է այժմ զարգանում գիտությունը

ԽՍՀՄ-ի անկումից հետո Հայաստանի գիտությունը, ինչպես որ ԱՊՀ մյուս երկրներում, կանգնեց խիստ դժվարին կացության առաջ Ֆինանսավորման բացակայության պատճառով փակվեցին գիտական հետազոտությունների զգալի ոլորտներ, շատ գիտնականներ ստիպված արտագաղթեցին՝

Վերջին տարիներին պետական ֆինանսավորումն սկսել է աճել՝ 2003թ. 6,5 միլիոն դոլար, 2006թ՝ 11,3 միլիոն դոլար Կոմիսիոն ֆինանսավորման օգնությամբ զգալիորեն զար-



ՈՌԻՍԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

1934 թ. Հայկական պարզախոսությունը մասնահցում է ԽՍՀՄ Գրողների միության արեղծմանը: Մ. Գորկին/1868-1936/ կոչում էր «Մենք պետք է այնպես անենք, որ հայ գրողներն իմանան, քե՛ն Մոսկվայում ինչ են անում, իսկ մոսկովյան գրողներն իմանան, քե՛ն ինչ են անում Հայաստանում... Ինչ բվում է, որ ներքին միասնության շահերից, ընդհանուր շահերից և, վերջապես, հենց գրողների շահերից կլնելով պետք է մրաժծել, քե՛ մենք ինչպես սկսենք ծանրանալ միմյանց հետ...» Մեզ բոլորիս անհրաժեշտ է միավորվել հանուն ընդհանուր մշակութային աշխարհների:

Հայաստանը մեծ ուշադրություն էր հարկացնում ռուս գրականության քարգնանությանը: 1961-1974թթ. հայերեն հրատարակվել է ավելի քան 8 հազար գիրք, այդ թվում՝ Եսենին, Մայակովսկի, Շոլոխով, Ա.Տոլստոյ, Զադեն, Տվարդովսկի, Միմոնով, Պաուստովսկի, Տիտոնով և շատ այլոք:

գանում են «բարձր տեխնոլոգիաների կենտրոնները», օրինակ, 2004 թ դրանք բերեցին 50 միլիոն դոլարի եկամուտ

Որ գիտություններն են առավել զարգացած


Հայաստանում զարգացած են պատմությունը, քաղաքագիտությունը, սոցիոլոգիան, լեզվագիտությունը, հնէաբանությունը Երկրում գործում է 9 հասարակագիտական հետազոտական ինստիտուտ

14 գիտական ինստիտուտներ աշխատանքներ են տանում ֆիզիկայի ու մաթեմատիկայի ոլորտում, իսկ 16-ը՝ բնական գիտությունների գծով

Գիտության ոլորտում կա՞, արդյոք,

Ռուսաստանյան սեփականություն

2002 թ Հայաստանի պետական պարտքերը մարելու հաշվին Ռուսաստանի սեփականությանն անցան Երևանի «Նյութագիտության գիտահետազոտական ինստիտուտը», «Երևանի Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը», «Կառավարման ավտոմատացված համակարգերի Երևանի գիտահետազոտական ինստիտուտը», ինչպես նաև «Մարս» գիտաարտադրական միավորումը, որն զբաղվում է պաշտպանական ծրագրերով.



ՄՇԱԿՈՒՅԹԸ, ԱՐԿԵՍՅՈՒՄ ԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 8. ՄՇԱԿՈՒՅԹԸ, ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պատմում է հայ մշակույթի ակունքների, նրա առանձնահատկությունների մասին, գրականության ու արվեստների զարգացման մասին, այդ թվում՝ խորհրդային ժամանակներում, մամուլի մասին, սիյուրքահայության հետ կապերի և այն մասին, թե կարդո՞ւմ են ռուսերեն:

Ընդամենը 25 հարց ու պատասխան

Որոնք են այդ հնագույն երկրի մշակույթի աղբյուրները

Հնագույն ժամանակներից հայ ժողովուրդը հոգատարությամբ պահպանել է բազմաթիվ գրույցներ ու առասպելներ Դրանցում արտահայտվել ու պատկերվել է ժողովրդի հոգևոր աշխարհը /մինչքրիստոնեական հավատալիքները և ժողովրդական սովորույթները/: Այդ ժողովրդի զարգացման դեռ առաջին փուլերում բանավոր ժողովրդական ստեղծագործությունը յուրօրինակ էր ու հարուստ նախահիմք է դարձել մշակույթի հետագա զարգացման համար /բազմաբղետ դիցաբանության երեք նմուշներ գետնոված են «Հեռավոր անցյալի մասունքներ. » խորագրով/

Արդյոք, առասպելներում արտացոլվե՞լ

է հայոց պայմանությունը

Այո՝ Օրինակ, առասպելներ են պահպանվել հայ ժողովրդի նախահայր Հայկի մասին, Արա Գեղեցիկի և Շամիրամի,

հայոց առաջին թագավոր Պարույրի մասին

Օտարերկրյա տիրապետության դեմ հայերի պայքարը գեղարվեստական արտացոլում է գտել «Սասունցի Դավիթ» վիպերգությունում, որն ստեղծվել է 1050 տարի առաջ

Արդյո՞ք, հին հայերն ընդունում էին այլոց անվանումները

Հետաքրքիր է, որ հայերը հիանալի գիտեին Հին Հունաստանի մշակույթը: Դա ճարտարապետության մեջ երևում է այնպիսի մի գլուխգործոցում, ինչպիսին Գառնիի տաճարն է, որը կառուցվել է մ թ 1-ին դարում Այն այժմ վերականգնվել է. Պատմիչների աշխատություններում վկայություններ են պահպանվել քարե ու մետաղե հոյակապ արձանների վերաբերյալ, որոնց մի մասը կերտել են հույները, մյուսը՝ հայերը-հույն վարպետների ազդեցությամբ. Հույն դերասանները հանդես էին գալիս Հայաստանի առաջին թատրոնում, որն ստեղծել էր Տիգրան Բ Մեծ թագավորը /մ.թ ա 95-56թթ /, և նրա որդու՝ Արտավազդ Բ թագավորի /մ թ.ա. 55-34թթ/ թատրոնում. Պահպանվել են նույնիսկ այսպիսի վկայություններ հույն դերասաններից մեկին անվանում էին Յասոն, և նա մ թ ա. 53 թվականին Արտաշատ մայրաքաղաքում կատարել է Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգության գլխավոր դերը

Ում կարելի է համարել Հայաստանի թատերագիրը

Ըստ հավանականության, առաջին թատերագիրը համարվում է վերոհիշյալ Արտավազդ Բ թագավորը

Երբ է առաջացել գեղարվեստական գրականությունը

Գեղարվեստական գրականությունն առաջացել է 10-րդ

յաստանի պատմության մեջ առաջին ծավալուն վեպը՝ «Վերք Հայաստանին». Նրանում հայերը կարդացին հիրավի պատվիրան-ասույթներ. «Օրհնվի էն սիաթը, որ ուսի օրհնված ոտը Հայոց լիս աշխարհը մտավ»

Հայ քանդակագործության առանձնահատկությունները

Ֆեոդալական ժամանակաշրջանի քանդակագործությունը կապված էր բացառապես ճարտարապետական հուշարձանների հետ Դա առաջին հերթին յուրօրինակ տիպի տապանաքարերն են՝ խաչքարերը, ուղղահայաց սալաքարի տեսքով՝ կենտրոնում զարդաքանդակ խաչի փորագրությամբ Շենքերի վրա նախշավոր հարթաքանդակները և բարձրաքանդակները հանդիպում են դեռևս 7-րդ դարերում։ Խիստ տարածված էր փորագրությունը քարի ու փայտի վրա՝ ձուլածո և ծեփածո զարդերով /գաջ/ Քանդակագործության նշանակալից հուշարձաններից մեկը՝ Գագիկ Ա թագավորի արձանը, ձեռքին՝ Անիի եկեղեցու մակետով /11-րդ դար/ գտնվել է Անի քաղաքի պեղումների ժամանակ /այդ տարածքը այժմ գտնվում է Թուրքիայում/

Հայկական նոր քանդակագործությունն ի հայտ է եկել 19-րդ դարի 2-րդ կեսին Դրա ցայտուն ներկայացուցիչներն են Ա Տեր-Մարությանը և Մ Միքայելյանը

Երբ է ի հայտ եկել հայկական գեղանկարչությունը

Այն հանդես է եկել միջին դարերում, որմնանկարների և խճանկարների ձևով։ Եկեղեցական նկարազարդումների պահպանված մնացորդները ակնառու վկայում են գեղանկարիչների բարձր վարպետության մասին Օրինակ, Աղթամարի տաճարի կոմպոզիցիաները դրսևորում են վիթխարի վեհակեր-

Ռուսաստանում /Պետերբուրգ/ առաջին հայ տպարանի հիմնադիրը ռուսական հպատակություն ընդունած, հնդկաստանցի հայ Գրիգոր Խալդարյանն էր: 1781-1789 թթ նա հայերեն լեզվով հրատարակեց 12 գիրք:

Երբ է ստեղծվել լրագրային գործը

Հայերեն առաջին պարբերական հրատարակությունը լույս է տեսել Մադրասում /Հնդկաստան/ 1794 թ.: Այն կոչվում էր «Ազդարար»:

Երբ է առաջացել հայ նոր գրականությունը

Դա տեղի է ունեցել 19-րդ դարի կեսերին՝ մշակույթի և առաջին հերթին, գեղանկարչության ու երաժշտության բուն զարգացման ընդհանուր հոսանքի հետ:

Նոր գրականության առավել կարկառուն ներկայացուցիչն էր Միքայել Նալբանդյանը /1829-1866թթ /. գրում էր բանաստեղծություններ, պոեմներ, արձակ, թարգմանել է Պուշկինին, Լերմոնտովին, Հայնեին, նամակագրություն ուներ Գերցենի, Օգարյովի, Բակունինի հետ:

19-րդ դարի աչքի ընկնող հայ բանաստեղծների շարքում են՝ Ղևոնդ Ալիշանը /1820-1901/, Ռաֆայել Պատկանյանը /1830-1892/, Սմբատ Շահազիզը /1840-1907/, Պետրոս Դուրյանը /1852-1872/, Հովհաննես Հովհաննիսյանը /1864-1929/, Հովհաննես Թումանյանը /1869-1923/, Ալեքսանդր Ծատուրյանը 1865-1917/ և արևմտահայ քնարերգու Սկրտիչ Պեշկեթաշլյանը /1828-1868/:

Արձակագիրների մեջ լայն հռչակ էին վայելում Բաֆֆին Հակոբ Մելիք-Հակոբյան / /1835-1888/, Պերճ Պոռշյանը /1832-1907/, Մուրացանը /Գրիգոր Տեր-Հովհաննիսյան / /1854-1908/,

Շիրվանգադեն /Ալեքսանդր Մովսիսյան/ /1858-1935/, Հակոբ Պարոնյանը 1842-1891/, Արփիար Արփիարյանը 1851-1908/, Վրդանես Փափագյանը /1866-1920/

Ինչպես է զարգացել քաղաքական արվեստը

19-րդ դարի կեսերին ստեղծվում են մշտական պրոֆեսիոնալ խմբեր Համբավ էին վայելում պատմական դրամաների և կենցաղային կատակերգությունների ժանրերը, բեմադրվում էին նաև համաշխարհային դասականների գլուխգործոցները:

Չնավորվեց տաղանդավոր դերասանների մի ամբողջ սերունդ՝ Մ.Ամերիկյան, Գ. Չմշկյան, Ա. Հրաչյա Մեծագույն հռչակ ձեռք բերեց Պետրոս Ադամյանը /1849-1891/: Նա ելույթ էր ունենում Թուրքիայում, Կովկասում, Պետերբուրգում և Կիևում Մեծ համբավ էին վայելում դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանը /1825-1912/, դերասան Հովհաննես Աբելյանը /1865-1936/, դերասանուհի Սիրանույշը /1857-1932/

Ինչպես էր շեղավորվում նոր գեղանկարչությունը

Բնապատկերային ժանրի նախահայրն է համարվում Գևորգ Բաշինջադյանը /1857-1925/. նկարիչներ Հակոբ Հովնաթանյանի/1806-1881/ և Ստրեփան Ներսիսյանի /1820-1884/ ստեղծագործություններում սկսում է ծաղկում ապրել դիմանկարային ժանրը Պատմական թեման մարմնավորվում էր Վարդգես Սուրենյանցի / 1860-1921/ գործերում: Աչքի էին ընկնում ծովանկարիչ Էմանվել Մահտեսյանը /1857-1908/ և կենցաղագիր Հարություն Շամշինյանը /1856-1914/:

Ռուսական ու հայկական գեղանկարչության գանձարանը մեծապես հարստացրել է Հովհաննես Այվազովսկին /1817-

ունի մեծն Կոմիտասը /1869-1935/ Նա ստեղծեց կոմպոզիտորների ազգային դպրոցը և հայկական երաժշտությունը հանեց համաշխարհային բեմահարթակ

Ինչպիսին էր Հայկական ԽՍՀ հրատարակչական բազան

Գրքի տպագրությունը 1914 թ. հրատարակվել է 257 գիրք՝ 80 հազար ընդհանուր տպաքանակով. 1987 թ՝ 1114 հրատարակություն՝ գրեթե 12 միլիոն տպաքանակով

Թերթերի միանվագ տպաքանակը 1914թ՝ 19 հազար օրինակ, 1987 թ.՝ 1 միլիոն 436 հազար օրինակ /92 անվանում/:

Հանդեսների թողարկումը. 1987 թ. միանվագ տպաքանակով՝ 1 միլիոն 256 հազար օրինակ.

Ինչպես էր զարգանում մշակույթը

խորհրդային ժամանակաշրջանում

Մշակույթի զգալի թվով նոր կենտրոններից աչքի են ընկնում 1921 թ. բացված Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնը, 1922 թ.՝ Ազգային գրադարանը, Խ Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը, 1923թ.՝ Կոնսերվատորիան, «Հայֆիլմը», 1926 թ՝ Ռադիոկենտրոնը, 1932 թ՝ Հայֆիլհարմոնիան, 1933 թ.՝ Ալ Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնը, 1936 թ՝ Պետական ակադեմիական երգչախումբը, 1957 թ.՝ Հեռուստատեսային կենտրոնը:

Հանրային գրադարանների թիվը 1914 թ.՝ 13, 1980 թ.՝ 1400:

Ինչպես էին հրատարակվում գրողները

Խորհրդային Հայաստանում

Գեղարվեստական գրականության 7378 անուն գիրք՝

ավելի քան 132 միլիոն օրինակ տպաքանակով, լույս է տեսել 1918-1987 թթ ընթացքում:

ԽՍՀՄ-ում իրականացվում էին, արդյոք, հայ գրողների թարգմանված հրատարակություններ

Օրինակ, 1987 թ միութենական ընթերցողը ծանոթացել է հայ հեղինակների 67 անուն գրքերի՝ 2,1 միլիոն օրինակ տպաքանակով

Հայաստանի գրողներից ովքեր էին հայրկապես հռչակված ԽՍՀՄ-ում

Չկար որևէ արժանավոր անուն, որի ստեղծագործությունը հայտնի չլիներ վիթխարի միութենական երկրում. Այն գրողների ցանկը, որոնց գրքերը կարելի է պատվիրել Ռուսաստանի գրադարաններում, տրված է «Հավելված» բաժնի գրքերի ցուցակում

Հայ մշակույթի գործիչներից առանձնապես ով էր հռչակված ԽՍՀՄ-ում

Հազարավոր փառահեղ անուններից որպես օրինակ թվում ենք հետևյալ գործիչներին՝

Կոմպոզիտորներ Արամ Խաչատրյան և Առնո Բաբաջանյան, երգիչներ Պավել Լիսիցիան, Ջարա Դոլուխանյան, Գոհար Գասպարյան, Տաթևիկ Սազանդարյան, դերասաններ՝ Վահրամ Փափազյան, Հրաչյա Ներսիսյան, Մետաքսյա Սիմոնյան, Մհեր /Ֆրունզիկ/ Մկրտչյան, Արմեն Ջիգարիսանյան, Սոս Սարգսյան, գեղանկարիչներ Մարտիրոս Սարյան, Հակոբ Կոջոյան, Դմիտրի Նալբանդյան, քանդակագործներ Եր-

վանդ Քոչար և Նիկոլայ Նիկողոսյան, ճարտարապետներ Ալեքսանդր Թամանյան և Կարո Հալաբյան, թատրոնի ռեժիսոր Հրաչյա Ղափլանյան

Նրանցից յուրաքանչյուրը ԽՍՀՄ-ում ստացել է Ժողովրդականի /դերասանի, նկարչի, ճարտարապետի/ կամ Պետական դափնեկրի կոչում, Լենինյան մրցանակներ և այլ պարգևներ

Ինչպես է զարգանում մշակույթը անկախություն չենք բերելուց հետո

Այսօր երկրում կա 16 պետական, 6 մասնավոր թատրոն, Երևանի քաղաքային վարչության 3 թատրոն, Երևանի պետական կրկեսը, 2 կինոստուդիա, 14 խոշոր գրադարան, որոնցից գլխավորը Հայաստանի Ազգային գրադարանն է /9 միլիոն գիրք/, 23 թանգարան և պատմամշակութային արգելոց Ակտիվ համերգային գործունեություն են ծավալում 16 պետական երաժշտական համույթներ.

Պատմության ու մշակույթի ասպարեզի մասնագետներ են պատրաստում 4 բուհեր, 2 քոլեջներ, 4 երաժշտական ուսումնարաններ, մեկ կինոգծանկարչական ուսումնարան, 2 միջնակարգ մասնագիտական դպրոցներ, ինչպես նաև գեղագիտական դաստիարակության կենտրոններ

Ինչպիսի սրեղծագործական

կազմակերպություններ կան Հայաստանում

Հայաստանում գործում է Գրողների միությունը /նախագահ՝ Լևոն Անանյան/, Նկարիչների միությունը /նախագահ՝ Կարեն Աղամյան/, Կոմպոզիտորների և երաժշտագետների

միությունը /նախագահ՝ Ռոբերտ Ամիրխանյան/, Լրագրողների միությունը /նախագահ՝ Աստղիկ Գևորգյան/, Կինեմատոգրաֆիստների միությունը /նախագահ՝ Ռուբեն Գևորգյանց/, Ճարտարապետների միությունը /նախագահ՝ Սկրտիչ Մինասյան/, Թատերական գործիչների միությունը /նախագահ՝ Երվանդ Ղազանչյան/, Կինոմեկնաբանների և կինոլրագրողների միությունը /նախագահ՝ Սուսաննա Հարությունյան/ և մի քանի այլ ստեղծագործական կազմակերպություններ

Գրողների միությունը մտնում է Գրողների միությունների միջազգային ընկերակցության մեջ /շտաբ-բնակարանը՝ Մոսկվայում/:

Հայաստանի զանգվածային տեղեկատվության միջոցները

Երկրում կա 20 տեղեկատվական գործակալություն . որանց թվում ենք «Արմեպրես» պետական տեղեկատվական գործակալությունը /խոշորագույնը/, «Նոյան տապան»-ը, «Արմինֆո»-ն, «Արքա»-ն, «Արագիլ»-ը, «Մեդիամաքս»-ը, «Պան Արմենիան նյուս»-ը. «Արկո» գործակալության հիմքի վրա բացվել են «Ռիա նովոստի» ներկայացուցչությունը և միջազգային տեղեկատվության «Նովոստի-Արմենիա» գործակալությունը:

Տպագրվում է մոտ 200 պարբերական հրատարակություն. Դրանցից ենք «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթը, «Հայոց աշխարհ»-ը, «Հայկական ժամանակ»-ը, «Երկրամաս»-ը, «Իրավունք»-ը, «Չորրորդ իշխանություն»-ը:

Գործում է 4 համազգային հեռուստատեսային ընկերակցություն՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության

ինչպես նաև «Ազգ» և «Առավոտ» թերթերի էլեկտրոնային տարբերակը, «Նոր ժամանակ» թերթի «Մոնիտոր ու» հավելվածը, «Լիտերատուրնայա Արմենիա» հանդեսը

Ռուսական պարբերական մամուլը ազատ է բաժանորդագրվելու և մանրածախ վաճառքի համար: Հրատարակվում է գեղարվեստական և մասնագիտական գրականություն Հանրապետական հեռուստակենտրոնի միջոցով տրվում են ՌՏՌ, ՕՌՏ, ՆՏՎ, ՏՎՑ, «ՌԵՆՏՎ» ռուսաստանյան հեռուստականալների, ինչպես նաև «Մայակ», «ԽԻՏ-ՖՄ», «Ռուսկոյե ռադիո», «Եվրոպա-պլուս» ռադիոալիքների հաղորդումները.

Հեռուստատեսության հանրային և մասնավոր ալիքների կանոնավոր կարգով ռուսերեն հաղորդումներ չկան, բայց գեղարվեստական կինոնկարների մի զգալի մասը հեռուստատեսությամբ ցուցադրվում է ռուսերեն:

Հայաստանում կա՞ն, արդյոք, ռուսական

մշակույթի կենտրոններ և կազմակերպություններ

Հայաստանում գոյություն ունեն ռուս հայրենակիցների ավելի քան 10 հասարակական կազմակերպություններ, դրանց թվում՝ «Ռոսիա», «ՕԴԱ», «Սլավյանսկի դոմ» և «Ռոսսիյանե» (ռուսաստանցիներ) կազմակերպությունները Նրանց հիմնական խնդիրը ռուսաց լեզվի կարգավիճակի պահպանումն ու բարձրացումն է, ռուսական դպրոցների ու դասարանների ստեղծումը, ռուսական մշակույթի ավանդույթների ու սովորույթների մատուցումն ու տարածումը, ինչպես նաև ռուս բնակչության իրավաբանական օգնության և իրավական պաշտպանության ապահովումը

Ռուսական մշակույթի «Հարմոնիա» միջազգային կենտրո-

նը կազմակերպում է համերգներ, գրական-գեղարվեստական կոմպոզիցիաներ և զանազան ընթերցումներ: Աշխատում է Ռուսական դրամատիկական թատրոնը /Երևանում/: Այն մեծ համբավ ունի ոչ միայն Հայաստանում, այլև ամեն տարի հյուրախաղերի է մեկնում Ռուսաստանի մարզերը

Հայաստանը, արդյոք, մշակութային

կապեր պահպանո՞ւմ է սփյուռքահայության հետ

Հայաստանը իրավապես համարվում է ամբողջ աշխարհի հայերի մշակութային ու կրթական կենտրոնը: Դրա համար օգտագործվում են բազում հնարավորություններ, այդ թվում՝ «Ոսկե ծիրան» /ծիրանը Հայաստանի խորհրդանիշերից մեկն է Լատիներեն այն կոչվում է «Արմենիակա»/, միջազգային կինոփառատոնը, երաժիշտ կատարողների Արամ Խաչատրյանի անվան մրցույթը, «Հայրենիք-սփյուռք» վեհաժողովը /3 տարին մեկ անգամ/, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական մշակութային փառատոնը /վերջին այդպիսի փառատոնին մասնակցել է 3 հազար մարդ 40 երկրներից՝ իրենց երգերով, պարերով և այլն/, համահայկական գրական վեհաժողովները և այլն: Համբավ են վայելում Համահայկական խաղերը, որոնք արժանացել են Միջազգային օլիմպիական կոմիտեի աջակցությանը

ԳԼՈՒԽ 9. ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊՈՐՏԸ

**Պատմում է հայկական սպորտի հանրահայտ նվաճումների մասին՝ սկսած հնագույն օլիմպիադաներից, ինչպես նաև արդի, աղթահարվող դժվարությունների մասին:
Ընդամենը 5 հարց ու պատասխան**

Ինչպիսի մարզական ավանդույթներով են հպարտանում հայերը

Ամենից առաջ Օլիմպիադաներում հազարամյա մասնակցությամբ: Այսպես, 281 թվականին, 265-րդ հին հունական օլիմպիական խաղերում /որտեղ մինչ այդ հաղթում էին միայն խաղերի տերերը՝ հույները/ ըմբշամարտի մրցումներում հաղթել է Հայաստանի Տրդատ Մեծ թագավորը Օլիմպիադաների պատմության մեջ 385 թ. 291-րդ խաղերում երկրորդ օտարերկրացի հաղթանակողը նորից հայ էր՝ Անոբի որդին, որը բոնցքամարտի վարպետ էր

Հաղթանակի ավանդույթները շարունակվել են մինչև այն ժամանակները, երբ Օլիմպիական խաղերը վերականգնվեցին. Դրանցում մրցահաղթողներ են դարձել ամենից առաջ խորհրդային ականավոր մարզիկները մարմնամարզիկներ Հրանտ Շահինյանը /երկու անգամ/, հայր ու որդի Ազարյան-

ները՝ Ալբերտը /3 անգամ/ և Էդուարդը, հնգամարտիկ Իգոր Նովիկովը /երկու անգամ/, բռնցքամարտիկ Վլադիմիր Ենգիբարյանը, հոկեյիստներ Գրիգորի Մկրտչյանը և Վիկտոր Մովսիսյանը, ֆուտբոլիստ Նիկիտա Սիմոնյանը, սկավառականետորդ Ֆահնա Մելնիկը, ծանրամարտիկներ Նորայր Նուրիկյանը /երկու անգամ/ և Յուրի Վարդանյանը, Օգեսն Միրզոյանը և Իսրայել Միլիտոսյանը, ըմբիշներ Սուրեն Նալբանդյանը և Սանասար Հովհաննիսյանը, Լևոն Ջուլֆալակյանը և Մնացական Իսկանդարյանը, Արմեն Նազարյանը /երկու անգամ/ և Վարդերես Սումուրգաշևը, բասկետբոլիստներ Էլեն Բունիաթյանը, հրաձիգ Հրաչյա Պետիկյանը, թենիսիստ Անդրե Ադասին, սուսերամարտիկներ Գեորգի Պողոսովը և Կարինա Ազնավուրյանը /երկու անգամ/, հանդբոլիստ Պավել Սուքիասյանը /երկու անգամ/:

Ինչպես են զարգացել մարմնամարզությունը

և սպորտը խորհրդային ժամանակաշրջանում

Պատմության խորհրդային ժամանակաշրջանը նշանավորվել է մարմնամարզությունը և սպորտը ժողովրդի մեջ ներդնելու ուղղությամբ: Հանրապետությունում սկսեցին բացվել մարզական խմբակներ, կազմակերպվել ընկերություններ, անցկացվել չեմպիոնատներ, որոնցում հաղթողները մասնակցում էին համամիութենական, եվրոպական և համաշխարհային առաջնություններին ու չեմպիոնատներին. Վերը նշված օլիմպիականների հետ մեկտեղ աշխարհում հանրահայտ մարզիկների համաստեղությունը լրացրել են ծանրաձողի վարպետներ Սերգո Համբարձումյանը և Ռուբեն Մանուկյանը, ըմբիշներ Նորիկ Մուշեղյանը, Բենուր Փաշայանը, Ստեփան

Սարգսյանը և Վալերի Հարությունյանը, թեթևաուլետներ Վարդան Հովսեփյանը և Ռոբերտ Էմմիյանը, սեղանի թեճիսի վարպետներ Արտակ Հակոբյանը, Անիտա Չախարյանը, Ռիտա Պողոսովան և Անտոնյան քույրերը՝ Էլմիրան և Նարինեն, ծանրամարտիկներ Իվան Ազդարովը և Յուրի Սարգսյանը, ջրացատկորդներ Դավիթ Համբարձումյանը, Սիրվարդ Էմիրզյանը, բռնցքամարտիկներ Դավիթ Թորոսյանը, Իսրայել Հակոբկոխյանը, Սամսոն Խաչատրյանը, Նշան Մունչյանը և շատ ուրիշներ

Առանձնահատուկ տեղ է գրավում հայերի վաստակը շախմատում. Աշխարհի և օլիմպիական խաղերի չեմպիոն էր Տիգրան Պետրոսյանը, հռչակ են վայելել միջազգային գրոսմայստերներ Ռաֆայել Վահանյանը, Սմբատ Լալուտյանը, Արտաշես Մինասյանը, Աշոտ Անաստասյանը, որոնք հաղթել են բազում միջազգային և համամիութենական մրցախաղերում, պաշտպանել են ԽՍՀՄ հավաքական թիմերի պատիվը

Ինչպիսին է այժմ մարմնամարզության

և սպորտի վիճակը

Իհարկե, ԽՍՀՄ-ի անկումը և անկախության առաջին



ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԱՏՄԱՌԻԹՅՈՒՆ-ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

Միլվա Կապուտիկյանը /1919-2006թթ./ բանաստեղծություն է գրել հիանալի պատմիրանով.

*Մենք՝ հոժ, բազմալեզու, մեր երկիրը՝ անծայր,
Թեև եղբայրության մենք նույն խոսքն ենք խոսում,
Բայց եղբայրներ, ինչպես հասկանալիք իրար,
Ասենք, թե շիճեք Ռուսաց լեզուն..*

քաղաքական ու տնտեսական հայտնի հիմնահարցերը իրենց հետքն են թողել մարմնամարզության և սպորտի վիճակի վրա՝ Շատ առաջատար մարզիկներ ու մարզիչներ չղիմացան դժվարություններին և ստիպված էին հեռանալ հայրենի օջախից

Բայց վերջին ժամանակներս տեղաշարժ է նկատվում դեպի լավը Բարձրացել է մարզիչների աշխատավարձը, նրանցից ոմանք վերադարձել են հայրենիք Բարեկարգվում ու ժամանակակից գույքով հագեցվում են մարզբազաներն ու սպորտային կենտրոնները՝ Վերականգնվել են «Հրազդան» հանրապետական մարզադաշտը և թենիսի ու ֆուտբոլի գծով մի քանի մանկապատանեկան դպրոցների բազաները, Երևանում կառուցվել է «Միկա» ֆուտբոլային ակումբի նոր մարզադաշտը.

Ինչպիսին է ժամանակակից հայկական

սպորտի տեղը համաշխարհային ասպարեզում

Անկախ Հայաստանի շախմատիստները աշխարհին տվել են ՖԻԴԵ-ի վարկածով աշխարհի փոխչեմպիոն Վլադիմիր Հակոբյանին և Աշխարհի գավաթակիր Լևոն Արոնյանին, Հայաստանի հավաքականը մի քանի տարի շարունակ դարձավ համաշխարհային թիմային մրցույթների և շախմատային օլիմպիադաների մրցանակակիր, իսկ վերջերս Թուրինում ՀՀ հավաքականն արժանացավ բարձրագույն հաջողության՝ հաղթանակ տարավ Համաշխարհային օլիմպիադայում

Համաշխարհային առաջնություններում հաղթանակի ավանդույթները շարունակում են Արմեն Նազարյանը, Արմեն Մկրտչյանը, Արայիկ Գևորգյանը և Վադինակ Գալստյանը, ծանրածոդի վարպետներ Աշոտ Դանիելյանը և Արսեն Մելիք-



ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ
ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԼՈՒԽ 10. ՀԱՅ-ՌՌՈՒՍԱԿԱՆ**ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Պատմում է հարաբերությունների զարգացման փուլերի մասին՝ սկսած պատմության մեջ վաճառականների, իսկ այնուհետ՝ գորավարների դերի մասին, ժամանակակից հարաբերությունների մասին՝ դրանց քաղաքական, տնտեսական, մշակութային ու ռազմական իրավիճակներով, այն մասին, թե Հայաստանում ինչպես են վերաբերվում որոշ ձեռնարկություններ Ռուսաստանին գիջելու հարցին:

Ընդամենը 32 հարց ու պատասխան

Հայաստանը և Հին Ռուսիան՝ ինչից է սկսվել

Ռուսների կայուն հարաբերությունները հայ ժողովրդի ներկայացուցիչների հետ սկսվել են Կիևյան Ռուսիայի ժամանակներից Հայ վաճառականները և արհեստավորները ցանկալի մարդիկ էին Ռուսիայում: Բացի այդ, դեռևս 9-րդ դարում Կիևյան Ռուսիայի ծագում ունեցողները որպես վարձու զինվորներ ծառայում էին բյուզանդական կայսրերի մոտ, այն ժամանակներում, երբ այնտեղ կառավարում էին հայկական թագավորական ընտանիքի ներկայացուցիչները, ռուսներն ընդունում էին քրիստոնեություն և այն հասցնում էին իրենց հայ-

րենիքը Նշենք, որ իշխանուհի Օլգան քրիստոնեությունն ընդունել է 955 թ., Ցարգրադում/այն ժամանակ Ռուսիայում այդպես էր կոչվում Կոնստանդնուպոլիսը/ հայկական թագավորական ընտանիքի կառավարման ժամանակ՝ Մեծն իշխանուհի Օլգայի թոռան՝ Կիևյան Ռուսիայի մկրտիչ Վլադիմիր Սվյատոսլավովիչի /960-1015/ կինը դարձավ Բյուզանդիայի արքայադուստր Աննան /մոտ 962-1011թթ /, որը այդ նույն բյուզանդական հայկական թագավորական ընտանիքից էր

Կիևում հայկական բնակավայրերը հայտնվել են դեռևս 10-11-րդ դարերում. Այստեղ ապրում էին արհեստավորներ, վաճառականներ, բժիշկներ

Երբ է եղել Մոսկվայում հայերի մասին առաջին հիշատակությունը

1390 թ մի տարեգրության մեջ հայտնվել է «ոմն հայ Աբրահամ», որի տունը Մոսկվայում հրդեհվել էր Ըստ երևույթին խոսքը վաճառականի մասին է

Ինչ դեր են կատարել հայ վաճառականները Ռուսաստանի հետ հարաբերությունների զարգացման գործում

Իվան Ահեղ թագավորի ժամանակ հայ վաճառականների պատգամավորությունը պայմանավորվածություն ուներ Ռուսաստանի հետ ազատ առևտուր անելու մասին՝ Ներմուծում էին մետաքս, թանկագին քարեր, խունկ, համեմունքներ և արևելյան այլ ապրանքներ Շուտով Աստրախանում ստեղծվեց հայկական մեծ գաղութ

15-16-րդ դարերում Մոսկվայում հայերի թիվը գնալով

ավելանում էր, նրանք բնակվում էին Կիտայ-Գորոդում և Մեծ քաղաքի տարածքում։ Նշենք, որ Ալեքսեյ Միխայլովիչ թագավորը Մոսկվա էր հրավիրել մեծ թվով վաճառականների և զանազան վարպետների։

Ինչպես և երբ է ծագել ռուս-հայկական քաղաքական միության գաղափարը

Թուրքիայի և Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանումից հետո /1639թ./ հայ ժողովուրդը թուրքական փաշաների և պարսկական խաների բռնապետական իշխանության ներքո ենթարկվում էր ազգային ու սոցիալական դաժան ճնշումների, կրոնական հետապնդումների։ Եվ հայ ժողովուրդը սկսեց ուղիներ փնտրել ազատվելու այդ օտարերկրյա ճնշումից. Սկզբում փորձեր էին արվում աջակցություն գտնել եվրոպական տերությունների կողմից, բայց դա չստացվեց։ Այդ ժամանակ հայերն իրենց հայացքներն ուղղեցին դեպի Ռուսաստան, որն այդ ժամանակ դարձել էր ուժեղ պետություն։ Այստեղ էական հիմնավորում դարձան դարերով կուտակված հայ-ռուսական կապե-



ՌՈՒՍԱՍՏԱՆԸ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՊՍՏՄՈՒԹՅՈՒՆ-ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ
Պետական և Լենինյան դափնեկիրների թվում էին Հայաստանում մեծ փառք փայտեղ գեղանկարիչ Մ.Մ Սարյանը /1880-1972թթ./, ուղղաքրական բառարանի /106 հազար բառ/ հեղինակ և 11-12-րդ դարերի հին տուսաց լեզվի բառարանի գլխավոր խմբագիր Ա.Գ.Բարխուդարյանը /1894-1983/, սովիակոնսպրոտկուր Ա.Ի.Միկոյանը /1905-1970/, խորհրդային միջուկային ֆիզիկայի հիմնադիրներից մեկը՝ Ա.Ի. Ալիխանովը /1907-1970/, աստղաֆիզիկայի խորհրդային դպրոցի հիմնադիր Է.Ն. Համբարչումյանը /1908-.../, երգչուհի Ջ.Ա. Գորուխանյանը /1918թ./, երգչուհի Գ.Մ. Գաապարյանը /1924թ./ և գիտության ու մշակույթի հարյուրավոր այլ անվանավոր գործիչներ։

լը, ամենից առաջ առևտրական կապերը Պարսկաստանից Վոլգայով և մինչև Սպիտակ ծով՝ այսպես կոչված «հայկական ճանապարհով» Ալեքսեյ Միխայլովիչ ցարի ժամանակ երկու ժողովուրդների գաղափարական-բարոյական և նյութական կապերը սկսեցին ամրապնդվել թագավորական հրամաններով:

***Ճիշտ է, որ Կրեմլի Չինասպալարի ադամանդյա
հոյակապ գահը նվիրել են հայ վաճառականները***

Այո, դա այդպես է 1660 թ պարսկական Իսպահան քաղաքից Մոսկվա էր եկել վաճառական Չաքար Սագրեդյանը: Նա Ալեքսեյ Միխայլովիչ թագավորին նվեր էր բերել շքեղ մի գահ, որը պատրաստել էին հայերի օջախ Նոր Ջուղայից վերաբնակեցված հայ հմուտ վարպետները Նոր Ջուղան փառաբանված էր իր առևտրական և մշակութային նվաճումներով

Գահը պատրաստված է փայտի թանկարժեք տեսակներից, պատված է սև թավիշով, ծիրանագույն մետաքսով և դեղին կերպասով, զարդարված է 897 ադամանդներով, 1298 մարգարիտներով, ինչպես նաև ամետիստներով, շափյուղաներով, տուպազներով, հակինթներով, փիրուզներով, ոսկով ու արծաթով Նվերը դուր եկավ, և թագավորը վաճառականին խնդրեց Մոսկվա ուղարկել ոսկու և արծաթի հայ վարպետների, նկարիչների 1667 թ Մոսկվա եկավ նկարիչ Բոգդան Սալթանովը, որը դարձավ պալատական գեղանկարիչ և ստեղծեց պալատական շենքերն ու տաճարները զարդարող բազմաթիվ որմնանկարներ:

Ճիշտ է, որ դեռևս Պետրոս Առաջինը փորձել է հայ ժողովրդին ազատագրել պարսիկներից ու թուրքերից

Իսկապես, երբ Պետրոս Առաջինը տեղեկացավ պարսկական լծից իրենց պաշտպանելու վերաբերյալ Ղարաբաղի մելիքների պատվիրակության խնդրանքների մասին, ապա որոշեց, որ անհրաժեշտ է քաղաքական հարաբերություններ ստեղծել երկու քրիստոնյա ժողովուրդների միջև Կնքվեց ռազմական դաշինք, ընդ որում, Ղարաբաղի մելիքները հավաստիացրին, որ «ամուր պահապան կկանգնեն Ռուսաստանի ամենահարավային սահմանների վրա»: Հատկապես եռանդուն ջանքեր էր թափում Մելիք Իսրայել Օրին, որը լիազորություններ էր ստացել հայոց բարձրագույն հոգևորականության կողմից: 1701թ, Արևմտյան Եվրոպայում ըմբռնում գտնելու բազմամյա անհաջող անձնական փորձերից հետո նա եկավ Սանկտ Պետերբուրգ և դիմեց Պետրոս Առաջինին՝ օգնելու պարսկական ու թուրքական տիրապետությունից Հայաստանի ազատագրման գործում Ցարը խոստացավ Հայաստանին օգնել Շվեդիայի հետ պատերազմն ավարտելուց անմիջապես հետո Իսրայել Օրին ստացավ ռուսական բանակի գնդապետի կոչում և, գլխավորելով ռուսական հատուկ պատվիրակությունը, մեկնեց Պարսկաստան:



ՄՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ասացվածքներ

Փախիր այն ջրից, որը չի աղմկում և չի բշբշում:

Բարի խոսքը քուն կշինի, չարը՝ կավերի:

Բարի խոսքը բանկ է հարստությունից:

Ծառը նանաչում ևս պտղից, մարդուն՝ գործերից:

Կարկուտը խփում է և բարեպաշտի դաշտին, և մեղավորի դաշտին:

Պետրոս Առաջինը, ավարտելով պատերազմը Շվեդիայի դեմ, ձեռնարկեց իր հայտնի «Կասպիական արշավանքը» Ռուսական զորքերը գրավեցին Դերբենդը, Ռեշտը, Բաքուն և Մերձկասպյան մի շարք շրջաններ. Պարսկաստանի հյուսիսային նահանգները կազմող Հայկական Ղարաբաղի գրավումն այն ժամանակ չստացվեց. Ռուսական կայսրությունը դեռ քավականաչափ ուժեր չուներ: Այդուհանդերձ, հայերն իմացան իրենց երկիրն ազատագրելու համար Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական համագործակցության իրականացման հնարավորությունների մասին: Դրա շնորհիվ քաղաքական կապերը սկսեցին զարգանալ Պետրոս Առաջինը խրախուսում էր հայերի վերաբնակեցումը դեպի Ռուսաստանի սահմանները: 1723 թ. Հրամանագրով հայերին կոչելով բնակվել Ռուսաստանում, նա հայտարարեց. «Ազնիվ հայ ժողովրդին ցուցաբերել առանձին գթասրտություն.. Մենք կարգադրել ենք ոչ միայն նրանց վաճառականությանը պաշտպանել, այլև պետք է առանձնահատուկ որոշ արտոնություններ և շնորհների պարգևենք, որպեսզի ստանան առավել շահույթ և օգուտ»

Հայերի համար ինչով նշանավորվեց Ռուսաստանի նոր քաղաքականությունը

Պահպանվել է Ղարաբաղյան մելիքների ու հայ կաթողիկոսների դիվանագիտական ընդարձակ գրագրությունը կայսրուհիներ Եկատերինա 1-ի և Եկատերինա 2-րդի, իշխան Գ Ա Պոտյոմկինի, կայսրեր Պավել 1-ի և Ալեքսանդր 1-ի հետ:

17-րդ դարից սկսած Ռուսաստանին հայ առևտրական կապիտալի վերակողմնորոշման և արևելյան երկրների հետ

Ռուսաստանի առևտրի զարգացման կապակցությամբ սկսեցին Մոսկվա մշտական բնակության գալ հայ վաճառականները, արդյունաբերողները և մշակույթի գործիչները Շատ հայեր ազնվական տիտղոսներ ստացան արտասահմանի հետ Ռուսաստանի առևտրի զարգացմանը ներդրած ավանդի համար: Դրանք այժմ էլ հայտնի մեկենասներ Լազարևների, Հայրապետովների, Հախվերդովների, Աբամելիքների, Արդուսյանների, Դելյանովների, Լոռիս-Մելիքովների և այլոց անուններն են: Նշենք, օրինակ, որ Եկատերինա 2-րդը հայերի համար հնարավորություններ էր ստեղծել ավելի ակտիվորեն Ռուսաստանում վերաբնակվելու համար. «Մենք Կովկասյան լեռների եկվորներին հնարավորություններ ենք տալիս բնակվելու և օգտակար ենք համարում քաղաքներ ստեղծելու հայերի համար»: Այն ժամանակներից հայերով հոծ բնակեցված քաղաքներ ու շրջաններ կան Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում, Աստրախանի, Վոլգոգրադի, Ռոստովի և Ռուսաստանի այլ մարզերում, Նիկոլաևսկի, Խերսոնի, Օդեսայի մարզերում: Օրինակ, 1921 թ. Դոնի Ռոստովի քաղաղրիչ մի մեծ մասն է դարձել նրան սերտաճած Նոր Նախիջևանը, որը կազմավորվել է 1778 թվականին, Դոնի աջ ափին, հենց Եկատերինա 2-րդի հրամանագրով, որտեղ հայերը մինչև հիմա թվաքանակով երկրորդ «քաղաքացի» ազգն են Դոնի Ռոստովի հարավ-արևմուտքից մի քանի կիլոմետր հեռու գտնվում է միայն հայերով բնակեցված Մյասնիկովսկի շրջանը

Ինչով է նշանավոր 1780 թվականը մեր

ժողովուրդների համարեղ պատմության մեջ

Այդ թվականին ռուս մեծ գորավար Ա Վ Սուվորովը լիազո-

րություն ստացավ կոնսուլտացիաներ անցկացնելու հայ ներկայացուցիչների հետ՝ Ռուսաստանի հովանավորության ներքո պետականությունը վերականգնելու ուղղությամբ հնարավոր համատեղ գործողությունների նպատակով: Հայկական կողմից բանակցությունները վարում էին արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը, որը ղեկավարում էր Ռուսաստանի հայկական թեմը, և մոսկովյան խոշոր ձեռնարկատեր Հովհաննես Լազարյանը /Իվան Լազարևը/: Սակայն ռուսական գործերի արշավը Անդրկովկաս տեղի չունեցավ:

***Երբ է Հայաստանը մտել Ռուսական
կայսրության կազմի մեջ***

1804-1813 թթ Ռուսաստանը հայերի խնդրանքով ու աջակցությամբ պատերազմ էր մղում Պարսկաստանի իշխանությունից Լեռնային Ղարաբաղը և արևմտյան մյուս հայկական տարածություններն ազատագրելու համար. Պետք է նշել, որ Նապոլեոնի դեմ մղված Հայրենական պատերազմի ամենադրամատիկական ժամանակներում իսկ Ալեքսանդր 2-րդը ռուսպարսկական ճակատից ոչ մի զինվոր չհանեց

1813 թ հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի ամրոցում Ռուսաստանն ու Պարսկաստանը Դաշնագիր ստորագրեցին ռուսպարսկական պատերազմի ավարտման մասին: Ըստ այդ պայմանագրի, Ղարաբաղյան մելիքությունների հետ միասին Ռուսաստանին անցան 6 այլ արևելահայկական նահանգներ, ինչպես նաև մուսուլմանական բնակչություն ունեցող Գյանջայի խանությունը: Քիչ ավելի ուշ ռուսական նահանգներ դարձան Բաքվի, Շաֆինի, Շիրվանի և Թալիշի մուսուլմանական խանությունները

1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով, որով ավարտվեց երկրորդ ռուս-պարսկական արշավը /1826-1828թթ./ Ռուսաստանին անցան Հայաստանի արևելյան տարածքները՝ Երևանի ու Նախիջևանի խանությունները և Օրդուբադի գավառը: Այդպես ավարտվեց արևելահայկական բոլոր տարածքների միացումը Ռուսաստանին:

1829 թ. Թուրքիայի հետ կնքված Ադրիանապոլիսի հաշտության պայմանագրով Ռուսաստանին անցան Ախալցխան և Ախալքալակը /այժմ հայաբնակ գավառներ Վրաստանում/: 1878 թ. Բեռլինի պայմանագրով Թուրքիայից Ռուսաստանին անցան Ղարս և Արդահան քաղաքները՝ մերձակա տարածքներով: Սակայն Արևմտյան Հայաստանի մեծ մասը այդպես էլ մնաց Թուրքիայի կազմում:

Սկզբում Լեոնային Ղարաբադի, իսկ այնուհետ՝ ողջ Արևելյան Հայաստանի համար մղված պատերազմները ամրապնդեցին ռուս և հայ ժողովուրդների բարեկամությունը, ցույց տվին նրանց հոգևոր, մշակութային, կրոնական մոտիկությունը, միմյանց նկատմամբ անօրինակ հավատարմությունն ու նվիրվածությունը:

Հայերին ինչ տվեց կամավոր մուսրը

Ռուսաստանի կազմի մեջ

Օրինակ, Լեոնային Ղարաբադում 1914 թ. կար 224 հայկական գյուղ, Ղարաբադյան թեմն ուներ 206.768 ծխականներ, 222 գործող հայկական եկեղեցիներ, 188 հոգևորականներ: 1917 թ. տվյալներով Լեոնային Ղարաբադի միայն վարչական կենտրոն Շուշիում լույս էր տեսնում 20 հայերեն թերթ, 10 հանդես և ավելի քան 150 անուն գիրք, կային թատրոններ,


Պայմաններ ստեղծվեցին տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի զարգացման համար Կապիտալիզմը եկավ փոխարինելու նահապետական հարաբերություններին: Մինչև 1902 թ. դեկտեմբերը կառուցվել էր Թբիլիսի-Ալավերդի-Գյումրի-Երևան երկաթուղին, շուտով բացվեց Թբիլիսի-Երևան խճուղային ճանապարհը, սկսվեց Ալավերդու և Կապանի պղնձահանքերի շահագործումը. Երևանի նահանգից վաճառքի էր արտահանվում մոտ 32 հազար տոննա հացահատիկ: 1893 թ Կ Աֆրիկյանի հիմնադրած կոնյակի գործարանը, որը հետագայում գնեց ռուս արդյունաբերող Լ Շուստովը, սկսեց ամբողջ աշխարհին հայտնի հայկական կոնյակի արտադրանքը

1860-ական թվականներին սկսեցին գործել ազգային-ժողովրդավարական ուղղություն ունեցող խմբակներ և ընկերություններ ու միություններ: 1885 թվականին Հայաստանում առաջին քաղաքական կուսակցությունը դարձավ Արմենականների կուսակցությունը, որը հանդես էր գալիս Արևմտյան Հայաստանի ազատագրման ու անկախության և բուրժուա-ժողովրդավարական կարգերի ստեղծման օգտին. 1921 թ այդ կուսակցությունը երկու այլ կուսակցությունների հետ միասին կազմավորեց «Ռամկավար-ազատական» կուսակցությունը /ժողովրդավարական ազատություն կուսակցություն/, որն այժմ ունի լիբերալ-ժողովրդավարական ուղղություն: 1887 թվականին մի խումբ հայ ուսանողներ ստեղծեցին «Հնչակյան» կուսակցությունը, որն ունի սոցիալ-ժողովրդավարական դիրքորոշում 1890 թվականին Թբիլիսիում ստեղծվեց «Դաշնակցություն» կուսակցությունը /Հայ հեղափոխական միություն/սոցիալ-հեղափոխականների /կադետների/ ծրագրով, որն այսօր ևս հեղինակավոր կուսակցություն է Հայաստանում

և արտասահմանում Հայաստանում առաջին մարքսիստական խմբակը կազմակերպվել է 1889 թվականին, Ստեփան Շահումյանի կողմից՝ 1902 թ ստեղծվեց ապագա կոմունիստական կուսակցության առաջին բջիջը:

Մոսկվայում կա Արմյանսկի (Հայկական) անվանումով նրբանցք: Ինչու է այն կոչվում այդպես և ինչով է հայտնի

Քաղաքի կենտրոնում այդ նրբանցքի գլխավոր տեսարժան վայրը նախկին Լազարյան ճեմարանի վեհասրանչ շենքն է /Արմյանսկի նրբանցք, շենք 2/, որտեղ այժմ աշխատում է ՀՀ Դեսպանությունը. Շենքի առջևում վեր է խոյանում հայ ականավոր ընտանիքի՝ Լազարևների /Լազարյանների/ պատվին կերտված կոթողը Ընտանիք, որի արմատները գալիս են Մեծ Հայքի Վասպուրական գավառի Նախիջևանի մարզից: Ռուսաստան են վերաբնակվել 17-րդ դարում Պարսկաստանից՝ Հարուստ վաճառականներ Լազարյանները առևտրական սերտ հարաբերությունների մեջ էին Մոսկվայի և Պետերբուրգի հետ 1747 թ այդ ընտանիքը իր ճակատագիրը կապեց Ռուսաստանի հետ



Նրա ներկայացուցիչներից մեկը՝ կոմս, կալվածատեր և արդյունաբերող Իվան Լազարևը իր միջոցները կտակեց ուսումնական հաստատության ստեղծման համար. Սկզբում այստեղ ուսումնարան էր, 1815 թ այն արդեն միջնակարգ դպրոց էր, որտեղ ընդհանուր ուսուցումը կատարվում էր ռուսերեն: Հասարակական ու բնական գիտությունների հետ մեկտեղ դասավանդվում էին նաև եվրոպական լեզուներ /ֆրանսերեն, գերմաներեն/ և, հատկապես, արևելյան լեզուներ՝ արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, վրացերեն, հասկանալի էր նաև հայերեն: Ճեմարանը նշանակալից ավանդ է ներդրել Ռուսաստանում արևելագիտության զարգացման գործում: Նշենք, որ այստեղ սովորել են ուսական մշակույթի կարկառուն ներկայացուցիչներ Լ.Տոլստոյը, Ի. Տուրգենևը, Ա. Գլինկան, Յու. Վեսելովսկին և այլն:

Հայերից ովքեր են հատկապես իրենց դրսևորել

Ռուսաստանին ծառայելու գործում

Ռուսաստանի պետական, ռազմական և տնտեսական գործիչների ոչ փոքր ցանկում պատմությունը պատշաճն է հատուցում, օրինակ, գեներալներ Լ. Խրիստոֆորովին և Ի. Յուզբաշևին՝ Պետրոս Մեծի ժամանակներից, Եկատերինա 2-րդի կառավարման ժամանակ Ռուսաստանի հայերի հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանին: Նապոլեոնի դեմ մղված մարտերում հերոսներ դարձան Վ. Մադաթովը, Դ. Դելյանովը, Դ. Աբամելիքը, նրա երկու որդիները՝ Իվանը և Արտեմին, Լազար և Բրիստափոր Լազարևները, Վ. Բեհրովը, Ի. Ախշարումովը, Ա. Թումանովը, Պ. Մելիքովը և այլք:

Հետագայում Ռուսաստանը պատշաճն է հատուցել Ռու-

սաստանի կայսրության ներքին գործոց նախարար Մ.Տ Լորիս-Մելիքովին, գեներալ Վ. Բեհբուքովին, «Հայկական մարզի» պետ /1831-1838/, գեներալ-լեյտենանտ, Թուրքիային սահմանակից 4 տարածքների նահանգապետ և 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակից Օ. Լազարյանին, 19-րդ դարի վերջերից ֆինանսիստ Պ Օ. Դուկասովին, ձեռնարկատերեր Տարասովների ընտանիքին, նավթարդյունաբերող Ս Գ. Լիանոզովին, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակների գեներալ Ա. Օզանյանին և շատ ուրիշների.

***Հայերից ուլքեր են դարձել ԽՍՀՄ
քաղաքական ականավոր գործիչներ***

Հայ ժողովրդի բազում ներկայացուցիչներ հնարավորություն են ստացել դեռևս անցյալ դարի 20-ական թվականներից դառնալ միութենական երկրի ականավոր գործիչներ՝ տնտեսության տարբեր ճյուղերի ղեկավարներ, դիվանագետներ, նախարարներ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկու պալատների պատգամավորներ, ղեկավար կուսակցության՝ ԽՄԿԿ-ի Կենտկոմի անդամներ. Ա.Ի Միկոյանը/1895- 1978թթ./ 20-րդ դարի 60-ական թվականներին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ պետական իշխանության գերագույն մարմնի, Նախագահության նախագահն էր.

***Հայերն ինչպես են իրենց դրսևորել
Հայրենական Մեծ պատերազմի տարիներին***

450 հազար հայ զինվորներ արժանի ներդրում են կատարել Իսախանի ջախջախման գործում, նրանցից 70 հազարը պարգևատրվել է մարտական պարգևներով, 103-ին շնորհվել

Է Խորհրդային Միության հերոսի կոչում, 30-ը դարձել են Փառքի շքանշանի լիակատար ասպետներ, իսկ օդաչու Ն Ստեփանյանն այդ կոչմանն է արժանացել երկու անգամ. Ստեղծվել է 5 ազգային զորամիավորում, որոնցից մեկը՝ 76-րդ դիվիզիան, աչքի ընկնելով Ստալինգրադի ճակատամարտում, վերակազմավորվել է որպես 51-րդ Գվարդիական դիվիզիա: Միայն Ղարաբաղի Չարդախլու գյուղը ինտերնացիոնալ հայրենիքին տվել է երկու մարշալ, 11 գեներալ, նրա 360 բնակիչներ պարգևատրվել են ԽՍՀՄ շքանշաններով Այն մասին, թե ինչ անձնուրացությամբ են կովել հայերը, վկայում են հետևյալ փաստերը՝ 275 հազար զինվորներ ու հրամանատարներ՝ այդ ժողովրդի որդիներն ու դուստրերը, չեն վերադարձել ֆաշիզմի դեմ մղված մարտերից:

Պատերազմն աճեցրել է ականավոր հայ զորավարներ՝ Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության մարշալ, Մերձբալթյան 1-ին ճակատի հրամանատար Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանը, նավատորմի ծովակալ Հովհաննես Ստեփանի Իսակովը, ավիացիայի մարշալ Սերգեյ Ալեքսանդրի Խուդյակովը (Խանփերյանց), գեներալներ Ս Գինոսյանը, Բ Առուշանյանը, Գ Մարտիրոսյանը, Կ Հախնազարյանը, Ա Բաբայանը. Այդ պատերազմում կոփվեց զրահատանկային զորքերի ապագա Գլխավոր մարշալ Ա Բաբաջանյանի և ինժեներային զորքերի ապագա մարշալ Ս Ազանովի տաղանդը

Հաղթանակի նվաճումներում իրենց ավանդն են ներդրել թիկունքի աշխատավորները՝ Հայաստանում արտադրվում էր 300 տեսակի զենք ու ուսանմանք: Պատերազմի տարիներին թիկունքում կատարած հերոսական աշխատանքի համար

ԽՍՀՄ շքանշաններով ու մեդալներով պարգևատրվել է 380 հազար մարդ՝

Ֆաշիզմի դեմ պայքարում անմասն չմնացին նաև հայ սփյուռքի առաջադեմ ուժերը՝ Նրանք մարտնչում էին դաշնակցային զորքերի կազմում, պարտիզանական ջոկատներում, հակաֆաշիստական ընդհատակում Արտասահմանի հայերի և Հայ եկեղեցու հավաքած միջոցներով Կարմիր բանակին նվիրվել է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, ինքնաթիռների մի քանի էսկադրիլիա, գնվել է զենք ու ռազմամթերք

Խորհրդային ժողովուրդը ինչպես է օգնել

վերացնելու Սպիտակի երկրաշարժի հետևանքները

1988 թ դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցավ սարսափելի երկրաշարժ, որը ոչնչացրեց Սպիտակ և Լենինական /այժմ՝ Գյումրի/ քաղաքները և տվեց հսկայական զոհեր՝ Զոհվեց 25 հազար մարդ, գրեթե 100 հազար մարդ վերքեր ստացան, մոտ մեկ միլիոն մարդ զրկվեց տներից, ավերվեց 21 քաղաք և 350 գյուղ.

Օգնության եկավ ողջ երկիրը Եկան փրկարարներ և հատուկ տեխնիկա, որն օգնեց ավերակներից հանել ավելի քան 20 հազար մարդ, 60 հազար մարդ էվակուացվեց Եկան հումանիտար բեռներ և վագոններ, միջոցներ տրամադրվեցին հանրապետության վերականգնման համար

Հայերը գնահատեցին երկրաշարժի հետևանքների վերացման գործում եղբայրական ժողովուրդների մասնակցությունը՝ Այդ շնորհակալության նշանաբաններից մեկը դարձավ ԽՍՀՄ վարչապետ Ն Ի Ռիժկովի հուշարձանը, որը ղեկավարում էր փրկարար ու վերականգնման աշխատանքները

**Երբ են դիվանագիտական հարաբերություններ
հաստատվել ալժմյան Հայաստանի Հանրապետության
և Ռուսաստանի Դաշնության միջև**

Դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992թ. հունվարին ԽՍՀՄ-ի փլուզումից անմիջապես հետո: Ռուսաստանի Նախագահի 1992 թ. մարտի 2-ի հրամանագրով Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության առաջին դեսպան էր նշանակվել Վլադիմիր Պետրովիչ Ստուպիշինը, որը մինչ այդ Միլանում /Իտալիա/ Ռուսաստանի Գլխավոր հյուպատոսն էր

**Ինչպիսին էին ռուս-հայկական հարաբերությունները
Ղարաբաղի պայերագմի ժամանակ**

Բնական է, որ Ռուսաստանը Լեռնային Ղարաբաղին ոչ մի ռազմական օգնություն ցույց չի տվել: Բայց զարգացնելով Հայաստանի հետ իր բազմակողմանի կապերը, Ռուսաստանը-Հայաստանին մատակարարում էր զենք ու զինամթերք, ամրապնդելով նրա զինված ուժերը

ՄՐԱՍՏԱՌԹՅՈՒՆՆԵՐ

Ասացվածքներ

Ինչպես աշխատանքն է, այնպես էլ դրա պտուղները:

Եզն ընկնելիս դանակավորները շարժանում են:

Մեծին շտոֆ ուրբը քարին չի դիպչի:

Բարուն քարուքյանք պարասխանելը յուրաքանչյուրի գործն է:

Քարին քարուքյանք պարասխանելը անվախի գործն է:

Հայացող շունը կծան չի լինում:

Խնդրիք սուսօճուց, բայց բախը չեօխցդ մի զցիր:

Ժողովրդի հեր սե օրն էլ փոն է:

Լեոնային Ղարաբաղում կովում էին որոշ քանակությամբ ռուս կամավորներ Ասենք, որ սլավոնացիներ, հիմնականում ուկրաինացիներ, կովում էին նաև Ադրբեջանի կողմից՝

Էականն այն էր, որ Ռուսաստանը և դիվանագիտական, և ռազմական միջոցներ էր ձեռնարկում, որպեսզի ընդհարումները դուրս չգան իրենց սահմաններից: Բացի այդ, ՌԴ զորքերը փակել էին հայ-թուրքական սահմանը, քանի որ 1992-1994 թթ տեղի ունեցան որոշ միջադեպեր, որոնք անհանգստություն առաջացրին, թե Թուրքիան կմիջամտի կոնֆլիկտին Ադրբեջանի կողմից՝ ազատության համար պայքարող ղարաբաղցիներին հարվածելու նպատակով: Ռուսաստանը ստիպված էր պաշտոնապես հայտարարել «ատոմային պատերազմ» սկսելու հնարավորության մասին և նույնիսկ հրամանատարական-շտաբային զորավարժություններ անցկացնել՝ թուրքական 4-րդ դաշտային բանակը, իբր թե, ջախջախելու նպատակով:

Կարելի՞ է Ռուսաստանի և Հայաստանի միջև սրեղծված հարաբերությունները անվանել ռազմական դաշինք

Այդ հարաբերությունները, անկասկած, լիակատար ռազմական դաշինք են Այսօր երկուստեք ռազմական համագործակցության շրջանակներում գործում են մոտ 40 պայմանագ-



ՄՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փոքրիկ գրույցներ

Պայլիմ հարցնում են.

-Ինչո՞ւ է վիզդ հասար:

-Որովհենքե ինքս եմ իմ մասին հոգում:

Աղբապը օչ կերապ, սախն՝ սոված է:

Հարուսպը կերապ, սախնք՝ դեղ է:

րեր ու համաձայնագրեր, տասնյակ այլ փոխապարտավորեցնող փաստաթղթեր:

Այդպիսի համագործակցության իրավաբանական հիմքեր ստեղծելու համար այդ փաստաթղթերից հիմնականը ՌԴ-ի և ՀՀ-ի միջև բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին 1997 թ օգոստոսի 29-ի պայմանագիրն է և ՀՀ տարածքում գտնվող ՌԴ զինված ուժերի իրավաբանական կարգավիճակի մասին 1992 թ օգոստոսի 21-ի պայմանագիրը. 2003 թվականից սկսած գործում է ռազմատեխնիկական համագործակցության վերաբերյալ Համաձայնագիրը, և ստեղծվել է ռուս-հայկական միջկառավարական հանձնաժողով, ռազմատեխնիկական համագործակցության գծով:

ՀՀ-ն Կոլեկտիվ անվտանգության մասին Պայմանագրի կազմակերպության անդամ է, իսկ 1999 թվականին միացել է ԱՊՀ երկրների Հակաօդային պաշտպանության միացյալ համակարգին

Հայաստանում, արդյոք, կա՞ն ռուսական զորքեր

Այստեղ տեղակայված է 102-րդ ռազմական բազան /քաղ. Գյումրի, 3000 մարդ/ Ստեղծվել է 1994 թ Նրա իրավական համակարգը որոշված է ՀՀ տարածքում Ռուսական ռազմական բազայի մասին պայմանագրով: Բազայի կազմի մեջ մտնում ենք մարտական կառավարման խմբից կազմված Երևանի կայազորը, որն իրականացնում է ՀՀ ռազմական ուժերի հետ փոխգործունեությունը, և Հայաստանում Ռուսաստանի սահմանապահ զորքերի ստորաբաժանումները, որոնք պահպանում են սահմանների հայ-թուրքական և հայ-պարսկական տեղամասերը. Մեր զինվորները համատեղ իրակա-

նացնում են տարածաշրջանում խաղաղության պահպանման, անաբեկչության դեմ պայքարի միասնական ուղղակարական խնդիրները

Ռուսաստանի շահերը Հայաստանում

Հայաստանը Անդրկովկասում Ռուսաստանի ուղղակարական-քաղաքական դաշնակիցն է, որը մեր երկրի համար կարևոր կենսական նշանակություն ունի անվտանգության, ինչպես նաև տնտեսական շահերի առումով. Այդ գոտին միակն է, որը ոչ բարեկամ երկրներին հնարավորություն է տալիս Ռուսաստանի տարածքը շրջանցելով, ուղղակարական շաղկապում ստեղծել Սև ու Կասպից ծովերի միջև ու դուրս գալ Կենտրոնական Ասիա. Դարերից ի վեր Մոսկվայի գեոքաղաքական հակառակորդները փորձել են իրենց ուղղակարական վերահսկողությունը հաստատել այդ շրջաններում: 2004 թ. Անդրկովկասում իր հետաքրքրությունների մասին հայտարարեց «Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպություն» ուղղակարական բլոկը Իսկ նրա ուղղակարական տեսությունը այն է, որ Ռուսաստանը շրջափակելով հարակից Կասպիում և Կենտրոնական Ասիայում, վերահսկողության տակ վերցնի նավթի ու գազի պաշարները, ինչպես նաև այդ հումքի փոխադրման ուղիները Միաժամանակ նպատակ է դրված վերահսկել ուղղակարական հաղորդակցության ուղիները հյուսիսից հարավ՝ դեպի Իրան, Իրաք, Հնդկաստան, Պարսկական ծոցի երկրները: Ցանկություն ունի նաև թույլ չտալ համախմբվելու նախկին խորհրդային տարածքներին և դրանք վերածելու ուժերի հզոր մի կենտրոնի, որը հաջողությամբ կմրցի Արևմուտքի հետ:

***Ինչ շահեր ունի Հայաստանը Ռուսաստանի
հետ ռազմական համագործակցության մեջ***

Պատմությունը ցույց է տվել, որ Ռուսաստանը միակ տերությունն է, որը կարողացել է իր պաշտպանության տակ առնել Հայաստանը:

Այդ գործոնը խիստ կարևոր է այսօր, երբ ՀՀ-ի հարաբերությունները իր որոշ հարևանների հետ չի կարելի համարել բարեկամական և նույնիսկ պարզապես նորմալ:

***Ինչ մակարդակի են երկու երկրների քաղաքական
հարաբերությունները***

Ռուսաստանի և Հայաստանի միջև իրականացվում է քաղաքական սերտ համագործակցություն: Կնքվել են ավելի քան 160 պայմանագրեր ու համաձայնագրեր՝ Հիմնարար ուղղությունները որոշվել են 21-րդ դարում Ռուսաստանի և Հայաստանի դաշնակցային փոխհարաբերությունների մասին 2000 թ ստորագրված Հռչակագրով. Ակտիվ են կապերը պետական բարձր մակարդակներում, այդ թվում դա արտահայտվում է նրանում, որ երկու երկրների Նախագահները, բացի պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումներից, 2005-2006 թթ. անցկացրին Հայաստանում Ռուսաստանի բարեկամության տարվա և Ռուսաստանում Հայաստանի բարեկամության տարվա բացումը.

2004 թ. առաջին պաշտոնական այցով Ռուսաստանում էր գտնվում ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանը: 2005 թ. ՌԴ վարչապետ Մ. Ֆրադկովը Հայաստան այցելեց պաշտոնական այցով. Տեղի են ունենում արտաքին քաղաքական գերատեսչու-

թյունների ղեկավարների կանոնավոր հանդիպումներ. 2004 թ և 2006 թ. Մոսկվա ժամանեց ՀՀ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանը. ՌԴ արտաքին գործերի նախարար Ս. Լավրովը պաշտոնական այցով Հայաստանում է եղել 2005թ. և 2006թ : Տեղի է ունեցել ՌԴ պաշտպանության նախարար Ս. Իվանովի պաշտոնական այցը ՀՀ:

Բարձր է միջպատվամենտական կապերի մակարդակը: Օրենսդիրները միմյանց հետ համագործակցում են ուս-հայկական միջպատվամենտական հանձնաժողովի շրջանակներում, որի նախագահը Դաշնության խորհրդի անդամ Ն.Ի. Ռիժկովն է:

Միջազգային կարևոր հիմնահարցերի գծով Ռուսաստանի և Հայաստանի դիրքորոշումները մոտ են կամ համընկնում են:

***Ինչպես են զարգանում ուս-հայկական
փոփոխական հարաբերությունները***

Ռուսաստանը Հայաստանի հիմնական առևտրական գործակիցն է ՌԴ-ին է բաժին ընկնում ՀՀ արտաքին առևտրի մոտ 13 տոկոսը. 2005 թ երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը աճել է 50 տոկոսով /355 մլն դոլար/:

Միաժամանակ Հայաստանի բաժինը Ռուսաստանի արտաքին առևտրում մեծ չէ՝ մոտ 0,12 տոկոս:

Տնտեսական կապերի զարգացման համար կարևոր նշանակություն ունի 2001 թ. Պայմանագիրը՝ մինչև 2010 թ. երկարաժամկետ տնտեսական համագործակցության մասին:

Ինչ է ներմուծվում Հայաստանից Ռուսաստան

Ռուսաստան են ներմուծվում մշակված ու ոչ մշակված ալմաստներ, թանկարժեք ու ոչ թանկարժեք մետաղներ, ոսկերչական իրեր, խմիչքներ, սինթետիկ կաուչուկ և դրանից պատրաստված իրեր, սարքավորումներ, սննդամթերք՝

Ինչ է ներմուծվում Ռուսաստանից Հայաստան

Ներմուծման գործում գերակշռում են գազը, նավթամթերքները, միջուկային վառելանյութը, մեքենաներն ու սարքավորումները /հիմնականում էներգետիկայի գծով/, մարդատար ավտոմեքենաները, սև մետաղները, չմշակված ալմաստները.

Ռուսաստանը բնական գազի միակ մատակարարն է՝ 2005 թ. 1,7 միլիարդ խոր. մետր

Ռուսաստանի փարածաշրջանները մասնակցո՞ւմ են, արդյոք, Հայաստանի հետ համագործակցությանը

Հայաստանի հետ ողղակի առևտրական կապեր ունեն Ռուսաստանի 70 տարածաշրջաններ, որոնցում ապրանքաշրջանառության գծով առաջատարներն են Մոսկվան, Սանկտ Պետերբուրգը, Ռոստովի, Սամարայի, Նիժնի Նովգորոդի, Սվերդլովսկի, Վոլգոգրադի և Յարոսլավի մարզերը, Սախա /Յակուտիա/ Հանրապետությունը, Կրասնոդարի մարզը.

Ստեղծվել է Ռուս-հայկական գործարար համագործակցության միություն, որն օգնում է միջտարածաշրջանային կապերի զարգացմանը.

***Ինչպիսին է սփյուռքահայության դերը հայ-ռուսական
հարաբերությունների զարգացման գործում***

Ներկայումս Ռուսաստանում հայ սփյուռքը մնում է ամենանշանակալին: Ռուսաստանի սփյուռքահայության կյանքը և գործունեությունը միշտ լի է ստեղծագործական աշխատանքով, հոգևոր ու մշակութային արժեքների բազմապատկմամբ՝ ի բարօրություն Ռուսաստանի: Արտադրական ոլորտներում զբաղվածության մակարդակով ազգային մյուս սփյուռքների մեջ զբաղեցնում է ամենաբարձր տեղը. Հայերը առանձնահատուկ տեղ են տալիս, ինչպես և նախկինում, մասնակցությունը շինարարության ու ճարտարապետության ասպարեզում, արդյունաբերության տարբեր ճյուղերում, ֆինանսական գործում, գիտության, կրթության, բժշկության ու մշակույթի ոլորտում, պետական ու ռազմական ծառայության գործում: Նրանք ակտիվորեն մասնակցում են Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքին: Նրանցից շատերը միավորված են ազգային-մշակութային հասարակական կազմակերպություններում, որոնք շատ բան են անում, ամենից առաջ, Հայաստանում՝ հայրենակիցների մեջ ռուսաց լեզուն և ռուսական մշակույթը, իսկ Ռուսաստանում՝ իրենց բիբլիական ժողովրդի մշակութային ու հոգևոր ժառանգությունը պրոպագանդելու համար, ընդհանուր առմամբ՝ բարեկամության ու համագործակցության հազարամյա կապերը և մեր երկրի այսօրվա ստրատեգիական գործընկերությունը ամրապնդելու համար Դրանցից ամենախոշորը Ռուսաստանի հայերի միությունն է /Ռ-ՀՄ/:

Երբեմն ժողովրդի մեջ, հայերին դիմելիս, անվանում են «խաչիկներ»: Արդյոք, դա չի՞ վիրավորում մեր բարեկամներին

9-11-րդ դարերում Հայաստանում առաջացավ ճարտարապետական-զարդանկարչական քանդակագործության ինքնատիպ ձև՝ հանրահայտ հայկական «խաչքարերը», որոնք զարդարված են ծակոտկեն փորագրություններով Դրանք հանդիսանում են նաև վառ ու ծաղկուն մի երևույթ միջին դարերի գեղարվեստական մշակույթում և իրենցից ներկայացնում են հայկական մի եզակի բացառիկություն, որը համաշխարհային արվեստում նմանը չունի. Խաչ, հայերեն Խաչատուր՝ տղամարդու անունը նշանակում է խաչ տվող: Խաչիկը փոքրացուցիչ-փաղաքշական անուն է կամ փոքրիկ խաչ /կրեստիկ/: Եվ վիրավորական է, որ ուղղափառ քրիստոնյան երբեմն անարժան հեզնանքով, չհասկանալով այդ բառի իմաստը, արտասանում է «խաչիկներ». «լցվել են այստեղ զանազան խաչիկներ»:

Ինչպիսին է Ռուսաստանի մայրաքաղաքի դերը երկու երկրների տնտեսական հարաբերությունների զարգացման գործում

Ստեղծվել է Մոսկվայի և Հայաստանի կառավարությունների միջև համագործակցության հանձնաժողով Աճում է առևտրի, հատկապես սննդի ու թեթև արդյունաբերության ապրանքների շրջանառությունը, վարկավորման /լիզինգ/ համակարգ է ստեղծվել բեռնատար ավտոմեքենաների մատակարարման գործում, և նախագծեր են պատրաստվում ռուսական խոշոր գործարանների ու ֆաբրիկաների՝ հայկական

շուկա դուրս գալու վերաբերյալ:

Միաժամանակ պայմաններ են ստեղծվում հայ ձեռներեց մարդկանց գործունեության համար: Օրինակ, Մոսկվայի 15 կառույցների համար դրամագլուխ է ներդրված Երևանից. 2005 թվականից կազմակերպվում են Հայաստանից բերված ապրանքների տոնավաճառներ /25 ձեռնարկություն, իսկ արդեն 2006 թ` 50 ձեռնարկություն/:

Ինչպիսիք են Ռուսաստանի հիմնական

ներդրումները Հայաստանի տնտեսության ոլորտում

Ռուսաստանը ներդրումներ կատարող ամենագլխավոր երկրներից մեկն է /2005 թ.` 240 մլն դոլար/: Այդ միջոցները ներդրվել են մետաղամշակման, շինարարության, էներգետիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների մեջ: ՀՀ-ում գրանցված են 589 համատեղ ձեռնարկություններ, այդ թվում` «Հայռուսգազարդ» /գազի վաճառքի և փոխադրման մոնոպոլիստ/, «Արմենալը», «Արմավիան», «Գրանդ Քենդին»: Բանկային ոլորտում ռուսական բանկերի բաժինը կազմում է մոտ 25 տոկոս. 2004 թ. «Վնեշտորգբանկը» ձեռք բերեց «Հայխնայբանկի» բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը /70 տոկոս/, այն սպասարկում է երկու երկրների ապրանքաշրջանառության 10 տոկոսը. «Միջազգային բիզնես-կենտրոն» ռուսական ընկերակցությունը վերահսկում է Երևանի «Ալմաստ» սինթետիկ ալմաստների գործարանը և դրան կից երկու գործիքաշինական գործարանները:

Ռուսաստանը հիմնական դիրքեր է զբաղեցնում էլեկտրատեներգետիկայում. Միջուկային վառելանյութի գծով ՌԱՕԵԷՍ-ը ՀՀ պարտքերը ծածկելու հաշվին ձեռք է բերել

Սևան-Հրազդան ՀԷԿ-ի սանդղաջրվեժը և ստանձնել է Հայկական ԱԷԿ-ի կառավարումը /40 տոկոս էլեկտրատեղակայան/ 2003 թ. վերջում պետական պարտքը փակելու դիմաց Ռուսաստանը ձեռք է բերել և ՌԱՕԵԷՍ-ին է հանձնել Հրազդանի ՋԷԿ-ի կառավարումը: Դրա շնորհիվ ՌԱՕԵԷՍ-ը վերահսկում է գեներացված կարողությունների մոտ 85 տոկոսը: 2005 թ. այդ նույն էներգահողիցը վերահսկողություն հաստատեց «Հայաստանի բաշխիչ համակարգեր» ընկերակցության վրա, որն ապահովում է էներգետիկայի մատակարարումը վերջնական սպառողներին.

Ինչպես են վերաբերվում հայերը ռուսական բիզնեսի ներկայությանը

Կան քննադատներ /այդ թվում նրանք, ովքեր կողմնորոշված են դեպի Արևմուտք/, որոնք պնդում են, որ Ռուսաստանի կապիտալի ներդրումը սպառնալիքի տակ է դնում էներգետիկական անվտանգությունը: Սակայն այդ փաստարկը անհամոզիչ է, քանի որ հենց Ռուսաստանն է ապահովում Հայաստանի ռազմական անվտանգությունը: Անհասկանալի է, թե ինչու Հայաստանի ռազմական անվտանգությունը կարելի է վստահել Ռուսաստանին, իսկ էներգետիկականը՝ ոչ Չնայած



ՄՐԱՄԵՌՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փոքրիկ գրույցներ

Ազգեսի դուռնը խաղողին շիտաւմ, ասաց՝ իսկ է:

Կարմիրն միտք դուր չեկաւմ, ասաց՝ աշտօր հիկզարքի է, պատուց օր է:

Գինուն հարցրին- Դու սեանկացնում ես, քի բարիք ես բերում:

Գինին պատասխանեց- Քանիսն են բարիարվածները՝ չգիտեմ, բայց սեանկացածներին հաշիվ չկա:

այդ տրամադրություններին, Հայաստանի կառավարությունը ողջունում է ռուսական ներդրումները:

Կարո՞ղ է, արդյո՞ք, Իրան-Հայաստան գազամուղը կռվախնձոր դառնալ Մոսկվայի և Երևանի միջև:

2004 թ Իրանը և Հայաստանը ընդհուպ մոտեցան Իրանի գազը Հայաստան մատակարարելու համար գազամուղի կառուցման մասին Համաձայնագրի ստորագրմանը: Այդ ժամանակ էլ հայտնվեցին Վրաստանի միջով մինչև Ուկրաինա և այնուհետ՝ մինչև Եվրամիության երկրները այդ գազամուղը երկարացնելու գանազան նախագծեր: Վրաստանը, Ուկրաինան ու Եվրամիությունը սկսեցին Հայաստանին մղել դեպի այդ նախագծերի իրականացումը Դա լուրջ մտահոգություն առաջացրեց Մոսկվայում, քանի որ Ռուսաստանին շրջանցելով Իրանի գազը Եվրոպային մատակարարելը կարող էր լուրջ վնաս հասցնել «Գազպրոմի» դիրքերին եվրոպական շուկայում: Արդյունքում, ելնելով դաշնակցային շահերից, Հայաստանը հրաժարվեց հակառուսական նախագծից Պայմանավորվածություն ձեռք բերվեց գազամուղի հայկական տեղամասը «Գազպրոմին» հանձնելու մասին

Ինչպես են զարգանում մշակութային կապերը

Հայաստանի և Ռուսաստանի միջև ներկա փուլում


Ռուսաստանի և Հայաստանի միջև հարաճուն զարգանում են մշակութային կապերը. 2002 թվականից կնքվել են միջկառավարական և միջգերատեսչական կարևոր համաձայնագրեր՝ Համագործակցության ծրագիր մշակույթի նախարարությունների միջև, Համատեղ հրովարտակ մշակութային համագործակցության մասին, ռուսական կինոնկարների օրեր և

Ռուսաստանի մշակույթի օրեր անցկացնելու մասին. Մոսկվայում բացվել են ռուս-հայկական դպրոցներ, հայերենի ուսումնասիրության կիրակնօրյա դպրոցներ, ռուս-հայկական մշակութային-կրթական կենտրոն, Մոսկովյան Հայկական թատրոն, Մոսկվայի հայկական կամերային երգչախումբ, «Հայորդիք» մանկական պարի համույթը, հայերեն լույս են տեսնում թերթեր, հանդեսներ Անցկացվում են գեղարվեստական ցուցահանդեսներ, հայ դերասանները հյուրախաղերի են գալիս համերգներով ու ներկայացումներով, ռուսերեն հրատարակվում են հայ հեղինակների գրքեր

Հայաստանում գործում է Կ.Ս.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնը, Ռուսական թանգարանը, ռուսերեն լույս են տեսնում թերթեր ու հանդեսներ, գործում են 5 ռուսական եկեղեցիներ: Ռուս դերասանները, մշակույթի ու արվեստի գործիչները, ուսուցիչներն ու գիտական աշխատողները, քաղաքագետներն ու լրագրողները հաճախակի ու ցանկալի հյուրեր են Հայաստանում:

Տարբեր դարերում Հայաստանի, նրա մշակույթի մասին հիանալի խոսքեր են ասել Ռուսաստանի առաջադեմ շատ գործիչներ: Դրանք եղել են զմայլանքի ու շնորհակալության, հիացմունքի ու սիրո, կարեկցության ու ցավակցության, վիճակը հասկանալու և հույսեր ներշնչելու խոսքեր: Նրանցից ռուս բանաստեղծ Բորիս Չիչիբաբինը գրել է

Ես եղա Սևանում ու տեսա Գառնին,
 Ես մոմ վառեցի Գեղարդում,
 Հայաստան, թող Աստված քո հոգին պահպանի,
 Ես ուզում եմ դառնալ քո որդին



•••••
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՅ
ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ ՈՒ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ
ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**ԳԼՈՒԽ 11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՌՈՒՄԱՍՏԱՆՅԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**Պատմում ենք մի կազմակերպության մասին,
որն ստանձնել է ժողովրդական դիվանագիտության
զարգացման, հայ և ուրա ժողովուրդների եղբայրական
բազմադարյան կապերի ամրապնդման, նրանց
պատմամշակութային և հոգևոր արժեքների
պահպանման ու բազմապատկման, մեր երկրների
ստրատեգիական ընկերակցությանն աջակցելու,
այդ ընկերության անդամ դառնալու
հնարավորությունների ստեղծման
բազմակողմանի ջանքերը
Ընդամենը 10 հարց ու պատասխան**

Ինչպիսին է Ընկերության պատմությունը

Արդեն 1993 թ Հայաստանի մոսկովյան բարեկամները զգացին ժողովրդական դիվանագիտության ընկերություն ստեղծելու անհրաժեշտությունը, սակայն մինչև 2006 թվականը այն մնաց միայն քաղաքի սահմաններում և աշխատում էր հիմնականում հայ սփյուռքի շրջանակներում

2006 թ հունիսին Ընկերության նոր գործունյա հատվածը այն վերակազմավորեց «Հայաստանի հետ բարեկամության և

համագործակցության Ռուսաստանյան ընկերություն» կազմակերպության՝ Առաջին տարածաշրջանային բաժանմունքներն ստեղծվել են Յարոսլավում, Ռոստովի և Մոսկվայի մարզերում՝

Ինչ հիմնական նպատակներ է իր առջև դնում

Ընկերությունը

Դա նախ և առաջ՝ երկու ժողովուրդների միջև փոխհարաբերությունների, վստահության ու բարեկամության զարգացումն է - մեր երկրների հասարակական կազմակերպությունների և ձեռներեցության շրջանակների միջև մշակութային, գիտական, գործարար ու այլ կապերի ընդլայնումն ու խորացումը - պատմության, մշակույթի, արդի արտաքին ու ներքին քաղաքականության հարցերի վերաբերյալ մեր երկրների տեղեկատվության փոխանակություններին աջակցելը - հայ և ռուս ժողովուրդների պատմամշակութային և հոգևոր արժեքների պահպանությանը և բազմապատկմանն աջակցելը Հայ ժողովրդի հետ եղբայրական բարեկամությունն ու համագործակցությունը պետք է ավելի սերտ ու բեղմնավոր դառնան, իսկ մեր ժողովուրդները՝ միմյանց հավատարիմ մնան բոլոր ժամանակներում, ինչքան էլ դրանք դժվարին լինեն՝

Ում է համախմբում Ընկերությունը

Ընկերությունն իր շուրջը համախմբում է նրանց, ովքեր ցանկանում են մասնակցել նրա նպատակների ու խնդիրների իրականացմանը Դա, առաջին հերթին, ռուս հայտնի քաղաքագետներն ու հասարակական գործիչներն են, ստեղծագործական ու գիտատեխնիկական մտավորականությունը, տեղե-

կատվության միջոցների աշխատողները, ձեռնարկատերեր, ուսանողներ, նրանք, ովքեր ծառայում են բանակում և իրավապահ մարմիններում, վետերաններ, այն ձեռնարկությունների ու ֆիրմաների կոլեկտիվների ներկայացուցիչները, որոնք Հայաստանի հետ ունեն առևտրա-տնտեսական կապեր՝ Ընկերության կազմում կան նաև օտարերկրյա քաղաքացիներ:

Ում հետ է համագործակցում Ընկերությունը

Ընկերության համագործակցությունն իրականացվում է Ռուսաստանյան այն բոլոր ընկերությունների ու կազմակերպությունների հետ, որոնք համախոհ են համբերատարության, փոխըմբռնման սկզբունքներին, ազգամիջյան բարեկամության և համաշխարհային կուլտուրայի գաղափարներին: Ընկերությունը ակտիվ փոխգործունեության մեջ է հայ սփյուռքի այն հասարակական կազմակերպությունների մեծ մասի հետ, որոնք գործում են Մոսկվայում և Դաշնության տարածաշրջաններում: Նրանց մի մասը Ռուսաստանյան մեր Ընկերության կոլեկտիվ անդամներն են Իր հերթին մեր Ընկերությունը հաճույքով մասնակցում է նրանց միջոցառումներին: Հայկական մշակութային-լուսավորչական «Արարատ» ընկերության, Մոսկվայի Նեկրասովի անվան քաղաքային հանրային գրադարանի, Մոսկվայի մարզի Ֆրյանովո ավանի կառավարչության, Հայկական պատմա-տոհմաբանական ընկերու-



ՄՐԱՍՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փոքրիկ գրույցներ

Կույրն ի՞նչ կուզի՝ երկու աչք:

Լավ ընկերը նեղության ժամանակ է ճանաչվում:

թյան, Նախիջևանի հայերի հայրենակցական միության հետ համատեղ անցկացվել են Լազարյան 3-րդ ընթերցումները՝ նվիրված ոուսական մշակութային ժառանգությանը հայ մեկենասների կատարած ներդրումներին

Հայաստանում Ռուսաստանյան ընկերության հիմնական գործընկերներն են Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերությունը և «Հայաստան-Ռուսաստան» ընկերությունը, Հայաստանի գրողների միությունը, որոնց հետ Երևանում 2006 թ. հոկտեմբերին Ռուսաստանի Ընկերության պաշտոնական պատվիրակության հետ պայմանագրեր են ստորագրվել 2007-2008 թվականների համագործակցության մասին: Կապեր են հաստատվել Հայաստանի Հանրապետության Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության հետ, Գիտությունների ազգային ակադեմիայի, Ռուս-հայկական /Մլավոնական/ պետական համալսարանի, Երևանի Վալերի Բրյուսովի անվան լեզվագիտական համալսարանի, Հայաստանի Ռուսաստանյան հայրենակիցների օգնության ու համագործակցության հիմնադրամի և այլոց հետ:

***Որոնք են Ընկերության ղեկավար մարմինները,
և ով է նրա նախագահը***

Ընկերության ղեկավար մարմինների կառուցվածքը հետևյալն է

- Ընկերության կոնֆերանսը
- Ընկերության խորհուրդը.
- Ընկերության վարչությունը.
- Ընկերության նախագահը

- Ընկերության վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողովը.
- Ընկերության քաղաքական խորհուրդը:

2006 թվականի հունիսի 15-ին հերթական հնգամյա ժամկետով Ընկերության նախագահ է ընտրվել Վիկտոր Վլադիմիրի Կրիվոպուսկովը՝ հայտնի հասարակական գործիչ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, գրքերի, գիտական աշխատությունների և տեղեկատվության միջոցներում հրապարակախոսական ելույթների հեղինակ, Հայաստանի գրողների միության պատվավոր անդամ

Վարչության անդամների ցանկը հրապարակվում է Հավելվածում

Ինչպես է Ընկերությունն իրեն դրսևորել միջազգային ժողովրդական դիվանագիտության ոլորտում

2006 թվականին Ընկերության ամենաատաջին քայլերից մեկը դարձավ Հայաստանի և Ադրբեյջանի միջև կոնֆլիկտային հարաբերությունների վերաբերյալ իր անհանգստության մասին հայտարարությունը, և նա դիմում ընդունեց՝ ուղղված



ՄՐԱՍՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայկական ռադիոյին» հարցնում են.

- *Ո՞ր ժողովուրդն է ամենախելացին:*
- *Շնորհակալություն հանրախոսության համար:*
- *Կարելի՞ է արդյոք Սևանը փրկել աղբոսությունից:*
- *Կարելի է, եթե ջրի երես համպեն նրանք, ովքեր այն աղբոսում են:*
- *Ինչո՞ւ երևանում աշրքան շապ սեփական ավարտն քենաներ կան:*
- *Ճանապարհները վաղն են, ուրքով քայլերը բոլորովին անհնար է:*
- *Ինչո՞ւ մեր շապ հայրենակիցներ մնում են արդատանիանում:*
- *Վերադառնալը վաղն կշան է:*

այդ երկրների, ինչպես նաև Ռուսաստանի Նախագահներին, ուրպեսզի Ղարաբաղի հիմնահարցը լուծելիս հավատարիմ մնան խաղաղ, բարեկամաբար ու համաձայնեցվածությամբ ապրելու՝ մեր ժողովուրդների բազմադարյան ավանդույթներին՝ Հատկապես ընդգծվել է, որ միայն խաղաղ ու արդարացի բանակցությունների ուղին կարող է հանգեցնել հայ և ադրբեջանցի ժողովուրդների փոխադարձ համաձայնությանը: Անցկացվել է «կլոր սեղան» և հրատարակվել է «Լեոնային Ղարաբաղ երեկ, այսօր և վաղը» ժողովածուն՝ հայտնի քաղաքագետների և հրապարակախոսների նյութերով:

Երկրորդ. Ընկերությունը Ռուսաստանի պետական ղեկավարությանը, քաղաքական կուսակցություններին և հասարակական կազմակերպություններին կոչ է արել միանալ 2005 թ ղեկտեմբերի 25-ին Ադրբեջանի Հանրապետության Նախիջևանի Հին Ջուլֆա քաղաքի հայ միջնադարյան գերեզմանատան և 4 հազար խաչքարերի ոչնչացման փաստի՝ համաշխարհային հասարակայնության դատապարտմանը: Դրանք փոքր ճարտարապետության համաշխարհային գլուխգործոցներ էին և գտնվում էին ՅՈՒՆԵՍԿՕ-ի պահպանության ներքո: Մոսկվայի «Նախիջևան» հայրենակցական միության, մշակութային-լուսավորչական «Արարատ» ընկերության, ռուս-հայկական տարածաշրջանային համագործակցության հետ համատեղ անցկացվել են ցուցահանդեսներ, կլոր սեղանի նիստեր: Այստեղ հատկապես նշանակալի դարձավ «Նախիջևանի հայ մշակույթի հուշարձանները՝ Ադրբեջանի վայրագության առարկա» հարցի քննարկման կազմակերպումը 2006 թ մայիսի 17-ին Ռուսաստանի Դաշնության Հասարակական պալատի մշակութային ու հոգևոր ժառանգության

հարցերի հանձնաժողովի կողմից / Մոսկվայի Պատրիարքության գործերի կառավարիչ, Կալուգայի և Բորովսկի մետրոպոլիտ Կլիմենտի նախագահությամբ/:

Երրորդ. Ընկերությունը հունիսի 15-ի իր կոնֆերանսում դատապարտեց հայազգի քաղաքացիների սպանության դեպքերը, որոնք տեղի են ունեցել Մոսկվայում և Ռուսաստանի որոշ այլ քաղաքներում, մտահոգություն արտահայտեց իրավապահ և այն հատուկ ծառայությունների անբավարար աշխատանքի մասին, որոնք պատասխանատու են սպանությունները նախականիսելու և բացահայտելու համար, մարդատյացությամբ, ռասայական խտրականությամբ ու ազգամոլությամբ վարակված անձանց ժամանակին հասարակությունից մեկուսացնելու համար:

Ընկերությունը մասնակցում է, արդյոք,

Ռուսաստանում Հայաստանի տարվա ծրագրերին

Ռուսաստանյան Ընկերությունը ոչ միայն ակտիվորեն մասնակցում է Ռուսաստանում Հայաստանի տարվա ծրագրի իրականացմանը, այլև իրականացնում է մի շարք սեփական ծրագրեր: Մոսկվայի Կառավարության աջակցությամբ մայրաքաղաքի շրջաններում մոսկվացիների համար կազմակերպվում են Հայաստանի և Ռուսաստանի արվեստի վարպետների համերգներ, «Հայաստան պահեր անցյալից ու ներկայից» ֆոտոցուցահանդեսներ, «Մեր բարեկամ Հայաստանը» բաց դասեր դպրոցներում: Ընկերության առաջարկությամբ, օրինակ, Մոսկվայի Ներքին գործերի քաղաքային վարչությունում կազմակերպվել է մշակութային-լուսավորչական ակցիա ուղղված ազգամիջյան և միջկրոնական հարցերով

մոսկովյան միլիցիայի աշխատողների մասնագիտական պատրաստականության բարձրացմանը, Մոսկվա քաղաքում բնակվող ժողովուրդների, առաջին հերթին, հայ ժողովրդի պատմության և մշակութային-հոգևոր արժեքների վերաբերյալ գիտելիքների համալրմանը, ինչպես նաև նրանց հետ տարվող աշխատանքում օրինականության ապահովմանը.

Իրավապահ մարմինների աշխատողների համար կազմակերպվել են հանդիպումներ Մոսկվայի հայկական ստեղծագործական հասարակայնության հետ, հայ դերասանների համերգներ, ցուցահանդեսներ. Որպես բարեգործական նվիրաբերում նրանց համար հրատարակվել է «Հայաստան, Հայաստան... Հարցեր ու պատասխաններ երկրի և ժողովրդի մասին բիրիական ժամանակներից մինչև մեր օրերը» այս տեղեկատու գիրքը՝ 10 հազար տպաքանակով:

Ընկերությունը, արդյոք, օգնում է մշակութային-հումանիտար ծրագրերին

Օգնում է: Նրա աջակցությամբ ամռանը Ռուսաստանի ներքին ջրային հոսանքներով Սանկտ Պետերբուրգից Վոլգա-Բալթիկայով, Վոլգա-Դոնով, Ազովի ու Սև ծովերով անցավ 13-րդ դարի գծանկարներով կառուցված «Կիլիկիա» հայկական առագաստանավի անկրկնելի պատմական ճանապարհորդության ավարտական փուլը, որը եռամյա հեռարշավի էր դուրս եկել Եվրոպայի շուրջը: Դոնի Ռոստովում հանդիսավոր հանդիպում կայացավ ճանապարհորդության մասնակիցների հետ, Մոսկվայում տեղի ունեցավ այդ հեռարշավի մասին կինոնկարի ցուցադրում, 100 հազար տպաքանակով սեպտեմբերին լույս տեսած «Ֆեդերալնայա գազետա»-ում հրապարակ-

վեց երկէջանոց լրագրահաղորդում՝ հաջողությամբ անցած ճանապարհորդության մասին՝

Ընկերության խնդիրներից մեկը ռուսաստանցիների մեջ հայ գրականության, իսկ հայերի մեջ՝ ռուս գրականության պրոպագանդումն է:

Ինչ է արված և ինչ է պլանավորվում այդ ուղղությամբ

Ռուսաստանում Հայաստանի տարվան են նվիրված ժամանակակից հայ գրողների պատմվածքների և վիպակների ժողովածուների հրատարակումը ռուսերեն և Ռուսաստանում հայ գրականության օրերը. Լայն շրջանակի ռուս ընթերցողների համար ևս, ինչպես և Մոսկվայի միլիցիայի համար, բայց ավելի ընդարձակ բովանդակությամբ և այլ չափերով, 30 հազար տպաքանակով հրատարակվել է նաև «Հայաստան, Հայաստան.. 200 հարց և 200 պատասխան երկրի և ժողովրդի մասին բիբլիական ժամանակներից մինչև մեր օրերը» այս գիրքը:

2007 թվականին Հայաստանի և Ռուսաստանի գրողների միությունների հետ միասին Հայաստանում պլանավորվում է անցկացնել Ռուս գրականության օրեր, հայտնի ռուս բանաստեղծուհի Ալեքսանդրա Օչիրովայի բանաստեղծությունների հայերեն ժողովածուի, ինչպես նաև ժամանակակից ռուս գրականության ստեղծագործությունների այլ թարգմանությունների հրատարակումը.

Հայաստանի Հանրապետության Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության, «Հայաստան-Ռուսաստան» ընկերության, Հայաստանի Գրողների միության հետ միասին Ա.Ս. Պուշկինի ծննդյան օրը Հերիեր գյուղին մեր-

ծակա լեռնանցքում, նրա հուշարձանի մոտ տեղի կունենա հայ և ռուս երիտասարդության՝ պուշկինյան ավանդական տոնակատարությունը.

Ռուսաստանում կանցկացվեն խոշորագույն հայ լուսավորիչ-բանաստեղծ Եղիշե Չարենցի ծննդյան 110 -ամյակին նվիրված միջոցառումներ, ռուսերեն լույս կընծայվի նրա բանաստեղծությունների գիրքը.

Հայաստանի մշակույթի ականավոր գործիչների խմբի և ռուսական առաջատար մասնագետների մասնակցությամբ Ընկերությունն ավարտել է «Հայերը. մշակութային ժառանգությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» գրքի հրատարակման նախապատրաստությունը, որի մեջ ընդգրկված են հայ ժողովրդական բանահյուսության լավագույն նմուշները և հայ ժողովրդի վիպերգությունից, ինչպիսին «Սասունցի Դավիթ»-ն է, հատվածներ՝ Վալերի Բրյուսովի թարգմանությամբ, հայ դասականների և այժմյան հայ գրողների ու բանաստեղծների հանրահայտ ստեղծագործությունները: Գր-



ՄՐԱՍՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայկական ուղիդին» հարցնում են.

- Կինը, արդյոք, կարո՞ղ է փղամարդուն դարչնել միլիոնավեր:
- Կարող է, եթե փղամարդը միլիարդավեր է:
- Ի՞նչ փարբերություն կա կենսագրության և ինքնակենսագրության միջև:
- Կենսագրությունը մարդուն նկարագրում է այնպիսին, ինչպիսին նա եղել է: Ինքնակենսագրությունը՝ այնպիսին, ինչպիսին նա իրեն պատկերացնում է:
- Ի՞նչ է ծովային երվանդությունը:
- Դա այն է, երբ ամառը մուրեհաբու հետ անգուռայ չգտնում ես դեպի ծովը:

քում պատմվում է նաև երաժշտության, գեղանկարչության, թատրոնի, կինոյի, ճարտարապետության ասպարեզում հայերի մեծագույն նվաճումների մասին Գրքի մի մեծ բաժին նվիրված է հայ և ռուս մշակույթների բազմադարյան փոխգործունեությանը և փոխներգործությանը. «Հայերը. մշակութային ժառանգությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» իր բովանդակությամբ հազվագյուտ այդ գիրքը կդառնա առաջին այդպիսի հրատարակությունը ռուսական գրահրատարակչության ողջ պատմության մեջ:

***Ով կարող է դառնալ Ընկերության անդամ
և ինչպես ընդունվել***

Ընկերության կանոնադրության համաձայն նրա անդամներ կարող են լինել ինչպես Ռուսաստանի՝ 18 տարին լրացած այն քաղաքացիները, ինչպես և օտարերկրյա այն քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող այն անձինք, ինչպես և իրավաբանական անձ հանդիսացող այն հասարակական միավորումները, որոնք պաշտպանում են Ընկերության նպատակներն ու խնդիրները և ընդունում են նրա կանոնադրությունը:

Քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների ընդունելությունը Ընկերության կազմում իրականացվում է Ընկերության Վարչության որոշմամբ կամ տարածաշրջանային բաժանմունքների կողմից՝ գրավոր դիմումի հիման վրա /նմուշը՝ 142 էջի հավելվածում/

Ընկերությունը գտնվում է հետևյալ հասցեում. Ռուսաստան, 107078, Մոսկվա, փ. Նովայա Բասմաննայա, շ. 4: Հեռ. 728.36.16.



ԴՈՒ ՌԻՉՈ՞ՒՄ ԵՍ
ԳԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԼՈՒԽ 12. ԳՈՒ ՈՒԶՈ՞ՒՄ ԵՄ ԳԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
Պատմում է, թե ինչ է պետք այնտեղ մեկնելու համար
և ինչ է սպասում իրեն այդ երկրում, եթե հարկ
լինի ինչ-որ օգնություն ու աջակցություն
դեսպանությունների հասցեներով և հեռախոսներով:
Ընդամենը 13 հարց ու պատասխան

Ինչպես և որտեղ է հարկավոր ջնակերպել
մեկնումը Հայաստան

Հայաստան մեկնելու համար Ռուսաստանի և ԱՊՀ քաղաքացիներից անցաթուղթ չի պահանջվում. Անհրաժեշտ է միայն արտասահմանյան անձնագիր, որի գործողության ժամկետը վերջանում է Հայաստանից ենթադրելի վերադարձից առնվազն 3 ամիս հետո

Ինչ է սպասվում սահմանի վրա
և մաքսային հսկողության կերպում

Հայաստան արժույթներ տանելը սահմանափակված չէ. Հայաստանից մինչև 10.000 դոլար գումար տանելու դեպքում ոչ մի փաստաթուղթ չի պահանջվում Թույլատրվում է առանց մաքսատուրքի վճարման Հայաստանից տանել անձնական օգտագործման իրեր, ինչպես նաև ընդհանուր գումարով 500

մարի 10 տոկոսը՝ Հասարակական սննդի օբյեկտներում, որպես կանոն, դրանք մտնում են հաշվի մեջ

Մուրավորապես ինչպիսին են գները

Բնակարանը /օրական/ էժանը՝ 10-20 դոլար, միջինը՝ 20-100 դոլար, բարձր դասը՝ 100 դոլարից սկսած.

Կերակրում են /օրականը/ էժանը՝ 2-5 դոլար, միջինը՝ 5-20 դոլար, բարձր դասը՝ 20 դոլարից սկսած

Տաքսին՝ 0,2 դոլար 1 կմ Թանգարանները՝ 1-1,5 դոլար. Ինտերնետը՝ 0,6 դոլար մեկ ժամը

Ինչպես օգտվել հեռախոսից

Հայաստանի ստացիոնար հեռախոսին զանգահարելու համար անհրաժեշտ է հավաքել 8- սուլոց- 10 374 - քաղաքի կողմից - հեռախոսատիրոջ համարը Բջջային հեռախոսին զանգահարելու համար քաղաքի կողմի փոխարեն հարկավոր է հավաքել բջջային կապի օպերատորի կոդը՝

Հայաստանի մի բնակավայրից մյուսը զանգահարելու համար անհրաժեշտ է հավաքել 0 - քաղաքի կոդը - հեռախոսատիրոջ համարը Մոբիլային հեռախոսին զանգահարելու դեպքում՝ 0 - բջջային կապի օպերատորի կոդը և հեռախոսատիրոջ համարը՝

Հայաստանից միջազգային զանգի համար հավաքել 00-երկրի կոդը-քաղաքի կոդը-հեռախոսատիրոջ համարը:

Հայաստանում ամենուր կայուն է բջջային կապը:

Ո՞ր թանգարանները պետք է այցելել առաջին հերթին

Երևանը հարուստ է թանգարաններով. Դրանցից խիստ

ներկայացուցչականներն ենք Հայաստանի Պատմության քանգարանը, Ազգային պատկերասրահը, Մատենադարանը /ձեռագրերի ամենահարուստ ֆոնդը/, Ժամանակակից արվեստի, Հայերի ցեղասպանության, Ժողովրդական արվեստի, ուղղման՝ «Մայր Հայաստան», Երկրաբանության, Փայտի փորագրության քանգարանները: Կա նաև Հայաստանի ակադեմիայի գործիչների հուշաքանգարան

***Ինչպես հաճույք պատճառել ընկերների
լեզվի նկատմամբ ուշադրություն ցուցաբերելով***

Շատ հաճելի կլինի, եթե Ռուսաստանից եկած հյուրը արտասանի.

-Բարև /ձեզ/

-Շնորհակալություն

-Բարի լույս

-Կներեք

-Բարի օր

-Բարի երեկո

-Ցտեսություն

-Բարի գիշեր

***Անհրաժեշտության դեպքում Ռուսաստանում
ինչպես գտնել Հայաստանի դեսպանությունը
և Հյուպատոսությունը***

Մոսկվա, Արմյանսկի նրբանցք, 2

Հեռ. /495/ 924 12.69, ֆաքս 924.45 35

Հյուպատոսական բաժին. Հեռ. 924.34.43

Պետերբուրգում ՀՀ Գլխավոր հյուպատոսությունը.

Դեկաբրիստների փող. 22, բն 13

Հեռ. /812/ 311.72.36. ֆաքս 110 66 20

Անհրաժեշտության դեպքում ինչպես գտնել

Հայաստանում Ռուսաստանի դեսպանությունը

Երևան, Գրիգոր Լուսավորչի փողոց, 13ա.

Հեռ. /37410/ 56.74.27, 58.98 43:ֆաքս 56 71 97, 58 24.63,

ՅԱԿԵԼՎԱԾՆԵՐ

- **Տոները, ժողովրդական սովորույթները և ազգային խոհանոցը**
- **Կոնյակները՝ ինչ գիտես և ինչ չգիտես հայերի հպարտության առարկայի մասին**
- **Լրացրու գիտելիքներդ - մատենագիտություն**
- **Հայաստանի հետ բարեկամության և համագործակցության ուսաստանյան ընկերության վարչության անդամների կազմը**
- **Հայաստանի հետ բարեկամության և համագործակցության ուսաստանյան ընկերությունը ընդունվողների հարցաթերթի և դիմումի նմուշը**

1. ՏՈՆԵՐԸ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՀԱՆՈՅԸ

**Պատմում է պետական ու ժողովրդական հիմնական տոների մասին, հարսանեկան, երեխայի ծննդյան ու թաղումների սովորույթների մասին:
5 բաժին**

● ***Հայաստանի պետական տոների և հիշատակի օրերի թվում են՝***

Փետրվարի 15-ը - Վարդանանք /Սուրբ Վարդանի օրը/ ի հիշատակ պարսիկների դեմ մղված ճակատամարտի, որտեղ մաքառում էին քրիստոնյա մնալու իրավունքի համար. Ապրիլ. 7-ը՝ Մայրության ու գեղեցկության օրը 24-ը՝ 1915 թ. Ցեղասպանության զոհերի հիշատակի օրը. Մայիս. 9-ը՝ Հաղթանակի ու խաղաղության օրը. 28-ը՝ Առաջին Հանրապետության օրը Հունիսի 1-ը՝ Երեխաների պաշտպանության օրը: Հուլիսի 5-ը՝ Սահմանադրության օրը Սեպտեմբերի 21-ը՝ Անկախության օրը. Դեկտեմբերի 7-ը՝ 1988 թ Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակի օրը.

● ***Հինավուրց ժողովրդական տոների թվում են՝***

Ամանորը /Նոր տարին/: Օջախում թարմացնում են կրակը, հազնում են նոր հագուստներ, կրակի վրա դնում են մաքուր ջուր, հաց են թխում. Եթե հաջող է, ուրեմն կյանքը բարեհաջող

րույկներ, նորապասակները թռչում են կրակի վրայով, որպեսզի ցավերը «այրվեն» և ծնվեն առողջ երեխաներ, իսկ երբ սկսում է մթնել, խարույկների շուրջը սկսվում են հնագույն պարերը՝ 7 պտույտով պարտադիր շուրջպարով

Չատիկ: Բացի բացառիկ կրոնական արարողություններից, հնագույն սովորույթով կատարվում է գոհաբերության գեղեցիկ ծիսակատարություն: Տոնախմբությունը շարունակվում է բնության գրկում, գվարճալի խաղերով, ձիարշավով, պարերով ու խարույկներով

Համբարձման տոն: Բացի բացառիկ կրոնական արարողություններից, հնագույն սովորույթով հարկավոր է հավաքել բուժիչ խոտեր, իսկ գուշակության համար 7 սարից հավաքել ծաղիկներ, 7 աղբյուրներից՝ ջուր, բայց այնպես, որ վիշապները չարթնանան:

Մյուս օրը գեղեցիկ հագնված պատանիներն ու աղջիկները գնում են տները, գովքի երգեր են երգում /ինքնատիպ քառյակներով/, ծաղկեփնջեր են նվիրում, փոխարենը ստանալով բարի խոսք և զանազան քաղցրավենիքներ

Վարդավառ: Ամենահնագույն տոնը բերքահավաքից հետո, բայց մրգահավաքից առաջ: Մարդկանց արթնացնում է գուռնայի ձայնը՝ սարերից իջնում են հովիվները՝ գոհաբերության գառներով, որ ոչ միայն շնորհակալություն ասեն հողին, այլև անձրևներ խնդրեն: Դրա համար ջուր են լցնում միմյանց վրա, որպեսզի մարդիկ շնորհակալություն հայտնեն հողին ու գոհաբերություն անեն Ոգիներին, որոնք փակում են աղբյուր-

խուսվում ամուսնությունները ըստ «Հարուստի աղջկան դժվար է գոհացնել» ասույթի:

Թույլ էր տրվում ընտանիք ստեղծել 13-14 տարեկան պատանիներին և 11-13 տարեկան աղջիկներին. շատ տարածված էր հետևյալ հումորիստական ասացվածքը. «Եթե աղջկան խփես փափախով և նա չընկնի, ուրեմն, ժամանակն է նրան ամուսնացնել». Պատանու ծնողները, հարսնացու ընտրելով, դիմում էին այդ աղջկա ընտանիքին քաջածանոթ իրենց որևէ բարեկամուհու, խնդրելով միջնորդ լինել իրենց ընտրյալի մոր հետ բանակցություններում և նրան համոզել ստանալու իրենց աղջկա ամուսնության վերաբերյալ հոր համաձայնությունը:

Հաջողությունն ապահովելու համար պատանու ծնողները աղջկա տունը միջնորդի այցելության ժամանակ իրենց տան սյունին կախում էին սանր կամ շերեփ:

Մի քանի օր հետո տեղի էր ունենում հիմնական խնամախոսությունը Խնամիները այլաբանության ձևով հայտնում էին իրենց այցի նպատակը «Մենք եկել ենք ձեր տնից վերցնելու մի բուռ մոխիր՝ մեր օջախի մոխրի հետ խառնելու համար. եկել ենք, որ ձեր ջահից վառենք մեր ջահը. եկել ենք, որ պեսզի ձեր քարը դնենք մեր պատի մեջ»:

Առավել կարևոր սովորույթ էր նշանադրությունը կամ նշանդրեքը: Փեսացուին և հարսնացուին պահպանում էին հիվանդություններից և աչքով տալուց.

Հարսանիք ... -Հարսանյաց կառաչարը մոտենալու մասին հայտնում էր հատուկ սուրհանդակը, հարսանյաց խնջույքի համար ընտրում էին թամադա, իսկ նրա օգնականը՝ ծնգլապետը, հմտորեն վարում էր երաժշտական մասը, այս կամ այն

հյուրին առաջարկում էր երգել, պարել, խոսք ասել այն մարդու մասին, որի կենացն էր առաջարկել թամադան: Փեսացուի հայրը համարվում էր «հարսանիքի տերը»: Հանդիսությունները տևում էին երեք օր, իսկ երբեմն՝ նաև մեկ շաբաթ: Պարտադիր էին նախնական ծիսակատարությունները՝ փեսացուին ու հարսնացուին լողացնելը, որի իմաստն էր՝ մաքրվել հարսանիքից առաջ: Փեսացուին լողացնելու ծիսակատարությունը տեղի էր ունենում գոմում, որին մասնակցում էին ընկերները: Հարսնացուին լողացնելու արարողությունը տեղի էր ունենում նրա տանը, մասնակցում էին ընկերուհիները և բարեկամուհիները: Դրան ուղեկցում էին հանպատրաստից երգերը, պարերը, հյուրասիրությունները /սովորաբար՝ ձվածեղ մեղրի հետ/: Ավանդույթ էր նաև հանդիսավորությամբ հարսանեկան հաց թխելը:

Հարսանիքից առաջ փեսացուի հայրը քահանայի հետ այցելում էր գերեզմանատուն՝ հարազատների գերեզմանի վրա հոգեհանգիստ տալու համար: Ընդունված էր նաև, որ փեսացուն քահանայի հետ պետք է շրջի բոլոր այն տները, որտեղ վերջին տարվա ընթացքում եղել էին հանգուցյալներ:

● *Համառոտ այն մասին, թե, ըստ հին սովորույթների, ինչ է արվում երեխա ծնվելու դեպքում*

Դժբախտությունից խուսափելու համար 40 օր նորածին երեխայի գլխավերևում անընդհատ ջահ էր վառվում, քանի որ հավատում էին, որ կրակը մաքրելու ուժ ունի: Մանկան օրորոցի վերևում կախում էին զանազան պահպանիչ-հմայիլներ. օրորոցը զարդարում էին փորագիր խաչերով, բարձի տակ

թաքցնում էի հացի, ածխի կտորներ, գրություններ հնայախտություններով: Օրորոցի մոտ դնում էին ջրով լի թաս և այլն: Այդ ընթացքում երեխային չէր կարելի հանել տնից: Եթե նույնիսկ դա պետք է արվեր, ապա մայրը իր մոտ պետք է ունենար ինչ-որ հմայիլ /պահպանիչ/ մետաղյա իր, սովորաբար՝ դանակ կամ շամփուր, իսկ երեխայի ծածկոցի վրա դնում էին մի կտոր հաց կամ ածուխ:

«Քառասուն օր» ավարտվում էր երեխային ու մորը լողացնելու ծիսակատարությամբ: Նորածնին լողացնում էին ծղոտի վրա /որը հետո այրում էին/, հետո օրորոցը, երեխային և մորը «հանում էին արևի տակ»: Երեկոյան տանը հավաքվում էին մոտիկ բարեկամուհիները և մորը երեխայի հետ ուղեկցում էին եկեղեցի, որտեղ տեղի էր ունենում վերջնական մաքրումը:

Կնունքը տեղի էր ունենում երեխայի ծնվելուց անմիջապես հետո, սովորաբար, մեկ շաբաթ հետո. Կնունքի ժամանակ նրան անվանակոչում էին Անունն ընտրվում էր ծնողների ցանկությամբ կամ այդ օրվա սրբի անունից: Հաճախ երեխայի համար անուն էին ընտրում նրա պապերն ու տատերը: Սովորաբար անվանը տալիս էին խորհրդանշանակ իմաստ և երբեմն փոխում էին, որպեսզի խաբեն չար ոգիներին, եթե երեխան աճում էր թույլ ու հիվանդոտ.

Երեխայի կյանքի առաջին տարվա հետ կապված էին որոշ սովորույթներ: Այսպես, տոնում էին առաջին ատամների հայտնվելը, կազմակերպում էին ընտանեկան հանդես, հրավիրելով մոտիկ բարեկամներին. Երեխային նստեցնում էին հատակի վրա, գլխին սփռոց էին գցում և վրայից լցնում էին թերխաշ հատիկ կամ հեղուկ

հոգին ունի սպիտակ աղավնու տեսք, իսկ եթե մեղքեր է ունեցել՝ սև թռչունի տեսք:

Դուրս թռած հոգին հանգուցյալի մոտ մնում է մինչև թաղումը: Ուստի թաղմանը սկսում են նախապատրաստվել անմիջապես: Մարմինը լողացնում են սովորաբար մեծահասակ մարդիկ, հաճախ՝ հանգուցյալի հետ նույն սեռի բարեկամներ: Մարմինը դնում են դրա համար նախատեսված տախտակի վրա՝ դեմքով դեպի արևելք և լողացնում են, սկսելով գլխից՝ օճառով, սառը ջրով՝ հատուկ ձեռնոցներով Մնացած ջրով ողողում են մահացածի ընտանիքի անդամների ձեռքերն ու ոտքերը, որպեսզի նրանք թոթափեն վախը, և երբեմն՝ բնակավայրում եղած հիվանդներին, որպեսզի «նրանք ստանան հանգուցյալի կյանքի արևը»:

Թաղումը սովորաբար մարդաշատ էր լինում: Թաղման թափոթին մինչև գերեզմանոց ուղեկցում էին տղամարդիկ, իսկ կանանց իրավունք էր տրվում եկեղեցում հուղարկավորության ծեսից հետո, որտեղ նրանք դառնորեն ողբում էին մահվան առթիվ, վերադառնալ տուն: Հանգուցյալին թաղում էին պատանքի մեջ, գլուխը դեպի արևմուտք. Գերեզմանատանը յուրաքանչյուրը մի բուռ հող էր գցում գերեզմանի մեջ հետևյալ խոսքերով. «Բարի ճանապարհ, ողջույն հաղորդիր մեր հանգուցյալներին»: Սովորություն կար գերեզմանի մեջ դնել զանազան առարկաներ, որոնք, ինչպես կարծում էին, անհրաժեշտ կլինեն և հանգուցյալի, և վաղուց մահացած բարեկամների համար: Այսպես, դարբնի «հետ դնում էին մուրճ, հյուսնի հետ՝ կացին, վարսավիրի հետ՝ ածելի, քահանայի հետ՝ Ավետարան և գավազան, վաղամեռիկ երեխաների հետ, ուղարկում էին» խնձոր: Թաղումից հետո գերեզմանոցում բոլոր ներկաները մո-

տենում էին հանգուցյալի հարազատներին և սեղմում նրանց ձեռքը՝ ի նշան վշտի ու ցավակցության Դրանից հետո նրանց հրավիրում էին հոգեհացի

Այդ ճաշասեղանին նստելուց առաջ պետք է լվանալ ձեռքերը, իր վրայից մաքրել այն ամենը, ինչ կապված է հանգուցյալի հետ, «մաքրվել»: Սեղանի շուրջը քահանան աղոթք է կարդում հանգուցյալի հոգու հանգստի համար, բոլորը առանց բաժակները խփելու խմում են «նրա լուսավոր ուղու» համար, որպեսզի նա «այն աշխարհում միջնորդ լինի» երկրի վրա մնացյալ հարազատների համար: Բաժակաճառերը համառոտ են և հիմնականում՝ մխիթարական:

Մյուս օրն առավոտյան, արևածագից անմիջապես հետո հանգուցյալի բարեկամները և մերձավորները նորից գնում են գերեզմանատուն՝ սգալու և լաց լինելու իրենց կորուստը:

● *Համառոտ՝ հայերի ազգային խոհանոցի մասին*

Դրա առանձնահատկությունների մասին: Հայկական խոհանոցին բնորոշ գծերը ստեղծվել են մեր թվարկությունից հազար տարի առաջ: Օջախի ձևը /թոնիրը/ և ամանեղենի տեսակը /կավե/ իրենց ազդեցությունն են թողել կերակուրների բնույթի վրա Օրինակ, թոնիրով է պայմանավորված հացի լավաշ տեսակը, թոնիրը հարմար է նաև բանջարեղեն տապակելու, շիլա եփելու, ձուկ և թռչուն ծխացնելու համար

Պատրաստուկները, որպես կանոն, բարդ են: Մսեղեն, ձկնեղեն և բանջարեղեն կերակուրները սեղան են մատուցվում լցոնքումից, հարելուց հետո, պյուրեի և սուֆլեի տեսքով: Բայց սիրված են նաև ամբողջական մսակտորից պատրաստվող կերակուրները՝ խորովածը, պաստեղները, կճուճովը և այլն. Հնագույն

րը, չամիչը. Եվս մի առանձնահատկություն հաճախ նույն ճաշ-
ատեսակը կարելի է և տապակել, և եփել, և շոգեխաշել

● **Պատրաստման միջոցներից մի քանիսը**

«Հայաստան» աղցանը. Թարմ վարունգը և պոմիդորը
կտրտել բարակ շրջանակներով և շարել ափսեի վրա հեր-
թական շարքերով: Մի վարունգ կտրել չորս կտորի և դնել
աղցանի մեջտեղը Այդ վարունգի վերևում դնել բարակ
կտրտված վարունգից պատրաստված զանգակներ: Աղցանի
վրա աղ ցանել, զանգակների մեջ մի քիչ պղպեղ գցել,
ձևավորել մաղադանոսով ու ռեհանով, զանգակներին տալով
ծաղկեփնջի տեսք.

100 գրամ պոմիդորին՝ 100 գրամ վարունգ

Աղը, պղպեղը, մաղադանոսը և ռեհանը՝ ըստ համի

Կանաչին աղցանի վրա կտրտվում է մեկ բաժնի վրա 5
գրամից ոչ ավելի, աղը՝ 3 գրամ, պղպեղը՝ աղացած սև կամ
կարմիր՝ 0,1 գրամ մեկ բաժնին:

«Երևանյան» աղցան. Պոմիդորը, վարունգը, բուլղարա-
կան պղպեղը լվանալ: Վարունգի կեղևը մաքրել, պղպեղից կտ-
րել պտղակոթը և հեռացնել միջուկը, սոխ մաքրել Բոլորը կտր-
տել օղակաձև: Համեմը, ռեհանը և մաղադանոսը մանր կտր-
տել: Ափսեի մեջ բանջարեղենը շարել շարքերով հետևյալ հեր-
թականությամբ՝ պոմիդոր, վարունգ, բուլղարական պղպեղ:
Ցանել աղ, աղացած սև պղպեղ, վրայից դնել սոխ, լցնել քա-
ցախ, վերջում ցանել կանաչին:

*100 գրամ պոմիդոր, 75 գրամ վարունգ, 25 գրամ բուլղարա-
կան պղպեղ, 25 գրամ գլուխ սոխ. սև պղպեղը, քացախը,*

համենը, ռեհանը, մաղաղանուր ցանել ըստ համի, ընդամենը ոչ ավելի 5 գրամից:

Մշոշ. Ոսպր հնրել, լվանալ և եփել մինչև պատրաստ լինելը, աղ ցանել, ավելացնել մանր կտրտած տապակած գլուխ սոխ, մանրած ընկույզ, լվացած ծիրանի չիր և եփել 10-15 րոպեի չափ՝ պարբերաբար խառնելով Սեղանին մատուցելիս ցանել սև պղպեղ և մաղաղանու: Մատուցվում է մեծ սկուտեղով:

80 գրամ ռսպին՝ 20 գ արևածաղկի ջեթ, 25 գ գլուխ սոխ, 10 գ չիր, 15 գ ընկույզ աղը, պղպեղը, մաղաղանուր՝ ըստ համի.

Խաշ. Նախօրոք մաքրված տավարի տոտիկները խանձել, մանրամասն լվանալ և, մասերի կտրտելով, դնել սառը ջրի մեջ 24 ժամ և 2-3 ժամը մեկ անգամ ջուրը փոխել: Դրանից հետո լվանալ, դնել ոչ լայն պղնձի մեջ և ջուր լցնել այնքան, որ 15-20 սմ բարձր լինի մսից: Եփել առանց աղի, առանց ուժեղ եռալու, պարբերաբար երեսից հեռացնելով հավաքվող քափը և ճարպը այնքան, մինչև որ միսը թեթևակի անջատվի ոսկորից Եփելու ժամանակ կարելի է ավելացնել գանձակ. Մատուցելուց 5 րոպե առաջ խաշի վրա լցնել հավաքած ճարպը. Խաշը պետք է մատուցել շատ տաք: Սեղանին դնել աղ, առանձին պնակում մսաջրի մեջ բացած ծեծած սխտոր և լավաշ

300 գ տավարի տոտիկներին կամ 400 գ ոչխարի տոտիկներին՝ 100 գրամ գանձակ, 800-1000 մլ ջուր Աղը և սխտորը՝ ըստ համի:

Կոլոլակ /բրնձի ապուր մսե գնդիկներով/. Բրինձը հնրել, լվանալ, լցնել եփած մսապուրի մեջ՝ Ավելացնել թեթև տա-

պակած սոխ: Եփած միսը աղալ մսադացով, ավելացնել ձու, աղ, պղպեղ, կանաչի. Երբ բրինձը պատրաստ լինի կիսով չափ, այդ բրնձից 2-3 ճաշի գդալ քամել քամիչով և խառնել աղացած մսի հետ: Ստացված զանգվածից պատրաստել մսագնդիկներ, լցնել եռացող մսաջրի մեջ և եփել թույլ կրակի վրա Կաթի հետ խառնել 2 ձու, դանդաղ խառնելով լցնել մսաջրի մեջ: Ապուրի վրա կտրատել մաղադանոս և սամիթ:

Հարկավոր է թանջր մսապուր՝ 2 լիտր, բրինձ՝ 0,75 բաժակ, ոչխարի կամ խոզի միս՝ 500 գրամ, շու՝ 3 հար, սոխ՝ մեկ գլուխ, կարագ՝ 1 ճաշի գդալ կաթը՝ ըսր համի, պղպեղը և աղը՝ ըսր համի, մաղադանոսը, սամիթը, ռեհանը՝ ըսր համի

«Չլբուր» ապուր. Գլուխ սոխը մանր կտրտել, յուղով տապակել, վրան սառը ջուր լցնել և եփել մինչև եռալը: Ավելացնել հնրած ու լվացած բրինձ, աղ, պղպեղ և եփել մինչև բրինձը պատրաստ լինի: Այնուհետ ապուրի մեջ գցել խփած ձու և այդ բոլորը շատ լավ խառնել: Չլբուրը սեղան մատուցելուց առաջ ավելացնել մաղադանոս

100 գրամ գլուխ սոխին՝ 1 շու, 15 գ հալած յուղ, 20 գ բրինձ աղը, պղպեղը, մաղադանոսը՝ ըսր համի

Զավարապուր. Հնրած ու լվացած ցորենի ձավարի վրա ջուր ավելացնել և եփել մինչև կիսապատրաստ վիճակը: Ավելացնել խոշոր կտրտված կարտոֆիլ, մանր կտրտված տապակած գլուխ սոխ, տապակած տոմատի մածուկ, աղ և եփել մինչև ձավարը պատրաստ լինի. Պատրաստի ապուրի վրա ավելացնել սառը ջրով բացված ձվի դեղնուց, եփել մինչև եռալը և վերցնել կրակի վրայից:

40 գրամ ցորենի չավարին՝ 25 գ գլուխ սոխ, 25 գ փոմարի մածուկ, 15 գ հալած յուղ, 100 գ կարտոֆիլ, գ շու Աղը, պղպեղը, մաղադանուր՝ ըստ համի

Սպաս. Այլուրը խառնել ձվի հետ. Մածունին ջուր ավելացնել 1.1 հարաբերությամբ /բրնձի կամ ձավարի եփած ջրի հետ/ Չվի և այլուրի խառնուրդը լցնել ջրով բացած մածունի վրա՝ անընդհատ խառնելով: Այս ամբողջ խառնուրդով պղինձը դնել ցածր կրակի վրա և, անընդհատ խառնելով, հասցնել մինչև եռալը: Եփած բրնձը լցնել ապուրի վրա, մանր կտրտած և տապակած գլուխ սոխ, համեմ կամ դաղձ, խառնել և կերակուրը հասցնել մինչև եռալը Բրնձի փոխարեն կարելի է օգտագործել ցորենի ձավար, իսկ մածունի փոխարեն՝ թարմ թան:

200 գրամ մածունին կամ 500 գրամ թանին՝ 6 գ ալյուր, 25 գ գլուխ սոխ, 10 գ հալած յուղ, 45 գ բրինձ կամ ցորենի չավար, 6 գ դաղձ կամ համեմ, $\frac{1}{4}$ շու Աղը ըստ համի.

«Էջմիածնի բոգրաշ»։ Ոչխարի միսը կտրտել 30-40 գրամանոց կտորների, դնել պղնձի մեջ, լցնել սառը ջուր, փակել կափարիչով և եփել մինչև կիսապատրաստ լինելը՝ ցածր կրակի վրա, պարբերաբար հեռացնելով քափը. Եփած ոչխարի միսը հանել պղնձից և յուղով տապակել, իսկ մսաջուրը քամել. Տապակած մսի կտորների վրա լցնել քամած տաք մսաջուրը, ավելացնել յուղով տապակած գլուխ սոխը, խորանարդիկներով կտրտված կարտոֆիլ ու բադրիջան, մաքրած ու լայնքով կտրտված կանաչ լոբի, մանր բամիա, բուլղարական պղպեղ և եփել մինչև պատրաստ լինելը: Մատուցելուց 15 րոպե առաջ ավելացնել աղ, փոքր մասերի

կտրտած պոմիդոր և համեմունք-կանաչիներ.

125 գրամ ոչխարի մսին՝ 100 գ կարտոֆիլ, 20 գ գլուխ սոխ, 10 գ հալած յուղ, 100 գ պոմիդոր, 30 գ կանաչ լոբի, 20 գ բուլղարական պղպեղ, 20 գ բամբակ, 30 գ բաղրիջան. համեմը, ռեհանը և մաղադանուր՝ 3-ական գրամ Աղը և պղպեղը ըստ համի

Խաղողի թփով տոլմա. Ոչխարի մսի փափուկ մասերը կտրտել մանր մասերի, աղալ մաաղացով Ավելացնել թերեփ բրինձ, մանր կտրտած գլուխ սոխ, համեմ, դաղձ, ռեհան, ուրց, սուսամբար, աղ, պղպեղ. այս բոլորը մի լավ խառնել: Խաղողի թարմ տերևները դնել եռման ջրի մեջ 2-3 րոպե /դրանք եռացնել չի կարելի/, հետո հեռացնել կոթերը. Վերցնել 1-2 տերև, վրան դնել աղացած մսից և փաթաթել ծրարի պես: Պղնձի հատակին դնել ոչխարի ոսկորներից, որոնք մնացել են փափուկ միսը հեռացնելուց հետո, և խաղողի տերևներ: Վրայից շարել փաթաթած տոլմաները, լցնել մի քիչ ջուր և մսաջուր ու պինդ փակել շրջած ափսեով: Պղինձը փակել կափարիչով և թույլ կրակի վրա տոլման եփել մինչև պատրաստ լինելը. Տոլման մատուցել եփելու ժամանակ ստեղծված հյութով: Մանրացրած սխտորով կամ շաքարով ու դարչինով մածուներ մատուցել առանձին:

100 գ ոչխարի մսին՝ 80 գ խաղողի տերև, 5 գ բրինձ, 20 գ գլուխ սոխ, 50 գ մածուն, 2 գ սխտոր կամ 1 գ դարչին, 10 գ շաքար Աղը, պղպեղը, դաղձը, ուրցը, համեմը, ռեհանը, սուսամբարը՝ ըստ համի

Զխրթմա. Մաքրված հավը դնել պղնձի մեջ, ջուր լցնել այնքան, որ ծածկի հավի մարմինը, և եփել, պարբերաբար մսաջրից հեռացնելով քափը Եփված հավը հանել պղնձից և կտր-

տել, իսկ մսաջուրը քամել։ Քամած մսաջրի մեջ դնել հավի կտորները, մանր կտրտած ու տապակած գլուխ սոխ, բոված և մսաջրով խառնած այլուր և եփել մինչև եռալը։ Նախօրոք պատրաստել շաֆրանի թուրմ։ Դրա համար շաֆրանը լցնել բաժակի մեջ, ավելացնել եռացրած ջուր $1/2$ բաժակ /, փակել կափարիչով և դնել տաք տեղ 2 ժամով, որից հետո քամել։ Թուրմի գույնը պետք է լինի մուգ դարչնագույն, համը՝ անուշաբույր։ Առանձին ամանում լավ խառնել ձվի դեղնուցը, աստիճանաբար ավելացնել տաք մսաջուր, որպեսզի դեղնուցը գնդերի չվերածվի։ Հետո ավելացնել շաֆրանի թուրմը, սպիտակ գինու քացախ, մանր կտրտած համեմ ու խառնել։ Մատուցելուց առաջ ավելացնել պատրաստված դեղնուցը Չհասցնել մինչև եռման։ Այս ապուրը պատրաստելու համար հավի փոխարեն կարելի է օգտագործել ոչխարի միս։

150 գ հավին՝ $\frac{1}{2}$ ջուր/դեղնուցը/, 80 գ գլուխ սոխ, 15 գ հալած յուղ, 10 գ այլուր, 15 գ գինու քացախ, աղը, շաֆրանը, համեմը՝ ըստ համի.

● *Չրույցներ սեղանի շուրջը*

-Կնոջդ ասա, որ ոչխարի սիրտը հարկավոր է տապակել ցածր կրակի վրա, որպեսզի ճարպը չայրվի։ Բացի այդ, և փայտ քիչ կգնա, և տապակածը ձեռք կբերի հաճելի համ...

Ոչխարի սրտի տապակածը նրբահամ խորտիկ է, եթե պատրաստվում է խելքով, անպայման ցածր կրակի վրա, անպայման ճիշտ պետք է զգել աղն ու սրպեղը Մատերդ հետը կուտես։

Թոնրում թխած լավաշի կտորը կարելի է, թերևս, համեմատել նապաստակի նուրբ ականջի հետ, որն այնքան թափանցիկ է, որ նրանով արևի ճառագայթն է անցնում.

2. Կ Ո Ն Յ Ա Կ Ն Ե Ր Ը ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ:

8 հարց ու պատասխան

Հայաստանում երբ է առաջացել գինեգործությունը

Հայաստանը այն ոչ շատ երկրներից մեկն է, որոնք եղել են խաղողագործության և գինեգործության օրրանը. Հնէաբանները դա հայտնաբերել են բիրլիական Արարատի մերձակա ուրարտական քաղաքների պեղումների ժամանակ. Արարատյան դաշտավայրում առաջին խաղողի ողկույզը աճել է մոտ 3000 տարի առաջ: Հույն պատմաբաններ Հերոդոտ Գալիկաոնացին, Քսենոֆոն Աթենացին և Ստրաբոնը նշել են, որ մոտ 2 500 տարի առաջ Հայաստանից արտահանվում էին հիանալի գինիներ:

Ինչպիսին է հայկական

կոնյակների ծագումնաբանությունը

Ժողովուրդը պահպանել է այդ օրհնյալ խմիչքի նախապապի հիշատակը: Սովորություն կար եփել մերոն՝ հազար ու մի խոտերի թուրմ: Դրանով այսօր էլ մանուկներին ողողում են կնքելուց առաջ: Այդպես Հայաստանի Տրդատ արքայի պալատում ապրող գինեգործ Պարգևը սովորել է այդ մերոնից թորել

առանձնահատուկ համ ունեցող ակոհուլային խմիչք: Նա դրանով ուրախություն է պատճառել նույնիսկ Ներոնին:

Հայկական կոնյակի այսօրվա ծագումաբանությունը գալիս է 1887 թվականից մեծածախ վաճառական Նիկոլայ Թաիրովը /Թաիրյանը/ Էրիվանում կառուցել է Ռուսաստանում առաջին կոնյակի գործարանը: Բայց 12 տարի անց այն վաճառվել է արդյունաբերող Ն. Շուստովին: «Շուստով և որդիներ» ֆիրման վերակառուցել է գործարանը և նկուղներում դրել է կաղնե տակառներ՝ խմիչքի երկարամյա պահպանության համար 1900 թ. այդ կոնյակը Փարիզի ցուցահանդեսում արժանացել է «Գրան-Պրի» պարգևի և իրավունք է ստացել անվանվել կոնյակ. 1913 թվականին «Շուստով և որդիներ» ընկերությունը արժանացել է Չեռն Կայսերական Մեծության պատի մատակարարը դառնալու պատվին:

1917 թ.-ից հետո Շուստովի արտադրությունն ազգայնացվեց:

***Ճիշտ է, որ պարոն Ուինսթոն Չերչիլը
հայկական կոնյակի սիրահար էր***

Հակահիտլերյան կռալիցիայի դաշնակիցների 1945 թ. Յալթայի համաժողովի համար, որտեղ Անգլիան ներկայացնում էր վարչապետ Չերչիլը, Հայաստանը պատրաստել էր 50 աստիճանի «Գվին» կոնյակ: Լոնդոնցի հյուրը խնդրել է Խորհրդային Միության առաջնորդ Ստալինին իրեն վաճառել մի խմբաքանակ այդ կոնյակից. Ստալինը կատակել է. «Խորհրդային Միությունը հայկական կոնյակով ապահովված է լիովի, վաճառել, թերևս, կարելի է»: Երբ զտամյալ Չերչիլին

հարցրել են, թե ինչու՞մն է նրա երկարակեցության գաղտնիքը, նա, իբր, պատասխանել է. «Երբեք մի ուշացեք ճաշից, ծխեք Հավայան սիգարներ և խմեք հայկական կոնյակ»:

Կա՞ն, արդյոք, հայկական կոնյակի ինչ-ինչ առանձնահատուկ գաղտնիքներ

Երևանի տեղեկատվական միջոցներում, օրինակ, կարելի է կարդալ այսպիսի տողեր. «Դրսում տիրող երևանյան 35 աստիճանի շոգից մի քայլ ես անում ներս՝ դեպի կիսամութ շենքի հովությունը... Ապշեցնում է հոտը՝ կոնյակի սպիրտների հագեցած խառնուրդը ստեղծում է աննկարագրելի մի փունջ՝ կաղնու, լոբենու, ընկույզի, վանիլի, շոկոլադի, արևելյան ծաղիկների և համեմունքների փունջ»։ Այդ զարմանահրաշ բուրմունքը ստեղծում են հսկայական տակառները։ Դրանցով է զբաղված մի ամբողջ հսկայական տարածություն գրեթե մինչև առաստաղը. Յուրաքանչյուր տակառը գիտեն գրեթե անունով, իսկ կոնյակի արտադրության մասին պատմում են զարմանալի բաներ։ Օրինակ, ապագա կոնյակի մի մասը՝ 4 տոկոսը, երբեք չի հասնում շշին, այդ գոլորշիացումները կոչում են «հրեշտակների բաժին»։ Ինչքան երկար է կոնյակը պահվում, այնքան դառնում է ավելի մուգ, փափուկ և համը շատ հարուստ։

Մասնագետները նշում են նաև խաղողի հազվագյուտ տեսակը։ Փոքրիկ Արարատյան դաշտում կա 30 հողատեսակ, դրա շնորհիվ խաղողի նույն տեսակը ապագա կոնյակին տալիս է միմյանց չնմանվող բազմաթիվ համային նրբերանգներ՝ ընդհուպ մինչև շոկոլադը և վանիլը։

Քաժակաճառերից: «Հայկական կոնյակի մի կումը հուզում է կնոջ փառաբանքի նման, ուրախացնում է ինչպես անմեղ աղջնակի համբույրը և խաղաղեցնում է ինչպես երեխայի ժպիտը Խմենք առողջության կենացը»

Որ կոնյակներն են առանձնապես հեղաբրբրում սիրահարներին

Հռչակ ձեռք բերած ոչ քիչ կոնյակների թվից առանձնացնենք երկուսը «Նաիրին»՝ «Արարատ» բրենդիի ամենահին ու թանկ տեսակը. Այն ստանալու համար խառնում են 18-20 տեսակի սպիրտ, որոնցից յուրաքանչյուրը հասունանում է 20 տարի: Նրա փնջում կան ընկույզի, մայրենու, սև սալորի և հասած տանձի համային երանգները Փարիզում այն ներկայացնելուց հետո արվեստի հայտնի գործիչներ ստեղծել են երաժշտություն, քանդակներ և նույնիսկ օժանելիք

- «Արքայադուստր Աննա» կոնյակն ունի 15 տարվա հասունություն. «Մեծ ասպետներ» բրենդների շարքից է Այդպիսի ոչ սովորական ձևով պատշաճն են հատուցել հայկական ծագումով Բյուզանդիայի արքայադստեր պատվին, որն այնուհետ դարձել է Ռուսաստանի մեծ իշխանուհի

Այդ շարքում կան, օրինակ, Հայոց թագավոր Արծրունու, Ֆրանսիայի մարշալ Մյուրատի /նա ինքը՝ Հովակիմ Մուրադյան/ անուններով կոնյակներ:

Ով է Հայաստանում կոնյակի հիմնական արտադրողը

Կոնյակի ամենահզոր և հեղինակավոր արտադրողներից մեկը Երևանի կոնյակի գործարանն է: Վերջին երկու տարվա

ընթացքում այն մեծացրել է երկարատև հասունության կոնյակների արտադրության բաժինը: Օրինակ, 15-20 տարվա հասունության «սուպերպրեմիում» կոնյակի արտադրությունն աճել է 180 հազար լիտրով /35 տոկոս/.

***Հայկական կոնյակը մաքահարարվո՞ւմ է,
արդյոք, Ռուսաստան***

2005 թ. Ռուսաստանում վաճառվել է 2,5 միլիոն լիտր հայկական կոնյակ: Նախատեսվում է մատակարարման աճ:

«Թթի օղի»․ ինչ բան է դա

Թթի պտղով պատրաստվող 70 տոկոսանոց թնդությամբ հազվագյուտ ալկոհոլային խմիչք է, որը հասունացվում է մինչև 3 տարի նույն այդ թթենու փայտի տակառներում /խանձված/ Ընդ որում, ունի բուժիչ հատկությունների համբավ / իբր բուժում է, մասնավորապես, ստամոքսաաղիքային տրակտի խոցը/: Մաքրվում է 3 անգամ, ընդ որում, արժաթե թիթղներով թաղանթավոր զտիչների վրա Ջգացվում է պտուղների և խոտերի նուրբ բույրմունքը, յուղայի է

3. ՀԱՄԱԼՐԻՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԳ- ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**Մեր համառոտ հանձնարարականները
ձեզ կծանոթացնեն ոչ միայն վերջերս
թողարկված գրքերին, այլև այն գրքերին,
որոնք վաղուց մտել են մատենագիտության ֆոնդի մեջ**

Ուղեցույցներ և տեղեկատու գրականություն

Հայաստան: Ուղեցույց. Լե Պտի Ֆյուտե շարքը. Մ.: Ավանգարդ, 2005:

Հանրագիտարան «Հայաստանի հրաշքները» / Ս Դիլանյանի, Ս.Սամուելյանի խմբագրությամբ: Երևան. Արեգ: 2004:

Խաչրասնովա Տ Հայկական խոհանոց: Դոնի Ռոստով. «Փյունիկ»: 1999:

Ավերիսյան Լ Ոչ սովորական ընտանեկան ճաշատեսակներ կամ հայկական հյուրընկալության դասեր: ՍՊԲ, Նևսկի պողոտա, 2005.

Պրիտկինա Է Հայկական մեծ հարսանիք. ՍՊԲ. Ամբորա. 2006:

Պառնասյան Ն, Մանուկյան Ժ Հայոց լեզվի ինքնուսույց, Մ: Սոֆիա. 2004:

Հարությունյան Գ Ս Ռուս-հայերեն գրուցագիրք: Մ., Ֆիլոմատիս: 2006:

Կ ր ո ն ը

Պերրոսյան Է Հինավուրց Հայաստանի աստվածները և ծիսակարգերը: Երևան, 2004:

Գուսյրա Դ. 1700 տարվա հավատարմություն: Հայաստանի պատմությունը և նրա եկեղեցին: Մ.: Յունիստրոյ Ս.Կ. 2005:

Պ ա տ մ ու թ յ ու ն ը

Հայ ժողովրդի պատմությունը հարցերում և պատասխաններում. Երևան, 2004:

Ամիրխանյան Մ. Ռուսաստանը և Հայաստանը: Երևան, 2003:

Տեր-Հակոբյան Ա. Հայ ժողովրդի պատմությունը և մշակույթը հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի սկիզբը. Մ. 2005:

Բարաթով Բ Արմենիադա: Պատմության տեսանկյունից: Մ Լինգվիստ: 2005:

Արուսյունովա-Ֆիդան Պատմություն հայկական գործերի մասին. Մ. Ինդրիկ. 2004:

Խաչիկյան Ա. Հայաստանի պատմությունը /համառոտ ակնարկ/: Երևան. 2004:

Լենգ Դ Հայերը ստեղծագործ ժողովուրդ են: Մ., Յենտրոպոլիգրաֆ: 2004.

Գուսյրա Դ. Դիչ Արարատից. Մ. Յունիստրոյ Ս.Կ. 2005:

Ոսկանյան Կ. Ծակատամարտ Հայաստանի համար: ՍՊԲ 2006:

Օհանջանյան Ա. 1915 թվականը: Անվիճելի վկայություններ: ՍՊԲ. 2005:

Իլլարիոնով Վ Պ, Գալստյան Օ Ա Ռուսաստանը և Հայաստանը: Խորհրդածություններ անցյալի, ներկայի և ապագայի մասին Մ Օլմա-Պրեսս 2003.

Նեյման Մ Հայերը: Մ.: Յունիստրոյ ՍԿ. 2005:

Գեորգիով Բ Վերադարձ Էրզրում: Մ.: Յունիստրոյ ՍԿ. 2005:

«Հայկական պատմավեպ» շարք /Մ. Յունիստրոյ ՍԿ 2005/.

Դեմիրճյան Դ Վարդանանք. Գիրք 1-ին, 2-րդ:

Չորյան Ս Պապ թագավորը:

Չորյան Ս Հայկական ամրոցը:

Դաշրենց Խ Հովիվների կանչը:

Բաֆֆի Դավիթ Բեկ:

Բաֆֆի Խենթը:

Խանգաղյան Ս Մխիթար սպարապետ:

Խանգաղյան Ս Հայոց թագուհին:

Աբովյան Խ Վերք Հայաստանի:

Շաթիրյան Մ Արծաթի դարը:

Չարյան Ն Սասունցի Դավիթը. Երևան 2004.

«Հայասրանի քնարերգությունը» շարք /Մ Յունիստրոյ ՍԿ 2005/.

Հովհաննես Շիրազ Քնարական:

Պարույր Սևակ Բանաստեղծությունների ընտրանի.

Նահապետ Բուչակ Քնարերգություն

Կոնստանդին Երզնկացի Բանաստեղծություններ:

*Վահան Տերյան Բնարական
Դանիել Վարուժան Բանաստեղծություններ
Սիլվա Կապուտիկյան Հատրնտիր*

Մ ա ն կ ա կ ա ն գ թ ա կ ա ն ու թ յ ու ն

Հայաստան: Հանրագիտարան: Երևան, 2002.

Թումանյան Հ Հեքիաթներ և առասպելներ: Մ., Յունիստրոյ
ՍԿ 2005.

Իսահակյան Ս Իմ ծանոթ գետածին Հեքիաթ երեխաների
համար Մ.: Իդեալ-Պրեսս:

**Ռ-ուսաստանի գրադարաններում ծանոթացիր
գեղարվեստական գրականության դասականների
և ժամանակակից վարպետների հետ:**

Ահա նրանց անունները

Գրիգոր Նարեկացի, Ա. Բագրատունի, Խ. Արուսյան, Մ.
Նալբանդյան, Ս. Շահազիզ, Պ. Դուրյան, Բաֆֆի, Հ Թուման-
յան, Ա. Շիրվանզադե, Հ. Հակոբյան, Շ. Կուրդինյան, Ե. Չա-
րենց, Ս Չորյան, Արագի, Մ Արմեն, Վ Թոթովենց, Հ Շիրազ,
Գ. Սարյան, Գ Էմին, Ա Սահինյան, Պ Սևակ, Ս Կապուտիկ-
յան, Վ Դավթյան, Հ. Հովհաննիսյան, Հ Քոչար, Մ Շատիր-
յան, Ս Խանզադյան, Գ Սևունց, Պ Սևակ, Օ Դուկասյան,
Պ Չեյթունցյան, Հ Մաթևոսյան, Վ Պետրոսյան, Է Խալաֆ-
յան, Մ.Գալշոյան, Ռ. Հովսեփյան, Ա Ավագյան, Չ Բալայան,
Լ Խեչոյան

**4. «Հայաստանի հետ բարեկամության
և համագործակցության Ռուսաստանյան
ընկերություն» միջտարածաշրջանային
հասարակական կազմակերպության
Վարչության կ ա զ մ ը**

Ընկերության Նախագահ.

Կրիվոպոլսկոյ Վիկտոր Վլադիմիրի

- հասարակական գործիչ, գրող, հրապարակախոս, Հայաստանի Գրողների միության պատվավոր անդամ, «Հայրենիքի պաշտպանների մասին ժողովրդական հիշատակը» միջազգային ընկերության կոորդինացնող խորհրդի նախագահ, «Ռուստովցիներ» հայրենակցության խորհրդի անդամ, «Պետրովկա 38» բարեգործական հիմնադրամի վարչության անդամ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Առաջին փոխնախագահ.

Օսիպով Վալենտին Օսիպի

- հասարակական գործիչ, գրող, Ռուսաստանի Գրողների միության բարձրագույն ստեղծագործական խորհրդի անդամ, Շոլոխովյան մրցանակի դափնեկիր

Փոխնախագահներ.

Աֆանասև Իվան Իվանի

- Մոսկվայի Կառավարության անդամի միջտարածաշրջանային հարցերի գծով խորհրդական, Մոսկվայի Հարավ-Արևելյան օկրուգի պրեֆեկտ, «Ռոստովցիներ» հայրենակցության տարածաշրջանային հասարակական կազմակերպության պատասխանատու քարտուղար

Ղարիբովա Օլգա Յակովի

- թատերական գործիչ, «Ամբողջ աշխարհը» միջազգային թատերական կենտրոնի նախագահ

Օջիրով Վալերի Նիկոլայի

- ՌԴ ՆԳՆ գլխավոր խորհրդական, գեներալ-լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս

Պատասխանատու քարտուղար.

Կոլեդինով Վիտալի Ֆյոդորի

- հասարակական գործիչ

Վարչության անդամներ.

Աղաջանյան Վլադիմիր Լևոնի

- «Խոլոդ - Ս» ԲԲԸ գլխավոր տնօրեն

Աժգիխինա Նադեժդա Իլիչի

- Ռուսաստանի Լրագրողների միության վարչության քարտուղար

Ալյոշկին Պյոտր Ֆյոդորի

- գրող, Ռուսաստանի Գրողների միության վարչության քարտուղար, «Գոլոս-Պրեսա» հրատա-

րակչության տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու

Հարությունով Միխայիլ Գևորգի

-Միջազգային իրավապահպանության ընկերության նախագահ

Բակշի Կիմ Նաումի

- գրող, պատմագետ, կինոդրամատուրգ, Հայաստանի Ազգային մրցանակի դափնեկիր, Հովհաննես Թումանյանի անվան, Հայաստանի Գրողների միության մրցանակների դափնեկիր, Ֆ. Նանսենի և Թեքեյանի անվան մրցանակների դափնեկիր

Վոլկով Յուրի Գրիգորի

- Հայաստանի հետ բարեկամության և համագործակցության Ռուսաստանյան ընկերության Ռուստովի միջտարածաշրջանային բաժանմունքի նախագահ, ԻՊՊԿ-ի տնօրեն, Ռուստովի պետական համալսարանի պրոռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, Դոնի Ռուստով քաղաք

Ոսկանյան Էվելինա Սամսոնի

- ՄՊՀ սոցիոլոգիական ֆակուլտետի ուսանողուհի

Գոլիկով Գենադի Վիկտորի

- Հայաստանի հետ բարեկամության և համագործակցության Ռուսաստանյան ընկերության Յարոսլավլի տարածաշրջանային բաժանմունքի վարչության նախագահ, ՕԱՕ «ԺԱՍՕ ապահովագրական ընկերության» Յարոսլավլի մասնաճյուղի տնօրեն, ք Յարոսլավլ

Գրիգորյան Սամվել Սամվելի

- ՄՊՀ Մեխանիկայի ինստիտուտի բնական պրոցեսների մեխանիկայի բաժնի վարիչ, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՀՀ գիտությունների Ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Չինական Ժողովրդական Հանրապետության արտասահմանյան ակադեմիկոս

Կոստրակով Վլադիմիր Գեորգիի

- ՌՖ Էկոնոմիկայի զարգացման և առևտրի նախարարության մակրոտնտեսական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հումանիտար հետազոտությունների ակադեմիայի ակադեմիկոս

Միրոնչիկ Վիկտոր Իոսիֆի

-«Մոսկվայի ազգությունների տուն» Մոսկվա քաղաքի պետական հիմնարկության տնօրենի տեղակալ

Նավոյան Յուրի Լյուդվիգի

- «Ռուս-Հայկական համագործակցություն» տարածաշրջանային հասարակական կազմակերպության նախագահ

Օնանյան Գլան Արմենակի

- բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակախոս, քննադատ, Գրողների միությունների միջազգային համակցության գործադիր կոմիտեի քարտուղար, տեխնիկական գիտությունների թեկնածու, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Ռուսաստանի, Վրաստանի, Մոսկվայի գրողների միությունների անդամ

Ռիբակով Ռոստիսլավ Բորիսի

- ՌԳԱ Արևելագիտության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հումանիտար հետազոտությունների ակադեմիայի ակադեմիկոս

Սմիռնով Ալեքսեյ Միխայիլի

- «Լեսբանկ» ԱԿԲ վարչության նախագահի տեղակալ

Տեր-Գրիգորյան Նորայր Գրիգորիի

- Ռուսաստանի հայերի միության վարչության անդամ, գեներալ-լեյտենանտ

Տումաշև Յուրի Անդրեյի

- Իրավապահ մարմինների աջակցության «Պետրովկա 38» բարեգործական հիմնադրամի տարածաշրջանային խորհրդի նախագահ, ներքին ծառայության գեներալ-մայոր

Շուրով Վիկտոր Սյրանիսլավի

- Աերոտիեզերական տեխնոլոգիաների և նորարարությունների ինստիտուտի տնօրեն, տնտեսական գիտությունների թեկնածու, Ռուսաստանի տիեզերագնացության ակադեմիայի ակադեմիկոս

Էլշիյան Ռադիկ Ավետիսի

- ՌԴ Նախագահի Գործերի կառավարչության Գլխավոր գիտահետազոտական հաշվիչ կենտրոնի տնօրեն, տեխնիկական գիտությունների թեկնածու

6. Հայաստանի հետ բարեկամության ու համագործակցության Ռուսաստանյան ընկերություն ընդունվելու մասին հարցաթերթիկի և դիմումի ն մ ու շ ը

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ Ի Կ

Ազգանուն _____ անուն _____ հայրանուն _____

Ծննդյան ամսաթիվը և տարին _____

Աշխատանքի վայրը, պաշտոնը _____

Կենսագրության հիմնական տվյալները _____

Հասցեն /ինդեկսը/ _____

Հեռախոսներ _____

E mail _____

Հայաստանի հետ բարեկամության և համագործակցության Ռուսաստանյան ընկերության վարչությանը

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ ինձ ընդունել Հայաստանի հետ բարեկամության և համագործակցության Ռուսաստանյան ընկերության անդամ Համաձայն եմ Ընկերության նպատակների ու խնդիրների հետ Ստանձնում եմ Կանոնադրությամբ իմ վրա դրված իրավունքներն ու պարտականությունները

Ստորագրություն _____ /ԱԱՀ լրիվ/ _____

« _____ » _____ 200 _____ թ

Հայաստանի հետ քարեկամության
և համագործակցության Ռուսաստանյան ընկերություն

ՀԱՅԱՍՏԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ...

200 հարց, 200 պատասխան
երկրի և ժողովրդի մասին բիբլիական
ժամանակներից մինչ մեր օրերը

Հրատարակման գաղափարը
Վ.Վ. Կրիվոպոլսկոյ, Վ.Օ. Օսիպով

Գրքի կառուցվածք
Վ.Օ. Օսիպով, Վ.Վ. Կրիվոպոլսկոյ, Մ.Վ. Ալեքսանդրով

Հարցերի և պատասխանների հեղինակներ՝
Մ.Վ. Ալեքսանդրով, Վ.Վ. Կրիվոպոլսկոյ, Վ.Օ. Օսիպով

Մասնակցությամբ
Ա.Մ. Գրիգորյանի, Գ. Յու. Մանուկյանի

Թարգմանիչ՝	Ս.Խ. Բաղրամյան
Նկարիչ՝	Ա.Բ. Կրասիլնիկով
Խմբագիր՝	Ա.Օ. Մկրտչյան
Էջադրումը՝	Գ.Վ. Հովհաննիսյան

Տպագրվել է «Ամարաս» տպարանում:
Երևան, Տերյան 44:
Հեռ. 56 04 79, 56 74 64

Отпечатано в типографии «Амарас»
Ереван, Теряна 44.
Тел. 56 04 79, 56 74 64
